

## Բացառիկ թողարկում նվիրված Արմեն Ավետիսյանի կալանավորման

### Ձերբակալություն

Կալանման ժամանակ Օրենքի Խախտումներ

Հայտարարություն

Արմեն Ավետիսյանի կալանման ժամանակագրություն

Արմեն Ավետիսյանի կալանման անդրադարձը ՁԼՄ-ներում

Արմեն Ավետիսյանի շահերի պաշտպան փաստաբան Մելանյա Առուստամյանի

պաշտպանական ճառը Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանում

Արմեն Ավետիսյանի պաշտպանական խոսքը 2005թ. մարտի 18-ի դատավարությանը՝ Կենտրոն

և Նորք-Մարաշ 1-ին ատյանի դատարանում

Մեղադրական եզրակացություն

Դատավճիռ

Օգտակարի դառնությունը

Նամակ ընկերոջս՝ Արմեն Վանիկի Ավետիսյանին

Ամն-Ի, Հի Պետական Եվ Ոչ Պետական Իշխանությունները, Հի-Ում Հրեական Պետական Եվ

Ոչ Պետական Համայնքները Եվ Արմեն Ավետիսյանը

Կոչ Հ Հ, ԼՂՀ Եվ Սփյուռքի Կազմակերպություններին, Ողջ Հայ Ժողովրդին

Այգաբացը Հաջորդում է Խավարին

Ինչո՞ւ կալանավորվեց Արմեն Ավետիսյանը

Թե Ինչպես Ենք Կորցնում Մեր Ընկերներին

Բաց Նամակ Հայաստանի Հանրապետության Նախագահ Ռոբերտ Քոչարյանին

Ազգայնականությանը՝ Ո՞՞

Մեր իսկ հայրենիքում մեզ չպե՛տք է ձերբակալեն

ԱՄՆ-ի հայերի դիմումը

Նարեկացու Արան (Արարիչն) ու Արին(Արմենը)

Վերաքննիչ բողոք

Դատավճիռ Կայացնելիս Խախտվել է.

Արմեն Ավետիսյանի Դատավարության Ժամանակ Դատավճիռը Կայացվել է.

Տեղեկություն Արմեն Ավետիսյանի Մասին

### Ձերբակալություն

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանում 2005թ. հունվարի 24-ին

կալանավորվել և 2005թ. մարտի 17-18-ին դատապարտվել է «Հայաստանի Հայ-Արիական

կուսակցություն» հասարակական-քաղաքական կազմակերպության նախագահ,

Հայ-Արիական Միաբանության առաջնորդ

ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԸ՝

«ազգամիջյան թշնամանք հրահրելու» մեղադրանքով՝ քր. դատ. օր. 226 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

### Կալանման ժամանակ Օրենքի Խախտումներ

ԽԱՄՏՎԵ՛Լ ԵՆ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին

կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի ա) ենթակետը և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի

5-րդ հոդվածի 2-րդ կետը. մեղադրանքի էությունը պարզ չէ և անհասկանալի է:

ԽԱՄՏՎԵ՛ Լ Է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի գ) ենթակետը,

քանի որ կալանավորման պահին առկա չի եղել Արմեն Ավետիսյանի կողմից իրավախախտում կատարած լինելու մասին հիմնավոր կասկած: 22.01.05.-ին նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին, որի պահանջը նա չի խախտել և 24.01.05.-ին նա ներկայացել է նախաքննությունն իրականացնող մարմնի պահանջով: Չի եղել նաև հիմնավոր անհրաժեշտություն Արմեն Ավետիսյանի կողմից նոր հանցագործության կատարումը կանխելու կամ փախուստը կանխելու նպատակով նրան ազատությունից զրկելու անհրաժեշտությունը:

ԽԱԽՏՎԵՆ Լ Է ՀՀ քր. դատ. օր. 202 հոդվածի 3-րդ կետը, ըստ որի, կալանքի որոշման մեջ պետք է հատակ նշվեր «մեղադրանքի ձևակերպումը՝ նշելով հանցագործության տեղը, ժամանակը, եղանակը և մյուս հանգամանքները, որքանով դրանք պարզված են գործի հանգամանքներում»:

ԽԱԽՏՎԵՆ Լ Է ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածը, որով սահմանվում է, որ յուրաքանչյուր ունի ազատ արտահայտվելու իրավունք: Այդ իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և սահմաններից անկախ: Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանափակում է այս ազատությունների իրականացումը: Սահմանափակումը պետք է լինի օրենքով նախատեսված, անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում, ի շահ պետական անվտանգության, հասարակական անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու նպատակով և պետք է լինի սուր սոցիալական կարիք: Բայց արդյո՞ք կա սուր սոցիալական կարիք Արմեն Ավետիսյանի խոսքի ազատությունը սահմանափակելու և ազատությունից զրկելու համար: Իհարկե չկար, հատկապես, երբ Արմեն Ավետիսյանը իր հրապարակումներում օգտագործել է արդեն իսկ հրապարակված գաղափարներ: Հատկապես, երբ նա այդ հրապարակումներում արել էր համապատասխան հղումներ աղբյուրներին:

## Հայտարարություն

Հայաստանի Հանրապետությունում անօրինականությունն ու քաղաքացիների իրավունքների ոտնահարումը դարձել են սովորական:

Ապագգային տարրերն ու նրանց արտասահմանյան տերերը բացահայտ պատերազմ են հայտարարել Հայ-Արիական միաբանությանը, ավելի որոշակի՝ ՀԱՄ-ի առաջնորդ Արմեն Ավետիսյանին: Նրա բացահայտումները ՀՀ իշխանության վերին էշելոններում համասեռականների, ջիոդա-մասոնական ամենատարբեր դավադրությունների, սոցքարտերի «կամավոր» պարտադրման ու նման ակտիվ և անզիջում գործունեությունն ուղղակի շարժման մեջ է դրել նժդեհյան բնութագրումամբ՝ ազգի տականքին: Վերջին հարձակման ազդանշանը ս.թ. հունվարի 19-ին «Ընդդեմ մարդկանց համարակալման» միավորման հրավիրած ասուլիսում մի քանի «լրագրողների» սադրանքի անհաջող փորձն էր: Մրան հետևեց «Առավոտ» օրաթերթի և մի քանի լրատվամիջոցների բոյկոտը՝ Ա. Ավետիսյանի միջոցառումներին ու տեղեկատվական շրջափակում կազմակերպելու կոչը:

Երկու օր չանցած՝ Ա. Ավետիսյանը հրավիրվեց Երևանի քաղաքային դատախազություն՝ հրեության նկատմամբ թշնամանք հրահրելու կեղծ ու պատիք ամբաստանությամբ հարուցված քրեական գործով: Նա ներկայացավ դատախազություն, բանավոր ու գրավոր հիմնավորեց նման մեղադրանքի անհիմն և շինծու լինելը:

Շաբաթ օրը՝ հունվարի 22-ի երեկոյան, բոլոր հիմքերը կային (նախատրամա-դրվածությունն այնպիսին էր), որ «քրեական գործը» կարճվելու է, սակայն Արմեն Ավետիսյանը հունվարի 24-ին նորից «հրավիրվեց» Երևան քաղաքի դատախազություն, որտեղ նրան կալանավորեցին. դատախազի սանկցիան ապահովելու, ապօրինությանը օրինականության ձև տալու համար փորձեցին նրան պարտադրել իրենց ներկայացրած փաստաբանին՝ Արմեն Ավետիսյանին զրկելով իրավապաշտպան ընտրելու իրավունքից:

Հայոց Հայրենիքի ազատ մնացած այս փոքրիկ հատվածում պատերազմ է հայտարարվել հայ ազգայնականությանը, իսկ գործիքն էլ ապագգային տականքն է, որն իր ներկայացուցիչներն ունի ՀՀ իշխանական տարբեր օղակներում: ՀՀ-ում առայժմ ոչ մի քր. գործ չի հարուցվել, երբ որոշ ապագգային թափթիվներ կոպտորեն պղծել են մեր ազգային արժեքներն ու սրբությունները. ավելին՝ անգամ քաջալերվել են՝ ամենատարբեր մակարդակներով: Իսկ Հայոց ազգային արժեքները պահպանողների ու պաշտպանների դեմ այսպիսի «գործ» է հարուցվում...

Հայտարարում ենք, որ հայ ազգայնականները վճռական հակահարված կտան նման բոլոր դավերին: Զգուշացնում ենք, որ ՀԱՄ-ի առաջնորդի նկատմամբ բռնության և քաղաքական հետապնդման շարունակումը դարձնելու ենք ունեց քաղաքական գործունեության կարապի երգը: «Տասը չափի՛ր, մեկ կտրի՛ր» սովորեցնում է հայկական իմաստուն ասացվածքը:

Հայ-Արիական միաբանության գերագույն խորհուրդ

Երևան, 24. 01. 2005

Ժամը 20:15

## **Արմեն Ավետիսյանի կալանման ժամանակագրություն**

19.01.2005թ.: Սոցիալական քարտերի պարտադրման դեմ «Ընդդեմ մարդկանց համարակալման» միավորման խորհրդի մամուլի ասուլիսի ավարտին 2-3 լրագրողներ, մասնավորաբար «Ազատություն» ռադիոկայանի աշխատակիցը, փորձեցին սադրանք կազմակերպել Ա. Ավետիսյանի նկատմամբ՝ համասեռամոլության հարցը ներկայացնելով որպես մարդու իրավունք: Սադրանքը չհաջողվեց:

20.01.2005թ.: Նախորդ օրվա սադրանքի ձախողումից կատաղած՝ 4-5 լրատվամիջոցներ, մասնավորաբար համասեռամոլների իրավունքներից բարբաջող «Առավոտ» օրաթերթն ու էլեկտրոնային «Տարեգիր» պարբերականը, հայտարարեցին, թե այսուհետև բոյկոտելու են Ա.Ավետիսյանի միջոցառումները:

21.01.2005թ.: Երևան քաղաքի դատախազությունը Ա.Ավետիսյանի նկատմամբ հարուցում է քրեական գործ՝ ՀՀ-ում ազգամիջյան թշնամանք հրահրելու կոչերով հանդես գալու անհիմն ամբաստանությամբ:

22.01.2005թ.: Ա.Ավետիսյանը հրավիրվում է Երևան քաղաքի դատախազություն՝ բացատրություններ տալու իր դեմ հարուցված գործով: Ա.Ավետիսյանը գրավոր հիմնավորում է իր նկատմամբ գործի սարքովի լինելը, սադրական բնույթը:

24.01.2005թ.: Ա.Ավետիսյանը նորից է հրավիրվում Երևան քաղաքի դատախազություն: «Վերնից» եկած հրահանգով՝ քննիչ Արամ Գրիգորյանը որոշում է միջնորդել դատարանի առջև՝ Ա.Ավետիսյանին կալանելու վճիռ կայացնելու: Հապճեպ, ձևական և օրենքի բազմաթիվ խախտումներով կայացած «Դատավարությունից» հետո՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշի դատարանը (դատավոր՝ Հրաչյա Հովհաննիսյան) որոշում է կալանքի վերցնել Ա.Ավետիսյանին: Նույն երեկո իսկ ՀՀ էլեկտրոնային ԶԼՄ-ների մեծ մասը հեռասփռում է ՀԱՄ-ի առաջնորդի կալանման լուրը: ՀԱՄ-ի գերագույն խորհուրդը Ժ. 20:15-ին

հրապարակում է հայտարարություն, որով քաղաքական գնահատական է տալիս իրավապահ մարմինների, «վերնների» և նրանց օտար պատվիրատուների սադրանքին:

25.01.2005թ.: Մեծ հուզում հայ ազգայնականների շրջանում՝ թե՛ ՀՀ-ում, թե՛ ԼՂՀ-ում և թե՛ արտերկրում, մասնավորաբար ԱՄՆ-ում և արաբական արևելքի գաղթօջախներում: ՀՀ տպագիր լրատվամիջոցները լայնորեն անդրադառնում են Ա.Ավետիսյանի կալանմանը. օտարներից սնվողները չեն թաքցնում իրենց ուրախությունը՝ մի անգամ ևս բացահայտելով իրենց հակազգային ուղղվածությունը: ՀՀ-ում և արտերկրում Հասարակական հիմունքներով մշակվում է հակառակորդների դեմ պայքարի ռազմավարությունը:

27.01.2005թ.: Երևան քաղաքի դատախազ Հրաչ Բադալյանին են փոխանցվում ԱԺ պատգամավորներ Վ.Դավալբաջյանի և Մանուկ Գասպարյանի միջնորդագրերը՝ Ա.Ավետիսյանի խափանման միջոց ընտրված կալանքը այլ միջոցով փոխարինելու մասին:

ՀԱՄ-ը ՀՀ վերաքննիչ դատարանին բողոքարկել է Ա. Ավետիսյանի կալանման մասին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ դատարանի 24.01.2005թ.-ի որոշումը:

04.02.2005թ.: ՀՀ վերաքննիչ դատարանը մերժեց Ա.Ավետիսյանի փաստաբանի միջնորդությունը՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ դատարանի 24.01.2005թ.-ի որոշումը վերանայելու մասին:

*(Դատապաշտպանի ստորագրությունը բացակայում է-խմբ.)*

## **Արմեն Ավետիսյանի կալանման անդրադարձը ՋԼՄ-ներում**

### **«Ազգ» օրաթերթ**

25.01.2005թ., էջ 1-2: Կարինե Դանիելյան. «Արմեն Ավետիսյանին ձերբակալել են հակահրեականության մեղադրանքով»: Լրագրողը հայտնում է, որ «խնդիրը բարձրացրել է Հայաստանի հրեական համայնքը, դատախազությունն էլ ընթացք է տվել փութաջանությանը»: Տպագրվել է Արմեն Ավետիսյանի՝ լրագրողին տված հեռախոսային մեկնաբանությունը, որ հայտնում է իր պատրաստակամությունը դատավարությանը և իր ուրախությունը, «որ պիտի հիմնավորեմ ջիոդա-մասոնական ուժերի համակարգված ճնշումները»: Լրագրողը այս քր. գործով որպես վկա դատախազություն կանչված պատմաբան ու լրագրող Գևորգ Յազըճյանի «մի ուշագրավ դիտողությունն» է հրապարակել, այն, որ քննիչներն ու այս գործով զբաղված իրավապահները «շատ տկար պատկերացումներ ունեն իրենց հանձնարարված գործի բովանդակության վերաբերյալ»:

27.01.2005թ., էջ 2: Կարինե Դանիելյան. «Արմեն Ավետիսյանի ձերբակալությունը կրքեր է բորբոքում»: Լրագրողն անդրադառնում է նախորդ օրը ՀԱՄ-ի կենտրոնում կայացած մամուլի ասուլիսին: Մեջբերվում են հատվածներ ՀԱՄ-ի գերագույն խորհրդի անդամ Մառ Մարտիրոսյանի ելույթից, մասնավորաբար նրա հաստատում, թե «Արմեն Ավետիսյանը քաղաքական կալանավոր է և նրա դեմ հարուցված մեղադրանքն արհեստածին է ու ապօրինի»: Ասուլիսում հայտարարվել է, թե ԱՄՆ-ից գանգել են «...և պատրաստակամություն հայտնել հենց վաղն իսկ գալ Հայաստան և մասնակցել ոչ միայն աջակցության, այլև դատավարության ընթացքին», իսկ լիբանանահայ համակիրները «առաջարկել են հայտնի փաստաբան Գասպար Տերտերյանի ծառայությունը»: Լրագրողը եզրահանգում է, որ «կատարվածը ծայրահեղացնելու հստակ միտումներ» կան:

27.01.2005թ., էջ 5: Ռուզան Պողոսյան. «Օսվենցիմի ազատագրումից 60 տարի անց»: Լրատվություն Օսվենցիմի համակենտրոնացման ճամբարի ու նրա ազատագրության 60-ամյակի առթիվ ՀՀ լեհական և հրեական համայնքների համատեղ կազմակերպած միջոցառման մասին: Հրեական համայնքի ղեկավար Ռիմա Վարժապետյանը լրագրողական «ցավով» հայտնել է, որ «հակահրեականության նշույթով անգամ երբեք այժմ չընկած Հայաստանում վերջին ժամանակներս գլուխ են բարձրացրել մարդիկ, ովքեր չգիտես ո՞ւմ և ի՞նչ շահերից ելնելով փորձում են հակահրեական տրամադրություններ առաջացնել, դրա համար օգտագործելով նաև եթերը»: Նա վրդովված ավելացնում է, որ «առանձին մարդիկ, հեռուստակայաններից մեկով ստահող լուրեր են տարածում» իր ղեկավարած համայնքի հասցեին՝ առանց անուն տալու՝ նկատի ունենալով ԱԼՄ հոլդինգի ու նույնանուն հեռուստատեսության նախագահ Տիգրան Կարապետյանին՝ նման արարքները որակելով «առնվազն խուլիգանություն»: «Նա համոզված է, որ «Արիական Միաբանությունն» իր թերթերով որևէ ազդեցություն չի ունենա հասարակության վրա, եթե հեռուստատեսությամբ չհնչեն հակահրեական տրամադրություն առաջացնող նման արտահայտություններ»: Լրագրողուհին իր հրապարակումն ավարտում է՝ նշելով. «Թե ներկա պահին ինչո՞ւ է ոմանց ձեռնտու Հայաստանը աշխարհին ներկայացնել որպես հակահրեական երկիր, ինչը դուրս է իրականությունից, առանձին ուսումնասիրության հարց է»:

28.01.2005թ., էջ 2: Կ.Գ. «Արմեն Ավետիսյանին ազատ արձակելու միջնորդություն են ներկայացրել Վիկտոր Դալլաքյանն ու Մանուկ Գասպարյանը»: Ներկայացվում է նախորդ օրը Երևանի դատախազ Հրաչ Բադալյանին՝ ԱԺ պատգամավորների ուղղած միջնորդագիրը Արմեն Ավետիսյանի խափանման միջոց ընտրված կալանքը փոխարինելու մասին: Նշվում են միջնորդագրերի հիմնավորումներից մի քանիսը՝

նախկինում դատված չլինելը, Արցախյան ազատամարտին մասնակցությունը և հատկապես իր խնամքի տակ եղող երեք անչափահաս երեխաների գոյությունը:

28.01.2005թ., էջ 2: Մաշտոց Վահե Լազարյան, «Ընթերցողը վրդովված է Արմեն Ավետիսյանի ձեռքբերված իրավունքները»: Այս հրապարակումը տպագրվել է նախորդ հրապարակման անմիջապես աջ կողմում: Ընթերցողը հայտնում է, որ, թեև անձնապես ծանոթ չէ Արմեն Ավետիսյանին, ու «Հայ արհիների» մասին էլ միայն թերթերից է լսել, այնուհանդերձ վրդովվել է նրա ձեռքբերված կապակցությամբ: Ընթերցողը նշում է, որ «Հայրենի» կառավարությունը պաշտպանում է «Եհովայի վկաների» նման աղանդներին և սիոնիստներին: Նա Հայաստանի հրեական համայնքին խորհուրդ է տալիս դիմել Իսրայելի կառավարությանը՝ Հայոց ցեղասպանությունը ճանաչելու համար: «Թող դատապարտեն Իսրայելում Հայագրի եկեղեցականների նկատմամբ գործադրված ստորացումները, որոնց իրենց կառավարությունը լուռ ու մունջ հավանություն է տալիս: Հետո նոր միայն պահանջներ ներկայացնեն ու դատեր բացեն»:

Մաշտոց Վահե Լազարյանը իր գորակցությունն է հայտնում Արմեն Ավետիսյանին՝ «հուսալով շուտով ստանալ նրա ազատ արձակման լուրը»:

29.01.2005թ., էջ 2: Կ. Դ. «Արմեն Ավետիսյանի խափանման միջոցը փոխելու միջնորդություն է ներկայացրել ՀՀ օմբուդսմենը- Կա՞րողք Հայաստանում հակահրեականություն»: Իր հետ կատարված հարցազրույցում ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Լարիսա Ալավերդյանը «շատ կոպիտ սխալ» է համարում «Հայաստանի հասարակությանը կամ պետական քաղաքականությանը հակասեմիտիզմ» վերագրելու փորձը: Լ.Ալավերդյանը պահանջում է իրավական գնահատական տալ Երուսաղեմում հայ բարձրաստիճան հոգևորականին անարգած հրեա կրոնամուլ ուսանողի արարքին ու պատիժ սահմանել նրան: Նա հայտարարում է, «Ես հիմա գրավոր հիմքեր չունեմ, թե ի՞նչ հիմունքներով է ձեռքբերվել Արմեն Ավետիսյանը, որովհետև կալանումը հստակ հիմնավորում պետք է ունենա»: Հարցազրույցից այն տպավորությունն է առաջանում, թե տիկ. Ալավերդյանը լռելյայն հասկանալ է տալիս, թե Արմեն Ավետիսյանի նկատմամբ կատարվածը բռնարարք է և սարքավի գործ:

2.02.2005թ., էջ 6: Հակոբ Չաքրյան. «Թուրք վերլուծաբանն Օսկանյանին մեղադրում է ՄԱԿ-ի ամբիոնից հրեաներին անարգելու մեջ: Անարգանքը հիմնավորելու համար Հայաստանում հակահրեականություն է հայտնաբերում»: Հայ թրքագետը անդրադառնում է Անկարայում գործող Եվրասիական ռազմավարական հետազոտությունների կենտրոնի կովկասյան բաժնի աշխատակից Հաթեմ Ջաբբարլըի՝ ՀՀ-ում հակահրեականության առկայության պնդում

(Դատապաշտպանի ստորագրությունը բացակայում է-խմբ.)

ներին, որոնց շարքում թուրք վերլուծաբանը նշում է նաև Ա.Ավետիսյանի անունը: Հ.Չաքրյանը հեզնում է Հայաստանի հրեական համայնքի ղեկավար Ռիմա Վարժապետյանին, որը «բժախնդի որոնումներ» է կատարում ՀՀ-ում հակահրեականություն հայտնաբերելու ուղղությամբ: Լրագրող-պատմաբանը գտնում է, որ «Հայաստանում խնդիրը հակահրեականությունը չէ, այլ որոշ ուժերի ցանկատեսությամբ ստեղծվող հակահրեականության պատրանքի հիմնավորումը» և ավելացնում. «Քանի որ պատրանքը խորթ է պետական քաղաքականության սկզբունքին, ուստի Հայաստանին վերագրվող հակահրեականությունը պետք է համարել ցանկատեսության դրսևորում»:

3.02.2005թ., էջ 1: Կ[արինե] Դ[անիելյան]. «Հայ արիական միաբանությունը» դիմել է վերաքննիչ դատարան: Հայտնվում է, թե ավագ քննիչ Արամ Գրիգորյանը մերժել է Ա.Ավետիսյանի խափանման միջոցը փոխելու մասին ԱԺ երկու պատգամավորների միջնորդությունը, և թե նույն հարցը քննարկվելու է փետրվարի 3-ին Երևան քաղաքի դատախազությունում: Տեղեկություն է տրվում նաև առաջին ատյանի դատարանի վճիռը բողոքարկելու ՀԱՄ-ի դիմումի մասին: Հայտնվում է, թե ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Լարիսա Ալավերդյանի դիմումը ՀՀ նախագահին՝ Ա.Ավետիսյանի խափանման միջոցը փոխելու մասին՝ դեռևս պատասխանի չի արժանացել:

4.02.2005թ., էջ 3: «Կալիֆոռնիա կուրիերի» խմբագիր Հարութ Սասունյան., «Ամերիկա-հրեական խմբակցությունը գործում է ի նպաստ Թուրքիայի ԵՄ անդամակցության»: Լուս Անջելեսում լույս տեսնող անգլերեն հայկական թերթի խմբագիրը, ըստ երևույթին, կույ է տալիս հայ ազգայնականների դեմ նրա թշնամիների առաջ նետած խայծը՝ գրելով. «...Իսրայելցիներն ու Ամերիկայում ապրող հրեաները չպետք է

բոլոր հայերին մեղադրեն հակահրեականության մեջ մի քանի անհատների անպատասխանատու հայտարարությունների պատճառով:

10.02.2005թ., էջ 3: Թամարա Մակարյան. «Ասուլիս-Դժգոհ են և՛ Արմեն Ավետիսյանից, և՛ իշխանություններից»: Լրատվություն նախորդ օրը «Նոր Հայաստան» հասարակական կազմակերպության կայացրած մամուլի ասուլիսի և տարածած հայտարարության մասին: Ըստ լրագրողուհու՝ այս կազմակերպությունը «չի պաշտպանում Արմեն Ավետիսյանին, սակայն դժգոհ է, որ նրա դեմ քրեական գործ է հարուցվել»: Հայտնվում է, որ այս կազմակերպության նախագահ Էլեոնորա Մանանդյանի կարծիքով՝ Ա.Ավետիսյանը «խղճի բանտարկյալ» է, որը ձերբակալվել է «այլակարծիք լինելու պատճառով»: Մանանդյանը եղածը վրեժ է համարում: Է. Մանանդյանը զարմանք է հայտնում, թե ինչու ՀՀ իշխանությունները նույն կերպ չեն վարվում այլոց հետ, օրինակ՝ «հակառուսական հիստերիա» բարձրացրած լրատվամիջոցների հետ:

### «Առավոտ» օրաթերթ

25.01.2005թ., էջ 1: Անստորագիր. «Մուրհանդակ-Չարի վերջը»: Դեղին մամուլի այս կարկառուն ներկայացուցիչ թերթը Արմեն Ավետիսյանին որակում է «ումն Ա.Ա.» և տեղեկացնում քրեական գործի ու նրա զարգացումների մասին՝ չթաքցնելով իր ուրախությունը այս փաստերի առթիվ:

26.01.2005թ., էջ 1: Անստորագիր, ««Նոր ժամանակները» դատապարտում է»: Շատ հակիրճ ներկայացվում է Արմեն Ավետիսյանի կալանման փաստի առթիվ «Նոր ժամանակներ» կուսակցության գնահատականը՝ այդ կալանումը քաղաքական պատվեր է:

26.01.2005թ., էջ 1: Անստորագիր [գլխ. խմբագիր՝ Արամ Աբրահամյան]. «Անհանդուրժողականության 95 տարի»: Արմեն Ավետիսյանին որակելով «Արվամոլության գլխավոր փորձագետ» և չթաքցնելով իր հրճվանքը նրա նկատմամբ քր.գործի հարուցման առթիվ՝ կեղտագրի հեղինակը այնուհետև շարունակում է իր գաղափարական անբարոյականությունը՝ հավասար ու «համատեղելի» հայտարարելով հայերին և թուրքերին, ու հանդես է գալիս արվամոլների, աղանդավորների ու նման ախտավորների պաշտպանի պատմուճանով՝ նման ազգակործան և հակաստվածային երևույթները հայտարարելով մարդու իրավունք...

26.01.2005թ., էջ: Նաիրա Մամիկոնյան. «Օրենքը հավասարապես կիրառել-Այսպիսի կոչ արեց ԱԼՄ հոլդինգի նախագահ Տիգրան Կարապետյանը»: Տ.Կարապետյանը, որի անունն էլ որպես ՀՀ-ում հակահրեականության քարոզիչ ընդգրկվել էր ԱՄՆ պետքարտուղարության «սև ցուցակում», հայտարարում է, որ ինքը մարդկանց գնահատում է ոչ թե ըստ ազգային, այլ անհատական հատկանիշները: Նա հայտարարում է, որ «երիտթուրքերը բոլորն ունեցել են հրեական ծագում»: Նա Արմեն Ավետիսյանի ձերբակալումը «խիստ» է համարում և գտնում, որ ավելի ճիշտ կլիներ նրան բաց թողնել չբացակայելու ստորագրության դիմաց: Նա հարց է տալիս. «Եթե նա օրենք է խախտել, ինչու՞ չէին կարող դա անել մեկ տարի առաջ: Նա այդ նույն բաներն ասել էր նաև մեկ տարի առաջ»: Նա կասկած է հայտնում, որ կատարվածը «գուցե պատվեր է շահագրգիռ անձանց կողմից»՝ շահագրգիռների մեջ հավասարապես տեսնելով թե՛ արվամոլներին և թե՛ հրեաներին: Տ.Կարապետյանը Արմեն Ավետիսյանի մոտեցումները որակում է «ծայրահեղ», բայց և իր դժգոհությունը հայտնում, որ Երուսաղեմում խաչի վրա թքող հրեա մոլեռանդը ազատության մեջ է և չի ընդունում Արմեն Ավետիսյանի հանցագործ լինելու՝ Երևան քաղաքի դատախազության որակումը: Նա հարց է տալիս. «Ինչու՞ աղբբեջանցուն, թուրքին ամեն ինչ կարող ենք ասել և չպատժվել, իսկ հրեաների մասին նույնն ասելիս պատժվում ենք»: Նման համեմատությամբ՝ Տ.Կարապետյանը հրեաներին, ըստ էության, դատում է հայոց թշնամիների շարքը: Տ.Կարապետյանը չի բացառում, որ հաջորդ կալանվածը ինքը կարող է լինել: «Չի կարելի քաղաքական գործչին ձերբակալել», - պահանջում է Տ.Կարապետյանը և Արմեն Ավետիսյանին համարում «քաղբանտարկյալ»:

28.01.2005թ., էջ 1: Անստորագիր. «Մուրհանդակ-Քսենոֆոբիայի (այլատյացություն) ևս մի պաշտ-պան»: Շատ հակիրճ ներկայացվում է «Հայրենիք ու պատիվ» կուսակցության հայտարարությունը, որում Արմեն Ավետիսյանի կալանավորումը որակվում է «շինծու և պարտադրված ՀՀ բարձրագույն իշխանության կողմից՝ որոշ բարձրաստիճան անձանց արվամոլ անվանելու և սոցիալական քարտերի դեմ պայքարի համար»:

29.01.2005թ., էջ 3: Սեփական լրագրող. «Արիական հացադուլ»: Լրատվություն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչների՝ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ

այցելության, Արմեն Ավետիսյանին հանդիպելու և ՀՀ օմբուդսմենի՝ ՀՀ գլխավոր դատախազին ուղղված դիմումի մասին՝ Արմեն Ավետիսյանի խափանման միջոցը փոխելու վերաբերյալ:

3.01.2005թ., էջ 1: Անստորագիր. «Սուրհանդակ-Գալանավորման անհրաժեշտություն չկա»: Հակիրճ տեղեկատվություն այն մասին, թե իրավապաշտպան Վարդան աչատրյանը Արմեն Ավետիսյանի նկատմամբ հարուցված քր. գործը որակում է «պատվիրված» և սխալ է համարում նրա համար ընտրված խափանման միջոցը:

1.02.2005թ., էջ 2: Արամ Աբրահամյան. «Chat-ի մակարդակով»: Թերթի գլխավոր խմբագիրը շարունակում է իր մաղձը թափել Ա.Ավետիսյանի վրա՝ անթաքույց հրճվանք ապրելով ՀԱՄ-ի առաջնորդի կալանման ապօրինության առթիվ: Նա կարծում է, որ քր. գործի հարուցումը ճիշտ էր «արվամոլի մասնագետի» նկատմամբ՝ «ամենահիմար բան» համարելով նրանից «քաղաքական դեմք սարքելը»: Ա.Ավետիսյանին Ա.Աբրահամյանը որակում է «սուբյեկտ», «անձնավորություն», «մարժինալ «գործիչ»» և այլն: Նա համոզված է, որ «չկան «չարիքի կենտրոններ», որտեղ հայ ժողովրդի դեմ դավեր են նյութվում»:

3.02.2005թ., էջ 5: Նաիրա Մամիկոնյան. ««Քաղաքական հետապնդում չկա, կա անձնական շահագրգռություն»,-անդրադառնալով Արմեն Ավետիսյանի դեմ հարուցված քր. գործին՝ համոզմունք հայտնեց իրավապաշտպան Վարդան Հարությունյանը»: Վ. Խաչատրյանը հայտարարում է, որ մարդկանց գաղափարներ՝ ֆաշիզմ, հակասեմիտիզմ ևն. տարածողը չի կարող քաղ. կալանավոր լինել: Գալանքը Արմեն Ավետիսյանի համար գտնելով «խիստ միջոց»՝ նա ավելի ճիշտ է գտնում չբացակայելու ստորագրությամբ խափանման միջոցը: Այսուհանդերձ, նա ճիշտ է համարում քր. գործի հարուցումը Արմեն Ավետիսյանի նկատմամբ՝ նա ավելացնում է, որ նման հայտարարությունները «անթույլատրելի» են: Հայանուն իրավապաշտպանը հավասարապես անթույլատրելի է հայտարարում հակահրեական և հակաթրքական հայտարարությունները: «Արդեն մոտ հազար տարի մեր տարածաշրջանում համատեղ ապրող ժողովրդի նկատմամբ ասում են, որ մենք գենետիկորեն անհամատեղելի ենք: Դրանից ավելի մեծ ազգային խտրականություն քարոզող հայտարարություն երևի թե չի կարող լինել», - հայտարարում է Թուրքերի հայագիր (Շ) այս իրավապաշտպանը: Վ. Խաչատրյանը լռելյայն հասկանալ է տալիս, թե Արմեն Ավետիսյանի նկատմամբ քր. գործի հարուցումը եղել է արվամոլներից բացահայտելու Արմեն Ավետիսյանի հետևողական գործունեության պատճառով, և «տվյալ դեպքում, կոնկրետ հարց են լուծում»: Խաչատրյանը Արմեն Ավետիսյանի մյուս հայտարարությունը ևս համարում է ոչ քաղաքական՝ դրանք հայտարարելով «մարդկանց անձնական կյանքին միջամտության դրսևորումներ», ու եզրակացնում, թե Արմեն Ավետիսյանի հարցում «քաղաքական հետապնդում չկա, կա անձնական շահագրգռություն»:

### **«Հայոց Աշխարհ» օրաթերթ**

25.01.2005թ., էջ 1: Մեփ. լր. «Գալանավորվել է Արմեն Ավետիսյանը»: Լրատվություն Արմեն Ավետիսյանի հարցաքննության և նրա նկատմամբ քր. գործի հարուցման մասին: Թերթը հիշեցնում է, որ Արմեն Ավետիսյանը «մի շարք հայտարարություններ է արել հրեական համայնքի հասցեին»: Թերթը իր հրապարակման կենտրոնում տպագրել է մի կոլաժ, ուր Արմեն Ավետիսյանը երևում է բանտում նստած՝ «Քրեական օրենսգիրք» անունով մի հրատարակություն ընթերցելիս...

26.01.2005թ., էջ 1-2: Գագիկ Մկրտչյան. ««Նոր Ժամանակներ» ողբը տեղին չի»: Թերթի գլխավոր խմբագիրը հեզնում է «Նոր Ժամանակներ» կուսակցությանը՝ վերջինիս՝ ի նպաստ Արմեն Ավետիսյանի, հայտարարության առթիվ: ՀՀ-ում բանտային սկզբունքով հասարակության առկայության մասին խոսողներին Գ.Մկրտչյանը առաջարկում է «առաջնորդվել գողական օրենքներով»՝ ավելացնելով. «Եթե ինչ-որ մեկը մեղադրում է մեկ ուրիշին արվամոլության մեջ, ապա պարտավոր է ապացույցներ ներկայացնել: Ճիշտ է: Եթե ապացույցները ներկայացված են, ապա փառք ու պատիվ քաջարի մերկացնողին, բանտախցում նրան սկսում են հարգել, դե, իսկ արվամոլներին սպասում է համապատասխան ճակատագիր: Գերազանց և արդարացի օրենք»:

26.01.2005թ., էջ 2: Մեփ.լր. «Ի վերջո, ուշադրություն դարձրին»: Թերթը ընդարձակ մեջբերում է կատարում ՀՀ գլխավոր դատախազության հասարակական կապերի և լրատվության բաժնի նախորդ օրը հրապարակած հաղորդագրությունից Արմեն Ավետիսյանի նկատմամբ քր. գործ հարուցելու մասին: Թերթը հայտնում է, որ «միանգամայն հավաստի աղբյուրներից» իրեն հայտնի է դարձել, «որ Հայաստանի հրեա համայնքը կոնկրետ Արմեն Ավետիսյանի առնչությամբ իրավապահ մարմիններին, մասնավորապես դատախազությանը չի դիմել: Ասել է թե՛ քրեական գործը հարուցվել է իրավապահ մարմինների

նախաձեռնությամբ՝ հիմնվելով օրենքի խախտման փաստի վրա»: Նշելով, թե շատերը համոզված են, որ քր. գործը հարուցվել է ոչ թե Արմեն Ավետիսյանի՝ իբր հակահրեական ելույթների առթիվ, այլ «երկնագույն» պաշտոնյաներին բացահայտելու նրա հայտարարությունների առթիվ, թերթը հայտնում է, որ Արմեն Ավետիսյանի «ազգամիջյան բնույթի էքսցենտրիկ հայտարարությունները դեռ անցյալ տարվա աշնանը արժանացել են Հայաստանի պատկան մարմինների, դիցուք, ազգային անվտանգության ծառայության որոշակի ուշադրությանը»: Հրապարակման կենտրոնում տպագրվել է նախորդ օրվա համարի կոլաժը:

29.01.2005թ., էջ 5: Վրեժ Ահարոնյան. «Ձուգահեռներ Մեր դոկտոր Հայդերը»: Աշխատակիցը հայտնում է, թե Նուբարաշենի բանտում Ա.Ավետիսյանի հացադուլի մասին լուրերը իրեն հիշեցրել են 1986թ. աշնանը ԱՄՆ-ում հացադուլ հայտարարած չաղիկ գիտնական Չարլզ Հայդերին, որը իբր հանուն խաղաղության հացադուլ հայտարարելով նպատակ է ունեցել ազատվել ավելորդ քաշից, միաժամանակ հայտնվել հասարակական ուշադրության կենտրոնում: Տպագրվել է հացադուլավոր Չ.Հայդերի լուսանկարը:

29.01.2005թ., էջ 5: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի տեղեկատվության բաժին. «Փոխել խափանման միջոցը»: Լրատվություն քրեական հանցագործներ չունեցող բանտախուց տեղափոխվելու Ա.Ավետիսյանի պահանջի բավարարման մասին, նաև այն մասին, թե Լարիսա Ալավերդյանը դիմել է ՀՀ գլխավոր դատախազին՝ Ա.Ավետիսյանի խափանման միջոց ընտրված կալանքը փոխելու համար:

29.01.2005թ., էջ 7: Ժյուլիեն Չիբուխյան (թերթի գլխավոր խմբագիր Գագիկ Մկրտչյան). «Այդ սարսափելի հրեաներն ու մատնները»: Լրագրողը Երևան քաղաքի դատախազ Հրայր Բաղայանին ուղղված նամակի ժանրով հեզնում է Ա.Ավետիսյանի և այլոց հիմնավորված մտահոգությունները հայոց նկատմամբ հրեաների ու մատնների անբարյացակամ գործունեության վերաբերյալ:

4.02.2005թ., էջ 6: Ս.Հարությունյան. «Այն, ինչ կարելի է Ձևսին, չի կարելի եզին»: Ստորագրողը ճիշտ է համարում և «ողջունում» Ա.Ավետիսյանի նկատմամբ հարուցված գործը՝ նրա հայտարարությունները համարելով «դատապարտելի»: Նա Ա.Ավետիսյանին մեղադրում է ՀՀ և ԱՄՆ պետքարտուղարության «սև ցուցակներում» հայտնվելու համար աշխատուժ լինելու մեղադրանքով: Այսուհանդերձ, նա համաձայն է «Ա.Ավետիսյանի կուսակիցների փաստարկներին, թե կալանքը որպես խափանման միջոց տվյալ դեպքում արդարացված չէր»: Ստորագրողը դժգոհում է, թե ինչու է ՀՀ ընդդիմության գործիչների նկատմամբ քրեական գործեր չեն հարուցվում՝ նրանց ծայրահեղական, բռնության կոչով հայտարարությունների համար:

5.02.2005թ., էջ 5: Կիմա Եղիազարյան. «Վերաքննիչ բողոքը մերժվեց - Արիների առաջնորդի կալանքը կշարունակվի»: Լրատվության նախորդ օրը վերաքննիչ դատարանի կայացրած որոշման մասին: Հայտնվում է, որ Ա.Ավետիսյանի համախոհները լուր բողոքի ակցիա էին կազմակերպել դատարանի առջև, և մեջբերվում է ցուցանակների բովանդակությունը՝ «Ազատություն Արմեն Ավետիսյանին», «Արմենին դատողը պատասխան կտա ազգի դատին»: Լայնորեն ներկայացվում են Ա.Ավետիսյանի պաշտպան փաստաբան Մելանյա Առուստամյանի գնահատականները: Նա հայտնում է, թե Ա.Ավետիսյանի նկատմամբ ճնշման փորձ է եղել բանտում. «...նրան փորձում էին տեղափոխել համասեռամուլների խուց, բայց կանխվեց մեր ակտիվ միջամտության, մարդու իրավունքների պաշտպանի, բազմաթիվ իրավապաշտպան կազմակերպությունների ներկայացուցիչների այցերի շնորհիվ»: Նա հայտնել է նաև, որ վճռաբեկ դատարանում բողոքարկելու է ստորադաս դատական ատյանների որոշումները:

### **«Հայկական Ժամանակ» օրաթերթ**

25.01.2005թ., էջ 1: Անստորագիր. «Համատեղ պայքարի» առաջին պտուղը»: Թերթը Արմեն Ավետիսյանի կալանումը ներկայացնում է որպես ՀՀ նախորդ օրվա դեպքերի ամենակենտրոնական լուրը՝ տպագրելով նաև Արմեն Ավետիսյանի լուսանկարը: Թերթը մատնանշում է, որ Արմեն Ավետիսյանի կալանումը կատարվեց «Հոլոքոստի գոհերի հիշատակի օրվա նախօրյակին: Մա, թերևս, ՀՀ իշխանությունների հարգանքի տուրքն է հրեական ցեղասպանության գոհերին և արձագանք՝ ԱՄՆ պետդեպարտամենտի հայտնի հայտարարությանը, որում Արմեն Ավետիսյանի անունը նշված էր որպես ազգային խտրականության քարոզիչ: Այսուհանդերձ, չի բացառվում, որ Արմեն Ավետիսյանը իրականում պատժվում է բարձրաստիճան գեյերի դեմ հարուցած իր սկանդալային արշավի համար»:

26.01.2005թ., էջ 1: Անստորագիր. «Քաղաքական պատվեր է»: Մեջբերումներ Արմեն Ավետիսյանի



կալանման մասին ՀՀ դատախազության և «Նոր Ժամանակներ» կուսակցության տարածած հայտարարություններից:

26.01.2005թ., էջ 1: Ավետիս Բաբաջանյան. «Բռնոցի - բա Կարապետովի չը - Հնայակ Հովհաննիսյանը «նավոդկա» է տալիս»: Լրագրողը ներկայացնում է Արմեն Ավետիսյանի կալանման փաստի առթիվ ԱԼՍ հոլդինգի և ժողովրդական կուսակցության նախագահ Տիգրան Կարապետյանի և նրա ռիւերիմ հակառակորդ, ԱԺ պատգամավոր Հմ.այակ Հովհաննիսյանի մտորումները: Տրգրան Կարապետյանը մասնավորաբար հայտարարում է. «...Օրենքի խախտումը պետք չէ հակադրել ազգային արժանապատվությանը», «...եթե ցանկացած անհատ, համայնք կամ խմբավորում կփորձի մեր ազգի դեմ որևէ անարժան գործողություն իրականացնել, ապա մենք դրան կպատասխանենք մեր ամբողջ ներուժով»: Նա Արմեն Ավետիսյանի կալանումը «պատվեր» է հայտարարում: Իր հերթին Հմ.. Հովհաննիսյանը «ավելի ճիշտ է գտնում նաև Տ.Կարապետյանի նկատմամբ քրեական գործի հարուցումը նույն մեղադրանքով, այլապես ինքը կեզրակացնի, որ Արմեն Ավետիսյանն ընդամենը քավության նոխազ է»: Նա ևս չի բացառում, որ Արմեն Ավետիսյանին կարող է ձերբակալված լինեն համասեռամուլ բարձրաստիճանների բացահայտելու հայտարարությունների համար: Որպես հրապարակման հետգրություն տպագրվել է. «Ի դեպ, Հայաստանում հրեական համայնքի ղեկավար Ռիմա Վարժապետյանը երեկ մեզ հետ հեռախոսային գրույցում ասաց, որ թեև իրենք ողջունում են Արմեն Ավետիսյանի ձերբակալությունը՝ համարելով, որ դա բխում է հայ հասարակության և պետության շահերից (՞, -խմբ.), և վաղուց պետք է արվեր, սակայն ավելացրեց, որ իրենք չեն դիմել դատախազություն կամ ոստիկանություն, և Արմեն Ավետիսյանի ձերբակալությունը որևէ կապ չունի իրենց կազմակերպության հետ»:

27.01.2005թ., էջ 1: Անստորագիր. «Օրակարգ-Դատապարտում են»: Լրատվություն Արմեն Ավետիսյանի կալանման առթիվ ՀՀ ԱԺ «Հանրապետական» խմբակցության ղեկավար Գալուստ Սահակյանի և ԱԺ պատգամավոր Էմմա Խուդաբաշյանի գնահատականների մասին: Մեջբերվում է Գ.Սահակյանի խոսքը. «Մեր մենթալիտետին բացարձակ անհարիր է ազգամիջյան և ռասայական պառակտումներ հրահրելը, ու ես վստահ եմ, որ նման խնդիր ու նպատակ չի ունեցել նաև Արմեն Ավետիսյանը: Ուստի նրան ազատությունից զրկելը ես համարում եմ անընդունելի քայլ»: Նա հիշեցնում է հայ հոգևորականի վրա թքած հրեա երիտասարդի անպատիժ մնալն Բսրայելում: Իսկ Է. Խուդաբաշյանը գտնում է, որ «Արմեն Ավետիսյանի հանդեպ իրականացվում է քաղաքական հաշվեհարդար՝ բոլորովին այլ բանի համար, իսկ հրեական հարցը պատրվակ է»:

27.01.2005թ., էջ 1: Ավետիս Բաբաջանյան. «Արձագանքներ-Պաշտպանում են Արմեն Ավետիսյանին»: Ընդարձակ լրատվություն նախորդ օրը ՀԱՄ-ի գրասենյակում կայացած մամուլի ասուլիսի մասին: Մեջբերվում են լայն հատվածներ ասուլիսում ՀԱՄ Գ անդամ Մառ Մարտիրոսյանի ելույթից, մասնավորաբար նրա հիմնավորված հաստատումը, թե Արմեն Ավետիսյանը ամենևին էլ նպատակ չի ունեցել վիրավորելու որևէ ազգի ազգային արժանապատվությունը, այլ ընդամենը փորձել է պաշտպանել հայ ազգի իրավունքները իր պատմական հայրենիքում: Մ.Մարտիրոսյանը ավելացնում է. «Արմեն Ավետիսյանը քրեական հանցագործ չէ, նա քաղկալանավոր է, քաղաքական հետապնդումների գոհ: Նա հետապնդվում է իշխանության բարձրագույն օղակներում ջիոդամատններին և արվամուլներին բացահայտելու, իշխանությունների կողմից սոցիալական քարտերի պարտադրանքի դեմ պայքարելու- համար»: Լրագրողը եզրակացնում է, որ «պայքարը հանիրավի կալանավորված Արմեն Ավետիսյանին ազատ արձակելու համար՝ կարող է դառնալ 2005 թվականի հիմնական քաղաքական իրադարձությունը...»:

28.01.2005թ., էջ 1: Անստորագիր. «Հացադուլ է հայտարարել»: Լրատվության նախորդ օրը ՀՀ ԱԺ երկու պատգամավորների միջնորդության, Արմեն Ավետիսյանի պաշտպանության հանձնախմբի ստեղծման ու նրա գործունեության ծրագրի մասին: Հղում կատարելով Մառ Մարտիրոսյանին՝ հայտնվում է, թե Նուբարաշենի մեկուսարանում Արմեն Ավետիսյանը ճնշումների է ենթարկվել, որի պատճառով էլ վերջինս հացադուլ է հայտարարել:

29.01.2005թ., էջ 2: Ա[րմինե] Օ[հանյան]. «Հաշվեհարդար- Հացադուլը դադարեցվել է»: Արմեն Ավետիսյանի պաշտպան փաստաբան Մելանյա Առուստամյանը լրագրողին հայտնել է, թե իր պաշտպանյալի նկատմամբ «փորձել են կիրառել անթույլատրելի միջոցներ, մասնավորապես՝ նրա դեմ են տրամադրել մեկուսարանի քրեականներին, որոնք փորձել են, այսպես ասած, «կոտրել» նրան»: Փաստաբանը տեղեկացնում է նաև իր հետագա անելիք քայլերի մասին:

5.02.2005թ., էջ 1: Անստորագիր. «Մերժեցին»: Շատ հակիրճ տեղեկատվություն նախորդ օրը կայացած

վերաքննիչ դատարանի որոշման մասին:

5.02.2005թ., էջ 4: Արմինե Օհանյան. «Ուոքի՛, դատարանն է գալիս-Ուրբաթօրյա դատական խճանկար»: Նախորդ օրվա աղմկահարույց դատական նիստերի շարքում ընդարձակ բաժին է հատկացվել վերաքննիչ դատարանում Արմեն Ավետիսյանի կալանման մասին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների դատարանի վճռի բողոքարկման մասին՝ «Արմեն Ավետիսյանը կնստի» ենթավերնագրի տակ: Փաստաբան Մ. Առուստամյանը անհիմն է հայտարարում կալանման «հիմնավորումը»՝ «Եթե խափանման միջոցը կալանքը չընտրենք, կխուսափի նախաքննությունից»: Նա ավելացնում է, որ իր պաշտպանյալի նկատմամբ ճնշումները շարունակվում են մեկուսարանում, որը հրահրում է վերջինիս ղեկավարությունը և հայտնում, որ «այս օրերին բազմաթիվ հասարակական կազմակերպություններ, անհատ անձինք հետաքրքրվել են Արմեն Ավետիսյանի ճակատագրով և նրա օգտին ստորագրահավաք են պատրաստում»:

10.02.2005թ., էջ 1: Անստորագիր. «Միջնորդել են»: Հակիրճ լրատվություն այն մասին, թե ՀՀ ԱԾ «Արդարություն» խմբակցության հինգ պատգամավորներ միջնորդել են ՀՀ Գլխավոր դատախազ Ադվան Հովսեփյանին՝ ՀԱՄ առաջնորդ Արմեն Ավետիսյանի խափանման միջոցը փոխելու համար:

10.02.2005թ., էջ 4: Արման Գալոյան. «Արի գոհը- Փաստորեն՝ երկնագույն վրեժ է»: Հայտնվում է, որ «Նոր Հայաստան» հասարակական կազմակերպությունը հանդես է եկել հայտարարությամբ՝ ի պաշտպանություն Ա. Ավետիսյանի: Կազմակերպության նախագահ Էլենոնրա Մանանդյանի համոզմամբ՝ Ա. Ավետիսյանը «խղճի բանտարկյալ է, որը ձերբակալվել է այլախոհության համար»: Նա եզրակացրել է, որ «Ա. Ավետիսյանի դեմ քրեական գործ հարուցելու հիմքում իրականում ընկած են համասեռամոլ պաշտոնյաների մասին հայտարարությունները, և նրանից պարզապես վրեժ են լուծում դրա համար»: Ըստ լրագրողի՝ «Մանանդյանը կարծում է, որ ակզբում Ավետիսյանը կեղտոտ քաղաքական խաղում պարզապես խաղացող էր, հետո դարձավ խաղաքարտ, վերջում էլ՝ պարզապես զոհ»:

#### **«Նովոյե վրեյա», ռուսերեն, շաբաթը երեք անգամ**

Հմ. 1178, 25.01.2005թ., էջ 5: Սեփ. լրատ. «Ձերբակալվել է գլխավոր արիականը»: Թերթն անթաքույց գոհունակությամբ հաղորդում է Արմեն Ավետիսյանի կալանման լուրը: Ավելին. խեղաթյուրելով փաստերը՝ պարբերականը դուրս է գալիս լրագրական բարոյականության բոլոր սահմաններից՝ Արմեն Ավետիսյանին վերագրելով «ավանդական դարձած հակասեմական բնույթի հայտարարություններ»: Թերթը միննույն հարթության վրա է դնում Արմեն Ավետիսյանի կալանավորումից օգուտ քաղողներին, որոնք, ըստ իր կարծիքի, հրեաներն են, եզդիները, համասեռականները, մասոնները և ...լրագրողները, որոնց Արմեն Ավետիսյանը իբր վերջերս անվանել է «սեռական այլանդակներ»: Թերթը հեզնում է նաև ՀԱՄ-ի առաջնորդի գաղափարակիցներին՝ գրելով. «...նույն երեկո Մամուլի տան հարկերով շրջում էին Արմեն Ավետիսյանի ամենից հավատարիմ համախոհները և թերթերի ու շաղկապայանը հանձնում «Հայ արիական միաբանության» հայտարարությունը»: Թերթը հեզնում է նաև հայտարարության բովանդակությունը. թերթը հայտնում է, որ «արիների առաջնորդի համախոհները նրան չեն թողնի փորձանքի մեջ»:

#### **«Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ**

25.01.2005թ., էջ 3: «Նոյյան տապան». «Արմեն Ավետիսյանի հայտարարությունների կապակցությամբ դատախազությունը նյութեր է նախապատրաստում»: «ՆՏ» լրատու-գործակալությունը հղում է կատարում «Ազատություն» ռադիոկայանին, որին Հայաստանի հրեական համայնքի ղեկավար Ռիմա Վարժապետյանը հայտնել է, թե իր համայնքը «չի դիմել իրավապահ մարմիններին՝ համարելով, որ նման արտահայտություններն արդեն իսկ պետք է հիմք տային իրավապահներին քրեական գործ հարուցելու դրանց հեղինակի դեմ»: Հայտնելով Արմեն Ավետիսյանի նկատմամբ քր. գործի հարուցման մասին՝ «նտ»-ն իր լրատվությունն ավարտում է՝ արձանագրելով, որ, «այլ աղբյուրների համաձայն, Հայ արիական միաբանությունը առաջնորդն ուղղակի հրավիրվել է դատախազություն՝ պարզաբանումներ տալու»:

11.02.2005թ., էջ 1-3: «Աննա Մովսիսյան». «Դիտարկում: Հայ Գլխավոր Արիի «արիաները»: Ձայնը երգելի՞ս է բացվում»: Նույն օրը պետական երկու պաշտոնաթերթերում լույս տեսած կեղտագրերից առաջինն է այս հրապարակումը: Հեղինակի անունը չակերտների մեջ ենք դրել մենք՝ «Հայ-Արիների» խմբագրությունը, պարզապես (որովհետև) այդպիսի անունով հեղինակ ...չկա: Բավարար չէ, որ նա ու իր պատվիրատուները ՀՀ իշխանական բուրգի արվամուկների շրջանում զգվելի բառապաշար են գործածում

ՀԱՄ-ի առաջնորդի հասցեին, այլև բացահայտորեն խեղաթուրում են ակնհայտ փաստերը ավելի՛ բացահայտելով իրենց ստոր դիմագիծը: Օրինակ՝ հունվարի 19-ին «Հնդդեմ մարդկանց համարակալման» միավորման խորհրդի հրավիրած մամուլ ասուլիսը այս վարձակ գրչակը հայտարարում է «հրեաների և համասեռամուլների մասին իր (Ա.Ավետիսյանի, -խմբ.) հերթական ասուլիս»։ այնուհետև ՀԱՄ առաջնորդի գործունեությունը չլուսաբանելու 4-5 լրատվամիջոցի բոյկոտը, այս կեղտա-գրողը վերագրում է ՀՀ համարյա բոլոր լրատվամիջոցներին: Նա չի թաքցնում իր ուրախությունը, որ ձերբակալությունը թույլ չտվեց պահպանել ու ընդլայնել այդ բոյկոտը: Ստոր «լրագրողը» հոմանիշի կարգով գործածում է «թուրք» և «մահմեդական» հասկացությունները, ապա հռետորական հարց տալիս. «Հրեաները մեզ կոտորե՞լ են, հրեաները պատմական Արցախը բռնակցել են և էթնիկ գտումներ կամ սպանդներ կազմակերպել» (այս լիբրը «անգետ» է ձևանում երիտթուրքերի հրեական ծագման մասին), ու եզրակացնում, որ «տեղին չի համեմատել» թուրքերին ու հրեաներին և նրանց նույն հարթությունում դիտարկել: Նա Ա.Ավետիսյանին մեղադրում է «իր իսկ երկրի քաղաքացիների դեմ անհաշտության կոչեր» անելու մեջ: Հրապարակագիր(ներ)ը վախենում է, որ հնարավոր է, որ ՀՀ-ում ՀԱՄ առաջնորդի նման կոչերը արձագանք գտնեն և ձևավորվեն «օտարագրիներին Հայաստանից վտնդելու մանիայով համակված խմբեր»: Արդարացնելով Ա.Ավետիսյանի խափանման խիստ միջոցը, գրչակը ՀԱՄ առաջնորդին հավասարեցնում է հայերին անարգող հրեա թափափուկների հետ և հրճվում, որ մինչ Բարայելում հայերի նկատմամբ գործնական ատելություն տածող հրեաները պատշաճ պատիժ չեն ստանում, մեզ մոտ՝ ՀՀ-ում պատժվում են «ՀՀ այլազգի քաղաքացիների նկատմամբ անգամ զուտ բանավոր խոսքի մակարդակով անհանդուրժողականություն ցուցաբերողները», որով «կոնկրետ այս հարցում մենք շահեկանորեն տարբերվում ենք հրեաներից», և հույս հայտնում, որ այս հարցում նրանք մեզ կնմանվեն «և իրենք էլ պատժեն իրենց արմենավետիսյաններին»: Համասեռամուլների այս նվիրյալ պաշտպանը՝ «Աննա Մովսիսյանը», ինքը առնվազն հոգևոր համասեռամուլի մեկը, իր կեղտագիրն ավարտում է հետևյալ «գոհարով». «ինչ վերաբերում է նրանց, ովքեր կրծքով պաշտպանում են Արմեն Ավետիսյանի հակահամասեռամուլական քարոզչություն իրականացնելու իրավունքը, ապա նրանք, հավանաբար, իրենց ընդամենն ապահովում են այդ չարաբաստիկ ցուցակում հայտնվելու հեռանկարից, անկախ այն բանից, թե որքանով է այդ ցուցակը արժանահավատ»:

### **«Ավանգարդ» պարբերաթերթ**

Հմ.1 (13939), 26.01.-1.02.2005թ., էջ 3: Հարցավար՝ Մուսաննա Մարտիրոսյան. «Արմեն Ավետիսյան. «Մարդկանց համարակալումը երկիրը կվերածի համակենտրոնացման ճամբարի»»: Հարցազրույց ՀԱՄ-ի առաջնորդի հետ՝ ՀՀ-ում ազգակործան-պետականակործան զանազան երևույթների, մասնավորաբար սոցիալական քարտերի պարտադրման մասին: Իր կողմից թերթը առանձին սյունակով հայտնում է, որ «հրապարակումն արդեն պատրաստ էր տպագրության, երբ հայտնի դարձավ» Արմեն Ավետիսյանի կալանավորումը: Թերթն ավելացնում է. «ՀԱՄ առաջնորդի դեմ, ինչ խոսք, կուտակված կրքեր կային: Եվ ոչ միայն աձևակերպվող «Հակահրեական և հակաեզդիական հրապարակային էլույթների համար»: Արդյո՞ք Արմեն Ավետիսյանին հասարակությունից մեկուսացնելով՝ մոռացության կմատնվեն նրա մատնանշած՝ հասարակական հնչեղություն ստացած չարիքները: Իսկ ավելի անկեղծ՝ պե՞տք է մոռացության մատնել մեր ազգայինը վտանգող երևույթները»:

Հմ. 3, (13941), 9-15.02.2005թ., էջ 3: Նվարդ Բորյան. «Ազգայնականությանը՝ ո՞չ»: Լրագրողուհին վրդովված է, որ մինչ Ադրբեջանում մարդասպան Ռամիլ Մաֆարով թափափուկին ազգային հերոս են հռչակում, ՀՀ-ում, «Իբրև «հույժ» վտանգավոր հանցագործի», շղթայում են ազգայնական գործիչ Արմեն Ավետիսյանին, որով ջուր են լցնում հայոց թշնամիների ջրաղացին՝ մեր օտարասեր, նույնիսկ օտարամուլ ազգը աշխարհի առաջ ներկայացնելով «որպես օտարատյաց, անհանդուրժող ազգ»: Այնուհետև տպագրվել են ՀՀ երեք մտավորականների կարծիքները ՀԱՄ-ի առաջնորդի նկատմամբ թույլ տված հանցագործության նկատմամբ:

Հայաստանի գրողների միության նախագահ Լևոն Անանյանը բարձր է գնահատում «Հայ արիներ» պարբերաթերթի դերը որպես հայոց ազգային արժեքների քարոզի ու պաշտպանի: Նրա համոզմամբ՝ «չի կարող որևէ ժողովուրդ գոյություն ունենալ, եթե ազգայնական հոսանք չունենա: Անկախ ազգայնականությունը միշտ պետք է լինի յուրաքանչյուր ժողովրդի, ազգի, երկրի գոյության հիմքում»: Նա հայ արիներին հայտարարում է «առաքյալներ, որոնք ևս գիտակցա-բար իրենց վրա են ընդունում

Ե.Չարենցի խոսքերով ասած՝ «նետի ուժգնությունն ու թիրախի ճշգրտությունը»: Մեզ պատմականորեն անհրաժեշտ է ունենալ այս ծայրահեղականությունը: Արմեն Ավետիսյանի բանտարկությունը, կարծում եմ՝ միայն նրա օգտին է: Ես սա ուղղակի համարում եմ մի կուսակցության անցած ճանապարհի հերթական հանգրվան, իսկ ճիշտ գնահատականը կտան պատմությունն ու ժամանակը»:

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան Գառնիկ Անանյանը խստորեն դատապարտում է երևույթը՝ ավելացնելով, որ ողջունում է ՀԱՄ-ի գործունեությունը՝ շատ ցանկանալով, որ «նրանց առաջնորդը միշտ արի լիներ և չներքաշվեր քաղաքական խաղերի մեջ»:

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հրաչիկ Միմոնյանը գտնում է, որ Արմեն Ավետիսյանի ձերբակալությունը Օսվենցիմի ազատագրման 60-ամյակին նպատակ ունենալով՝ «ցույց տալու հայերի անհանդուրժողականությունը ռասիզմի, մասնավորապես՝ հրեատյացության նկատմամբ»: Ակադեմիկոսը անհնար է համարում դարեր շարունակ օտար միջավայրերում հոծ զանգվածներ ունեցող հայ ազգի մեջ այլատյաց քաղաքական կազմակերպությունների գոյությունը: Նա համոզված է, որ Արմեն Ավետիսյանն ու ՀԱՄ-ը «հանդես են գալիս ոչ թե հրեա էթնոսի, այլ սիոնիզմի գաղափարախոսության ու գործելակերպի դեմ, որը հիմնված է հրեաների՝ իբրև ընտրյալ լինելու մասին զառանցանքի վրա» և վկայակոչում է պաղեստինցի արաբ ժողովրդի հետևողական ոչնչացումը: Հր. Միմոնյանը սիոնիզմը հայտարարում է «նույնքան շովինիստական ու անմարդկային, որքան ամեն մի ռասայական գաղափարախոսություն»: Նա անընդունելի է համարում սեփական համոզմունքների համար մարդկանց կալանելու երևույթը, այլապես պետք է ձերբակալված լինեին «ադրբեջանի չափահաս բնակչության 99%-ից ավելին՝ հայ ազգի հասցեին ցուցաբերած ամենաալանդակ, անմարդկային վերաբերմունքի համար», ու ավելացնում. «Պետք է ձերբակալել քրեական ավազակներին, կոռուպցիոներներին, կաշառակեր դատավորներին և ժողովրդի ունեցվածքը հափշտակողներին, այլ ոչ թե քաղաքական գործիչներին»: Նա եզրդիներին հայության «դարավոր եղբայրներն» է համարում:

Հրապարակման վերջում, լրագրողուհի Նվարդ Բոբյանը, հետզբողության կարգով, ոչնչացնում է Արմեն Ավետիսյանի նկատմամբ բռնացող ապազգային տականքին՝ հիշեցնելով. «Գարեգին Նժդեհը, երբ 1950-ական թվականների սկզբին Երևանի բանտում էր, խնդրում էր իրեն վերադարձնել Վլադիմիրի իր նախկին կալանավայր. «Չեմ ուզում մեռնել Երևանի բանտում: Ի՞նչ կմտածեն թուրքերը...»»:

Հմ. 3, (13941), 9-15.02.2005թ., էջ 3: Արմեն Ավետիսյանի ազատության պաշտպան հանձնախումբ. «Կոչ ՀՀ, ԼՂՀ և սփյուռքի կազմակերպություններին, ողջ հայ ժողովրդին»: Ամբողջությամբ տպագրվել է հանձնախմբի հունվարի 29-ի կոչը:

Հմ. 3, (13941), 9-15.02.2005թ., էջ 3: Արմեն Կարապետյան . «Տեսակետ-Մեր իսկ հայրենիքում մեզ չպէ՛տք է ձերբակալեն»: Պատմագիտության թեկնածու հեղինակը բողոքում է, որ ՀՀ-ում փոխանակ ապահովելու բազմակարծությունը, հովանավորում և պաշտպանում են քրեական հանցագործներին, և բանտում «հայտնվում են հայ ազգին ու ազգային նկարագրին, գաղափարախոսությանը նվիրված անհատները»: Նա գտնում է, որ ՀԱՄ-ի առաջնորդի ձերբակալությունը «ևս մեկ անգամ աներկբա վկայում է, որ այս պետականությունը գործում է ընդդեմ հայրենասերների ու ազնիվ գաղափարականների»: Մի անգամ ևս իր վրդովմունքն արտահայտելով ՀՀ-ում կարծիքի ազատության դրսևորումների դեմ՝ Ա. Կարապետյանը համոզում է հայտնում, որ «վտանգված է հայ մարդու, հայազգի քաղաքացու պատվի և արժանապատվության զգացումն իր իսկ հայրենիքում, իր պետության ներսում»:

#### **«Երկիր» շաբաթաթերթ**

4.02.2005թ., էջ 1-5: Արամ Անանյան. «Հայաստանի մտացածին «հակահրեականությունը» անկարայի զինանոցում»: Թեև հրապարակման մեջ որևէ հիշատակություն չկա ՀԱՄ-ի առաջնորդի և նրա կալանման մասին, այսուհանդերձ, թրքագետ վերլուծաբանը հաստատում է, որ ՀՀ-ում «հակահրեականության» հայտնաբերման փորձերը ծառայում են թրքական շահերին և նպատակ ունեն ձախողել ցեղասպանագիտության ոլորտում և Հայկական ցեղասպանության միջազգային ճանաչման պայքարում հայ-հրեական համագործակցությունը:

#### **«Հարթակ» շաբաթաթերթ**

Հմ. 2, (72), 2.02.2005թ., էջ 6: «Հայ արիական միաբանության գերագույն խորհուրդ». «Զգոն լինենք»:

Հրապարակման մեջ ՀԱՄ-ի ԳԽ հայտնում է ՀԱՄ-ի առաջնորդի կալանման մասին ու ներկայացնում Արմեն Ավետիսյանի ընդարձակ կենսագրությունը: Հրապարակման ավարտին ՀԱՄ ԳԽ ՀՀ իշխանություններին խորհուրդ է տալիս «անցանկալի հետևանքներից խուսափելու և երկիրը ներքաղաքական լարվածությունից զերծ պահելու նկատառումով վաղաժամ ազատ արձակել Արմեն Ավետիսյանին, այլապես ընթացիկ իրադարձությունները վտանգավոր զարգացումներ կունենան»: Իր կողմից թերթի խմբագրությունը հայտնում է. «Հայաստանի նախկին քաղաքատարկայալներն իրենց համերաշխությունն են հայտնում Արմեն Ավետիսյանին և արդարադատության մարմիններից պահանջում՝ անհապաղ կարճել վերջինիս դեմ հանիրավի հարուցված քրեական գործը»:

Հմ. 3 (73), 9.02.2005թ., էջ 7: Ջերոմ Շահին. «Հրեաները և հակասեմականությունը»: Թարգմանության լիբանանյան «ալ-Մ-ստակբալ» արաբերեն օրաթերթի 2004թ.-ի դեկտեմբերի 7-ի համարից: Հոդվածագիրը ցույց է տալիս, թե ինչպես է հրեական ողջակիզումը խեղաթյուրվել առնվազն հինգ հարթություններով, և ինչպես է սիոնիզմը գաղափարական մտավոր ահաբեկություն կիրառում իր հակառակորդների նկատմամբ՝ նրանց «հակասեմականներ» հայտարարելով, մինչդեռ իսկական հակասեմականները արաբներին ցեղասպանող իսրայելցի-սիոնիստներն են:

### «Փակագիծ» շաբաթաթերթ

Հմ. 7 (95), 1.02.2005թ., էջ 1: Անստորագիր. «Մերժել են»: Հակիրճ լրատվություն ավագ քննիչ Արամ Գրիգորյանի կողմից ԱԺ երկու պատգամավորների միջնորդագիրը մերժելու և ավելի վերադաս ասյանին այն փոխանցելու մասին:

### «Գոլոս Արմենի»

27.01.2005թ., էջ 2: Գագիկ Մանվելյան. «Երկնագույն վրեժ»:

Հրապարակման հեղինակը համոզված է, որ Արմեն Ավետիսյանին ներկայացված մեղադրանքը շինծու է, թխած, և իսկական պատճառը ՀՀ իշխանության վերին օղակներում համասեռականների առկայության մասին Արմեն Ավետիսյանի բացահայտումն է: Հեղինակը տարակուսանք է հայտնում այն զուգահեռության առթիվ, որ Արմեն Ավետիսյանին ՀՀ հրեաները «հիշեցին» երկնագույնների ցուցակը ՀՀ երեք բարձրաստիճան ղեկավարների ուղարկելուց հետո միայն ու ավելացնում. «Եթե իր հայտարարություններում Արմեն Ավետիսյանը չհիշատակեր հրեաներին, նրան կարող էին «կպցնել» շանտաժ, թմրեցուցիչների առևտուր կամ նման մի բան, այնպես որ կարող է ստացվել, թե նա դեռևս հեշտ է պրծել»: Լրագրողը գտնում է, որ Արմեն Ավետիսյանի կալանումը ավելի է հաստատում այն վարկածը, թե «երկնագույնները» Հայաստանում ամուր տեղավորվել են բարձր էջերում և լուրջ ազդեցություն ունեն»:

27.01.2005թ., էջ 2: Լանա Մշեցյան. «Ձերբակալումն անհիմն են համարում», հայտարարեց Արմեն Ավետիսյանի փաստաբան Մելանյա Առուստամյանը»:

Արմեն Ավետիսյանի նկատմամբ հարուցված քրեական գործի զարգացումները ներկայացնելուց հետո տպագրվել են փաստաբան Մ.Առուստամյանի հետ հեռախոսային հարցազրույցի հիմնական մտքերը: Փաստաբանը հայտարարում է, որ իր պաշտպանյալի ձերբակալության ժամանակ կոպտորեն խախտվել են օրենքի պահանջներն ու իր պաշտպանյալի իրավունքները: Նա գտնում է, որ «ամբողջովին բավարար էր նրանից չբացակայելու մասին ստորագրություն վերցնելը»:

29.01.2005թ., էջ 3: Լ[անա] Մ[շեցյան]. «Ապրենք մինչև երկուշաբթի»:

Տեղեկացվում է «Նուբարաշենի քրեակատարողական հիմնարկում արգելափակված Արմեն Ավետիսյանի հայտարարած հացադուլի ու պահանջների մասնակի բավարարումից (պահել քրեական հանցագործներից զերծ բանտախցում) հետո դրա դադարեցման մասին: Տպագրվել են փաստաբան Մ.Առուստամյանի փոխանցած տեղեկությունները գործի ընթացքի և իր պաշտպանյալի ձերբակալման ժամանակ թույլ տրված ապօրինությունների մասին»:

1.02.2005թ., էջ 3: Լանա Մշեցյան. «Արմեն Ավետիսյանը մնում է կալանքի տակ»:

Հայտնվում է, որ նախորդ օրը ավագ քննիչ Արամ Գրիգորյանը մերժել է Արմեն Ավետիսյանի խափանման միջոցը փոխելու մասին ԱԺ երկու պատգամավորների միջնորդությունը: Լրատվությունը Արմեն Ավետիսյանի տեղակալ Մառ Մարտիրոսյանին վերագրելով, հայտնվում է, որ նույն միջնորդությունը ներկայացվելու է Երևան քաղաքի դատախազին, ու, նորից մերժվելու դեպքում, ՀՀ գլխավոր դատախազին: Հրապարակման մեջ անդրադարձ կա Արմեն Ավետիսյանի կալանման փաստի առթիվ Հայ ազգայնական կուսակցության

հայտարարությանը, ուր նշվում է, թե ՀԱԿ-ը «համաձայն չէ ազգային փոքրամասնությունների և մասունների հասցեին Արմեն Ավետիսյանի ազդեցիվ հայտարարություններին»։ այսուհանդերձ, ՀԱԿ-ը ապօրինի է համարում կալանումը, որը, ՀԱԿ-ի կարծիքով, «Ինչ-որ չափով ծանուցողական բնույթ է կրում կազմակերպության (ՀԱՄ-խմբ.) համար» և գտնում է, որ «Հարկավոր չէ նոր հերոսներ ստեղծել»:

3.02.2005թ., էջ 2: Նվարդ Բորյան. «Մեկ փամփուշտով՝ երկու նապաստակ»: Լրագրողը Արմեն Ավետիսյանի կալանման գնահատական տալու հարցով դիմել է ԱԺ երկու պատգամավորի և երկու պատմաբանի: Նախաբանում, լրագրողը տվել է իր գնահատականը՝ գրելով. «Ձերբակալելով Արմեն Ավետիսյանին՝ թվում է, թե հայրենական իշխանությունները փորձեցին մեկ փամփուշտով երկու նապաստակ խփել՝ հաճոյանալ ԱՄՆ պետքարտուղարությանը Օսվենցիմի ազատագրության 60-ամյակի նախօրյակին, և ձերբակալյալից վրեժ լուծել՝ «երկնագույնների» հայտնի ցուցակի համար»: Ն.Բորյանն անմիջապես ավելացնում է. «Թե ինչքա՞ն խորն են հաշվարկված այդ որոշման բոլոր հետևանքները ցույց կտա ժամանակը»: Այնուհետև տպագրված են 4 գործիչների գնահատականները:

ԱԺ «Օրինաց երկիր» խմբակցության անդամ Մեխակ Մխիթարյանը «անհիմն» է համարում Արմեն Ավետիսյանի ձերբակալությունը՝ «առավել ևս՝ նման ձևակերպումով»: ԱԺ պատգամավորը մերժում է ՀՀ-ում օտարազգիների նկատմամբ անհանդուրժողականության գոյությունը՝ գտնելով, որ այս ձերբակալությամբ «հաստատում ենք այն, ինչ իրականում գոյություն չունի»:

Համաձայն քաղաքագիտության դոկտոր և պատմագիտության թեկնածու Արմեն Այվազյանի՝ «արտաքին ուժերին հաջողվեց թակարդը գցել և՛ Արմեն Ավետիսյանին, և՛ ՀՀ իրավապահ մարմիններին: Նպատակը Հայաստանը միջազգային ասպարեզում խայտառակելն է, մեր ժողովուրդը ազգային փոքրամասնություններին հալածող ներկայացնելն է»: Արմեն Այվազյանը հայտարարում է, որ ինքը դեմ է Արմեն Ավետիսյանի ձերբակալմանը, որը «Հայաստանին, նրա հեղինակությանն ու շահերին հասցված լուրջ հարված է»:

Էլ ավելի արմատական է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, պատմագիտության դոկտոր Աշոտ Մելքոնյանի գնահատականը: Նա մասնավորաբար ասում է. «Ե՛վ Արմեն Ավետիսյան ին, և՛ նրա գաղափարներին դրական եմ վերաբերվում: Եթե Իսրայելում չէն էլ մտածում քրեական գործ հարուցել հայ հոգևորականների խաչի վրա թքող երիտասարդների նկատմամբ (այդպիսով անարգելով ամբողջ քրիստոնեական աշխարհը), ինչո՞ւ Հայաստանում մարդ են ձերբակալում հակասեմականության մեղադրանքով»: Քիչ անդին Ա.Մելքոնյանը դատապարտում է Արմեն Ավետիսյանի ձերբակալումը և այն հայտարարում վարչական կոպիտ միջամտություն «մարդու անհատական ազատությունների սահմանների մեջ»:

ԱԺ «Արդարություն» խմբակցության անդամ Շավարշ Քոչարյանը «բնական» է համարում Արմեն Ավետիսյանի նկատմամբ գործի հարուցումը՝ ավելացնելով, որ իրեն «անհասկանալի է», թե ինչո՞ւ են այս կապակցությամբ ձերբակալել Արմեն Ավետիսյանին:

12.02.2005թ., էջ 3: Նվարդ Բորյան. «Անհնար է միտքը ձերբակալել»: Հրապարակման սկզբում տեղեկություն է փոխանցվում, թե Արմեն Ավետիսյանի պաշտպանը շարունակում է իր ջանքերը իր պաշտպանյալի խափանման միջոցը փոխելու համար, ավելացնելով, որ այս ուղղությամբ միջնորդագիր են ներկայացրել ԱԺ 5 պատգամավորներ: Այնուհետև ներկայացվում են ՀԳՄ նախագահ Լևոն Անանյանի, դոկտոր, պրոֆեսոր Գառնիկ Անանյանի և դոկտոր, պրոֆեսոր, ակադեմիկոս Հրաչիկ Սիմոնյանի տեսակետները Ա.Ավետիսյանի կալանման փաստի վերաբերյալ (տեսակետները տես՝ «Ավանգարդ»):

### **«Իրավունք» շաբաթաթերթ**

Հմ. 5 (1039) 25-27.01.2005թ. («Հարց ու պատասխան» հավելված), էջ 1: Մեփ. լրատվություն. «Արմեն Ավետիսյանին կալանավորեցին»: Հայտնվում է, որ Արմեն Ավետիսյանի նկատմամբ քր. գործի հարուցումը «արվել է միջազգային հրեական կազմակերպությունների պահանջով, և գործի հարուցման առիթը Արմեն Ավետիսյանի «Իրավունքի» հմ 2-ում հրապարակված հարցազրույցն էր, որը կրում է «պիտի ենթադրեմ, որ նախագահը տեղյակ էր, որ նախագահականում արվամուլներ կան» վերնագիրը: Ի դեպ այդ հրապարակման առնչությամբ դատախազությունը աննախադեպ փութաջանությամբ կիրակի օրով որպես վկա հարցաքննել է հարցազրույցը վերցրած թղթակից Փիրուզա Մելիքսեթյանին, և դատելով այդ շտապողականությունից՝ սույն քր. գործին կարծես թե իշխանությունները մեծ կարևորություն են տալիս»: Այնուհետև փոխանցվում են քննիչներ-դատարան օղակում գտնվող Արմեն Ավետիսյանի որոշ արտահայտություններ՝ ստացված նրա բջջային հեռախոսի միջոցով: Նա «մեր թղթակցին ասաց, որ

հավանական պատճառներից մեկը կարող է լինել իշխանությունների ձգտումը «կոծկելու արվամուլ բարձրաստիճան պաշտոյաների թեման»: Նա նաև ավելացրեց. «Ես տեր եմ իմ բոլոր ասածներին և այսօր էլ պատրաստ եմ դրանք կրկնել: Ավելին իմ դեմ կազմակերպվելիք դատավարությունը ես վերածելու եմ Նյուրնբերգյան դատավարության ընդդեմ հրեաների»:

Հմ. 3 (1040), 27.01-2.02.2005թ., («Վերաքննություն» հավելված), էջ 1-3: Փիրուզա Մելիքսեթյան. «Հերթական քաղբանտարկյա լը... - «հաշվեհարդար «երկնագույններին» տրված գնահատականների համար»: Արմեն Ավետիսյանի կալանման հանգամանքների համարյա ամբողջական թղթածրարը: Գրեթե ամբողջությամբ մեջբերված է ՀԱՄ Գ 24.01.2005-ի երեկոյան հրատարակած հայտարարությունը. այնուհետև թերթը մի անգամ ևս նկատել է տալիս, որ իր ս.թ. 2 համարում տպված Արմեն Ավետիսյանի հետ հարցազրույցը դարձել է ՀԱՄ առաջնորդի ձեռքակալման առիթը: Համարյա ամբողջությամբ արտատպվել է Արմեն Ավետիսյանի կալանման առթիվ ՀՀ գլխավոր դատախազության հրապարակած հաղորդագրությունը: Թղթակիցը հեզմում է ՀՀ իրավապահներին՝ Ավետիսյանի հանդեպ մեղադրանքները հայտարարելով «առատության եղջյուրից թափվող»: Նա նշում է, որ ՀԱՄ առաջնորդը մեկուսարանում հայտնվեց Հոլոքոստի գոհերի հիշատակի օրը և ավելացնում. «Այս քայլով ՀՀ իշխանությունները, թերևս, ոչ միայն իրենց վերաբերմունքն արտահայտեցին հրեական ցեղասպանության գոհերի հիշատակի օրվա առթիվ, այլև արձագանքեցին ԱՄՆ պետդեպարտամենտի 2004-ի տարեկան գեկույցի անդրադարձին, թե Հայ-Արիական միաբանությունը հակասեմիտական կազմակերպություն է, իսկ Արմեն Ավետիսյանը՝ ազգային խտրականության քարոզիչ»: Թերթի լրագրողուհին ևս մեկ չափազանց ուշագրավ նկատողություն է անում. «Ի դեպ, քաղաքային դատախազությունը հունվարի 22-ին դեռևս «Իրավունքին» հատուկ տեղեկացրել էր, թե հրեական համայնքն է դիմել դատախազություն՝ Արմեն Ավետիսյանի դեմ քր. գործ հարուցելու պահանջով»: Բայց հունվարի 25-ին արդեն «Իրավունքը» ճշտեց, որ հրեական համայնքը ՀԱՄ-ի առաջնորդի հայտարարությունների վերաբերյալ իրավապահ մարմիններին չի դիմել, մասնավորապես քաղաքային դատախազություն հայց չի ներկայացրել»: Ուստի թղթակիցը ենթադրում է, «որ տվյալ քր. գործը հարուցվել է հենց իրավապահ մարմինների նախաձեռնությամբ՝ վերնից տրված համապատասխան հրահանգով»: Այս ելակետից Փ.Մելիքսեթյանը հիմնավորված է համարում «Նոր ժամանակներ» կուսակցության հայտարարության այն պնդումը, թե կատարվածը «իշխանական բուրգի վերնախավից եկած քաղաքական պատվեր է»: Լրագրողուհին համոզված է, թե ՀՀ բարձրաստիճան արվամուլներին բացահայտելու Արմեն Ավետիսյանի «սպառնալիքներն էլ, ամենայն հավանականությամբ, ծնեցին թիվ 63200105 քրեական գործն ու «հրեական համայնքի հարց» միֆը»: Լրագրողուհին «ամենածիծաղելի» է որակում առաջին ատյանի դատավոր Հրայրա Հովհաննիսյանին՝ Ա.Ավետիսյանին մեղադրած «ծանր հանցագործություն կատարելու» ձևակերպումը: Թղթակիցը գրում է, թե ՀՀ եզդիների ազգային միության նախագահ Ազիզ Թամոյանը թերթին հայտնել է, որ Արմեն Ավետիսյանի հետ որևէ խնդիր չունեն. Պարզապես ՀԱՄ առաջնորդը պահանջել է երկրից վտարել այն ազգային փոքրամասնությունները «որոնք խարխուլում են Հայաստանի պետականության հիմքերը», ինչին համաձայն է նաև Ա.Թամոյանը՝ անկախ այդ հանցագործի ազգային պատկանելիությունից:

Այնուհետև տպագրվել են Ա.Ավետիսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը փոխելու միջնորդագիր ներկայացրած ՀՀ ԱԺ երկու պատգամավորների մեկնաբանությունները կատարվածի վերաբերյալ: Մանուկ Գասպարյանը եղածը համարում է «կոպիտ սխալ», որով ՀՀ իշխանությունները «ջուր են լցրել թշնամու ջրաղացին», և ցավ հայտնում, որ «ազգային գաղափարախոսությունը, սեփական ազգին գովաբանելը մեր իշխանությունների համար քրեական արարք է: Ցավում եմ, որ մեր իշխանությունները օտարներին հաճոյանալու համար Հոլոքոստից առաջ պատվեր են կատարում»: ՀՀ ԱԺ «Արդարություն» խմբակցության քարտուղար Վիկտոր Դավլաթյանը մեկից ավելի անգամ նշում է, որ եթե Արմեն Ավետիսյանը հրապարակած լինեք բարձրաստիճան արվամուլների անունները, «հավանաբար, այսօր մեկուսարանում չէր լինի»: Նա Ավետիսյանի կալանքը համարում է հենց այդ համասեռամուլների իջեցրած պատվերը՝ հաշվեհարդարը:

Հրապարակման վերջին մասը լրագրողուհին նվիրել է Արմեն Ավետիսյանի իրավունքների պաշտպան կոմիտեի մամուլի առաջին ասուլիսին, հրապարակած կոչին և սպասելի գործունեությանը: Կոմիտեն գտնում է, որ Արմեն Ավետիսյանի «ձեռքակալությունը ներկայիս ապագային իշխանությունների բռնատիրական էության հերթական դրսևորումն է: Ակնհայտ է, որ Ավետիսյանի կալանավորումը թելադրված է ոչ թե օրենքի պահանջով, այլ քաղաքական պատվերով. Ա. Ավետիսյանը ենթարկվում է բռնության և քրեական հետապնդման՝ իր քաղաքական հայացքների և դրանք արտահայտելու համար:

Արմեն Ավետիսյանը հերթական քաղաքանտարկյալն է»:

Հմ. 3 (1040), 27.01.-2.02.2005թ. («Հետաքննություն» հավելված), էջ 3: Դ.Դ. «Նորից «շողոքորթում են»:  
Հողվածագիրը վերլուծում և մեկնաբանում է Ա.Ավետիսյանի կալանման նախապատմությունն ու ծալքերը:  
Ըստ հեղինակի՝ անունը հրապարակել չցանկացած ՀՀ ԱԺ «Հանրապետական» խմբակցության մի անդամի  
համոզմամբ՝ «մեր հայրենի իշխանությունները «հակահրեա» ազգայնական Արմեն Ավետիսյանի  
ձեռքակալումը անմիջապես այդ իրադարձության (Օսվենցիմի ազատագրության 60-ամյակին,-խմբ.) են  
«նվիրում»՝ փորձելով նման «գոհաբերություններով» բավարարել ԱՄՆ պետքարտուղարության և  
աշխարհում ահռելի ազդեցություն ունեցող հրեական լոբբինգի քմահաճույքներն ու պահանջները»:  
Հողվածագիրը ՀՀ իշխանությունների նման մտածելակերպը որակում է «պրիմիտիվ» (նախնադարյան-  
խմբ.), և գտնում, որ «Ժամանակն է, որպեսզի մեր «վոյինները» (ակնարկը Ռ.Քոչարյանինն է,-խմբ.) և նման  
այլ գործիչներ հասկանան վերջնականապես, որ քաղաքակիրթ երկրներին «շողոքորթելու»  
քաղաքականությունը որևէ հեռանկար չունի»: Ըստ նրա՝ Էլիզաբեթ Ջոնսի հայտարարությունն ու Դեյվիդ  
Աթթինսոնի զեկույցը և նման զարգացումներ ապացուցեցին, որ «Ա.Ավետիսյանին «գոհաբերելու» միջոցով  
համաշխարհային կառույցներին «շողոքորթելու» փորձը հերթական անգամ տապալվեց»:

Հմ. 3 (1040), 27.01.-2.02.2005թ., («Հետաքննություն» հավելված), էջ 3: Անստորագիր. «No Comment»: «Առանց  
մեկնաբանության» վերնագրի տակ թարգմանաբար արտաստվել են հատվածներ ՌԴ պետդումայի 20  
պատգամավորների՝ ՌԴ գլխավոր դատախազին ուղղված դիմումից, որով պահանջում են քրգործ  
հարուցել հրեական այն բոլոր կազմակերպությունների դեմ, որոնք այլատյացություն են քարոզում.  
դիմումի մեջ ներկայացվել են նման մի քանի փաստեր: Պատգամավորները դժգոհում են, որ ազգամիջյան  
թշնամություն հրահրելու մեղադրանքը կիրառվում է ընտրողաբար՝ հիմնականում մեր ռուս  
հայրենասերների նկատմամբ»: «Մեր դիմումում հակահրեական ոչինչ չկա, մենք միայն խնդրում ենք  
գլխավոր դատախազությանը՝ տալ մեր բերած փաստերի իրավաբանական գնահատականը», - հայտնում  
են ՌԴ Պետդումայի պատգամավորները (այսուհանդերձ, հրեա-սիոնական շրջանակներն անմիջապես  
«հակասեմական» որակեցին այս օրինական քայլը, և իրենց ենթակա լրատվամիջոցներով հերթական  
վայնասունը բարձրացրին Ռուսաստանում իբր մոլեզնոդ հակասեմականության մասին,-խմբ.):

Հմ. 6 (1041), 28.01.-3.02.2005թ., էջ 2: Փիրուզա Մելիքսեթյան. «No Comment-Արմեն Ավետիսյանին փակել են  
կրկնահանգագործների խցում»: Այս մասին թղթակցին հայտնած ՀԱՄ անդամ Աշոտ Հակոբյանը նկատել է  
տալիս, որ նման ապօրինությունը «մարդու համար հոգեբանական տրավմա» է: Հայտնվում է, որ  
Ա.Ավետիսյանը հացադուլ է սկսել:

Հմ. 6 (1041), 28.01.-3.02.2005թ., էջ 3: Ի. Հ. «...Եվ մի ՀՀ դեսպան»: ՀՀ ԱԺ «Հանրապետական» խմբակցության  
մի անդամ, որը չի ցանկացել բացահայտել իր անունը, հայտնել է լրագրողին, որ «գոնե իր համար  
ակնհայտ է, որ այն 7-հոգանոց ցուցակը, որի մասին այդքան խոսվում էր և գրվում, առանձնակի գաղտնիք  
չէ թե՛ քաղաքական շրջանակներում, թե՛, հավանաբար, նաև ժողովրդի համար: Գոնե մի նախարարի, մի  
ֆինանսիստի և նախագահի աշխատակազմի պաշտոնյաի անունները մինչև Արմեն Ավետիսյանի, այսպես  
կոչված, բացահայտումներն էլ թե՛ իշխանական և թե՛ ընդդիմադիր դաշտի կուլիսներում վաղուց  
շրջանառվում էին»: Լրագրողն ավելացնում է, որ վերջին օրերին նույն կուլիսներում շրջանառվում է  
լրագրողի որակումով՝ այդ «հրաշալի յոթնյակի» ևս մեկի անունը, որը ՀՀ դեսպան է արտասահմանյան  
երկրներից մեկում: Թղթակիցը կարծիք է հայտնում, որ բարձրաստիճան արվամոլների անունների նման  
արտահոսքերը «թերևս ապացուցում են այն կանխատեսումները, որ Հայ արիների միաբանության  
առաջնորդի մեկուսացմամբ հոմոսեքսուալ սկանդալը դժվար թե ավարտվի»:

Հմ. 6 (1041), 28.01.-3.02.2005թ., էջ 5: Փիրուզա Մելիքսեթյան. «Արիների առաջնորդը ձեռքակալվել է Արմեն  
Գևորգյանի կամոք»: Նույնությամբ բերում ենք հրապարակման սկիզբը. «Նախագահական  
աշխատակազմից մեր հավաստի աղբյուրը տեղեկացրեց, որ Հայ արիական միաբանության առաջնորդի՝  
Արմեն Ավետիսյանի ձեռքակալության, այսպես ասած, հրամանը, անմիջականորեն իջեցրել է ՀՀ  
նախագահի ա-ռաջին օգնական Արմեն Գևորգյանը: Վերջինս Ռոբերտ

Քոչարյանի համաձայնությունը կորզել է բավական ջանքեր գործադրելուց հետո»:

Մեր աղբյուրը նաև նշեց, թե «արիների առաջնորդի ձեռքակալությունը չի տվել ակնկալված «էֆեկտը», ինչի  
պատճառով էլ Քոչարյանն առաջարկել է վերանայել խափանման միջոցը:

Հրապարակման երկրորդ բաժնում ամբողջությամբ բերվել է Ա.Ավետիսյանի խափանման միջոցը փոխելու  
մասին ՀՀ ԱԺ երկու պատգամավորների միջնորդագիրը:

Հմ. 6 (1041), 28.01.-3.02.2005թ., էջ 16: «Ընկ. Փանջունու անկյուն»: Երկու մանրապատումներ վերաբերում են



Արմեն Ավետիսյանի գործին: Արտատպում ենք նույնությամբ. «Հայ արիական միաբանության հայտարարությունը-Արմեն Ավետիսյանն այլևս ոչինչ չունի կորցնելու, բացի իր ցուցակից»:

«Հայաստանում հրեական համայնքի բողոքը (Արմեն Ավետիսյանի ձերբակալման շուրջ) -Հայաստանի դեկավարները հրեաների անունով արվամոլներին լավություն են անում»:

Հմ. 7(1042), 1-3.02.2005թ., էջ 1: Ի.Հ. «Ոչ ոք չի ուզում «պողոտավկա» լինել»: Հրապարակումը փաստերով ապացուցում է Արմեն Ավետիսյանի կալանումից հետո ՀՀ վերնախավում ստեղծված անհամար և խուճապային վիճակը: Հողվածագիրը հայտնում է, որ «բոլորի համար էլ պարզից պարզ է», որ ՀԱՄ-ի առաջնորդին ներկայացված մեղադրանքը «թխված» է արվամոլներին բացահայտել սպառնացող Արմեն Ավետիսյանին լռեցնելու համար՝ իրականացված հենց այդ բարձրաստիճան արվամոլների կողմից: Հայտնվում է, որ «կոնկրետ որոշ իրավապահ մարմիններ բավականին երկիմաստ վիճակում են հայտնվել. ուզեն թե չուզեն, ստացվում է, որ իրենցգործողություններով թիկունք են կանգնում «արվամոլական» լոբբինգին: Բնականաբար, հասարակության աչքերում «արվամոլների պաշտպանի» պիտակը ձեռք բերելու խայտառակ հեռանկարը լուրջ դժգոհություններ է առաջացնում» այս քաղաքական պատվերը կատարողների և ոչարվամոլ իշխանավորների շրջանում: Դատախազության մի պաշտոնյա, որը չի ցանկացել բացահայտվել, լրագրողին ասել է, թե «երբ որոշում էր ընդունվում Արմեն Ավետիսյանին կալանավորելու վերաբերյալ, Ադվան Հովսեփյանին ՀՀ նախագահի նստավայրից հավաստիացրել էին, որ դա անհրաժեշտ է, որպեսզի Ստրասբուրգում հայանպաստ որոշում ընդունվի: Սակայն այժմ, երբ գրեթե ողջ քաղաքական դաշտն այդ քր. գործը որակում է «երկնագույնների պատվեր», երկիմաստ վիճակում հայտնված Գլխավոր դատախազն ուղիներ է որոնում, որ «դաբար» ստանա՝ փոխելու Արմեն Ավետիսյանի խափանման միջոցը: Մեր աղբյուրը հայտնեց, որ Ա.Հովսեփյանն արդեն տեղի խոսակցություններ է ունեցել նախագահի նստավայրի որոշ ազդեցիկ դեմքերի հետ՝ վերջիններիս մեղադրելով, որ նրանք իրեն «պողոտավկա» են արել»:

Հմ. 7(1042), 1-3.02.2005թ., էջ 2: Փիրուզա Մելիքսեթյան. «Ձերբակալությունը վերնից իջեցված քաղաքական պատվեր է»»: Մեկնաբանելով Արմեն Ավետիսյանի խափանման միջոցը փոխելու իր և Վիկտոր Դալլաքյանի միջնորդագրի՝ ավագ քննիչ Արամ Գրիգորյանի անհիմն մերժումը, ԱԺ պատգամավոր Մանուկ Գասպարյանը եզրակացնում է. «Եթե չի հիմնավորվում մերժման պատճառը, ուրեմն ձերբակալությունը եղել է վերնից իջեցված քաղաքական պատվեր: Հենց այդ պատճառով էլ քննիչն ի վիճակի չի եղել հիմնավորելու իր քայլը»:

Հմ. 7(1042), 1-3.02.2005թ., էջ 2: Անստորագիր. «Ա՛յ քեզ բան...»: Այս վերնագրի տակ դրված տարօրինակությունների շարքում նշվում է, որ «Շողակն» գործարանի սեփականատեր, Իսրայելի քաղաքացի Լև Լևանը գործարանի աշխատանքը հարմարեցրել է հրեական ավանդույթներին՝ հանգստյան օրը՝ հունվարի 28-ին՝ այսպիսով խախտելով ՀՀ օրենսդրությունը և անարգելով մեր փառապանծ բանակին (և դեռ հարայ-հրոց են բարձրացնում, թե ՀՀ-ում հակահրեականություն կա...-խմբ.):

Հմ. 7(1042), 1-3.02.2005թ., էջ 4: Հարցավար՝ Փ. Մ. «Հաշվեհարդար-«Եթե Արմեն Ավետիսյանի հետ ինչ-որ բան պատահի, ապա հետևանքներն իրենց համար շատ վատ կլինեն»»: Իր հետ կատարված հարցազրույցում ՀԱՄ Գերագույն խորհրդի անդամ Մառ Մարտիրոսյանը հայտնում է, որ Արմեն Ավետիսյանի ձերբակալությունից ավելի վատ բանի էին սպասում: Նկատի ունենալով ԱԺ երկու պատգամավորի միջնորդագրի մերժման փաստը՝ նա հայտնում է, որ ձերբակալման բուն էությունը եզրակացնել է տալիս, «որ եթե անգամ ամբողջ խորհրդարանն էլ ստորագրի, երևի թե հիմք չհանդիսանա Արմենի ազատ արձակման համար»: Նա հայտնում է նաև, որ «Արմեն Ավետիսյանի պաշտպանության հանձնախումբ է ստեղծվել նաև սփյուռքի գաղթօջախներում»: Այնուհետև նա գնահատում է կատարվածը որպես «ոչ միայն Արմեն Ավետիսյանի կալանման փաստ, այլ հարված ազգայնական գաղափարախոսությանը»: Նա զգուշացնում է հայ ազգայնականների չարակամներին. «Բայց այդ ուժը կամ անձնավորությունները պետք է հասկանան. եթե Արմենի հետ ինչ-որ բան պատահի, ապա հետևանքներն իրենց համար շատ վատ կլինեն»:

Հմ. 7(1042), 1-3.02.2005թ., էջ 7: Փիրուզա Մելիքսեթյան. «Բողոքի ակցիա»: Հակիրճ լրատվություն, որը մեջբերում ենք ամբողջությամբ. «Հունվարի 31-ին Լոս Անջելեսում՝ ՀՀ հյուպատոսարանի դիմաց, բողոքի ակցիա է կազմակերպել Արմեն Ավետիսյանի պաշտպանության հանձնախումբը: Ակցիայի կազմակերպիչներն ու մասնակիցները նամակներ են հղել ՀՀ նախագահին, խորհրդարանի խոսնակին ու վարչապետին՝ Արմեն Ավետիսյանի նկատմամբ խափանման միջոցը փոխելու պահանջով»:

Հմ. 7(1042), 1-3.02.2005թ., էջ 8: «Ընկ. Փանջունու անկյուն»: Երկու մանրապատումներ առնչվում են Արմեն

Ավետիսյանին: Մեջբերում ենք նույնությամբ. «Շաբաթվա դասերը- Ասում են՝ օրերս Արմեն Ավետիսյանին հասկացրին, որ «Եթե դու չես զբաղվում արվամուլներով, արվամուլներն են զբաղվում քեզանով»»: «Հայ արիների միաբանությունը ճիշտ էր- ՀՀ իշխանությունները տարօրինակ կերպով Արմեն Ավետիսյանի հարցում շատ հետևողական են»:

Հմ. 4(1043), 3-9.02.2005թ., էջ 3: Դ.Դ. «Անցուդարձ- ի՞նչ կապ ունի այստեղ հրեական համայնքը»: Ըստ հեղինակի՝ քաղաքական որոշ շրջանակներում Արմեն Ավետիսյանի՝ իբր հակահրեական արտահայտությունները համարում են «փոթորիկ մի բաժակ ջրում»: Հրապարակագիրը «ամենագավեշտական» է հայտարարում մեծ վերապահությամբ պայմանական համարվող հրեական համայնքի խառնուրդ այս ամբողջ պատմության, և եզրակացնում, թե «պետք է պարզել, թե ո՞ր ուժերն են Հայաստանի ներսում և դրսում խաղարկում «հրեական խաղաքարտը» և ինչ հեռահար նպատակով»: Նույն հրապարակման մեջ, անջատ սյունակով ու «Տարօրինակ փաստաթուղթ» ենթավերնագրով տպվել է Արմեն Ավետիսյանի հետևյալ ձեռագրի լուսանկարը. «Նուբարաշենի ՔԿՀ պետ՝ պրն. Ա.Սարգսյանին կալանավոր Արմեն Ավետիսյանից- Դիմում-խնդրում եմ ինձ տեղափոխել 32 խուց, որովհետև այնտեղ ունեմ մտերիմներ: Ուստի խնդրում եմ դիմումս չմերժեք- դիմող [Արմեն Ավետիսյանի ստորագրությունը,-խմբ.] - 27.01.2005թ.»: Թերթը կասկած է հայտնում ձեռագրի իսկական լինելու մասին՝ հայտնելով նաև, թե այս գրության լուսապատճենն ստացել են նախորդ օրը երեկոյան՝ «փակ անստորագիր ծրարով»:

Հմ. 8(1044), 4-10.02.2005թ., էջ 1-11: Հովհաննես Գալաջյան. «Իրավիճակ- Դիփ ճնշումին ու ճնշումին»: Առանց անուններ տալու, սակայն հստակորեն ակնարկելով «իրավապաշտպան» Վարդան Հարությունյանին ու նրա նմաններին, թերթի գլխ. խմբագիրը գրում է. «Ոչազրավ է, որ վերջին շաբաթների ընթացքում Հայաստանի ներսում էլ գտնվեցին մարդիկ, ովքեր (անշուշտ, ոչ առանց արտաքին ազդակների ներգործության կամ միգրացիոն նույնիսկ հրահանգման) սկսեցին հրապարակավ խոսել այն բանի մասին, որ Հայաստանում անհրաժեշտ է ազգային թշնամանքին վերաբերող քրեական հոդվածը կիրառել նաև ընդդեմ նրանց, ովքեր վատ են արտահայտվում թուրքերի կամ ադրբեջանցիների մասին: Անշուշտ, հայկական միջավայրում այդպիսի հարցադրումը ավելի քան արհեստածին է, քանզի մեր երկրում չկան ոչ միայն թուրքական կամ ադրբեջանական համայնքներ, այլև դժվար թե գտնվեն նույնիսկ մշտապես բնակվող նշյալ ազգությունների ներկայացուցիչներ» (էջ 1):

Հմ. 8(1044), 4-10.02.2005թ., էջ 2: Անստորագիր. «No Comment-Արմեն Ավետիսյանի վերաբնիչ բողոքը՝ այսօր»: Տեղեկացնելով այդ մասին, թերթը տպել է Արմեն Ավետիսյանի՝ փետրվարի 2-ին կալանավայրից հղած հետևյալ գրությունը. «Ես իմ խորին երախտագիտությունն եմ հայտնում այն մարդկանց՝ պետական այրերին, պատգամավորներին, քաղաքական և հասարակական ուժերի ներկայացուցիչներին, լրատվամիջոցների ղեկավարներին ու թղթակիցներին, Հայաստանի ու սփյուռքի հայության այն հատվածին, որոնք օրեր շարունակ պայքարում են իմ ազատության համար: Այդ ամենից տեղյակ եմ և դրանով էլ գոտեպնդվում եմ: Վստահ եմ, որ գալու է և՛ իմ, և՛ հայության ազատության օրը:

Հայաստանը հայերին: Փա՛ռք ազգին»:

Հմ. 8(1044), 4-10.02.2005թ., էջ 16: «Ընկ. Փանջունու անկյուն»: Մեկ մանրապատում առնչվում է ՀԱՄ-ի առաջնորդին. «Արմեն Ավետիսյանի եզրակացությունը (համարյա «ֆեռո»)-Երկար ճանապարհ ունեք անցնելու արվամուլների հետ»:

Հմ. 9(1046), 8-10.02.2005թ., էջ 2: Հովհ. Գալաջյան. ««Հաճախ ապօրինությունն իրագործվում է օրենքի անունից»,- համոզված է ԱԺ խոսնակը»: Տպված է հետևյալը. «Ինչ վերաբերում է Հայ արիական միաբանության առաջնորդ Արմեն Ավետիսյանին բարձրաստիճան հոմոսեքսուալիստների հարցը բարձրացնելու համար արհեստական պատրվակով կալանավորելուն, ապա Արթուր Բաղդասարյանի համոզմամբ՝ «իրավասու մարմինները դեռևս պետք է սպառիչ պարզաբանեն նաև կալանավորման բուն պատճառը. արդյոք դա Ձեր մատնանշած պատճառն է, թե՛ կա այլ իրական դրդապատճառ»»:

Հմ. 9(1046), 8-10.02.2005թ., էջ 3: Շահեն Տոնոյան. «Հույս առ գլխավոր դատախազ»: Հայտնվում է, որ ստորադաս օղակների մերժումից հետո Արմեն Ավետիսյանի պաշտպան Մելանյա Առուստամյանը Արմեն Ավետիսյանի խափանման միջոցը փոխելու միջնորդությամբ «այժմ դիմել է գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանին, միաժամանակ նաև վճարեկ դատարանին»: Լրագրողը հույս է հայտնում, որ գլխավոր դատախազը կըդառաջի «և դրանով կընդգծի իր անկախ, սեփական խաղը վարելու հնարավորությունը» և ավելացնում. «Չնայած միամտություն կլինի կարծել նաև, որ Երևան քաղաքի դատախազության քննիչը և Մայրաքաղաքի դատախազը Արմեն Ավետիսյանի խափանման միջոցը փոխելու մերժումների որոշումները ինքնուրույն են կայացրել: Եթե գլխավոր դատախազությունը մերժի Արմեն Ավետիսյանի

պաշտպանի ներկայացրած միջնորդությունը, ապա կարելի է միանշանակ պնդել, որ մերժումը քաղաքական է և ոչ թե իրավական որոշման արդյունք է»: Համաձայն Շ. Տոնոյանի՝ ըստ շրջանառվող լուրերի՝ «խուլ պայքար է ընթանում իշխանական վերնախավում, ուր Արմեն Ավետիսյանին ազատել-չազատելու հարցի շուրջ հստակորեն երկու թիվ է ձևավորվել: Համաձայն որոշ դատախազական աղբյուրների՝ Արմեն Ավետիսյանի նկատմամբ խափանման միջոցը փոխելու հարցում գլխավոր դատախազը վճռականորեն է տրամադրված»:

Հմ. 9(1046), 8-10.02.2005թ., էջ 8: «Ընկ. Փանջունու-անկյուն»: Արմեն Ավետիսյանին առնչվող կա մեկ հրապարակում. «Նախագահի օգնական Արմեն Գրիգորյանը՝ Արմեն Ավետիսյանին-Տեսա՝ ր ինչ եղավ»: Հմ. 5 (1047), 10-16.02.2005թ., էջ 3: «Նամակ թիվ 32 բանտախցից»: Ամբողջությամբ ձերբակալվել է ՀԱՄ-ի առաջնորդի Նուբարաշենի մեկուսարանից փետրվարի 4-ին «Իրավունքին» ուղղված գրությունը (նաև ձեռագրի պատճենը), ուր նա հայտնում է, թե գտնված բանտում «կան կալանավորներ, որոնք առաջնորդվում են ճշմարիտի և արդարի գիտակցությամբ և պատրաստ են կանգնել նման մարդկանց կողքին»: Արմեն Ավետիսյանը հայտնում է նաև, որ «Իրավունքի» նախորդ համարներից մեկում լույս տեսած իր ձեռագրի պատճենը իսկական է: Որպես հետգրություն Ավետիսյանը նշում է, որ վերոհիշյալ գրության դուրսբերումն ու «Իրավունքում» հրապարակումը «միտում ունեն հարվածի տակ դնելու (Նուբարաշենի ՔԿՀԻ, -խմբ.) ադմինիստրացիայի այն հատվածին, որը պաշտպանում է ինչպես իմ, այնպես էլ մյուս կալանավորների պատիվն ու արժանապատվությունը»:

Հմ. 5 (1047), 10-16.02.2005թ., էջ 4: Հարցավար Շահեն Տոնոյան. «Իրավական-«Արմեն Ավետիսյանի ձերբակալման հարցում նման «ջանասիրությունը» հարիր չէր մեր պետական այրերին»»: Հարցազրույց ՀՀ-ում մարդու իրավունքների պաշտպան Լարիսա Ալավերդյանի հետ՝ Արմեն Ավետիսյանի նկատմամբ բռնության մասին: Տիկին Ալավերդյանը «վիճահարույց» է համարում ընտրված խափանման միջոցը՝ կալանքը, քանի որ հաշվի չեն առնվել Արմեն Ավետիսյանի անձնական հատկությունները: Նա հայտնում է, որ միջնորդական նամակ է գրել խափանման միջոցը փոխելու համար, «քանի որ կարծում եմ, որ կալանքը այստեղ իրավունքների ոտնահարում է»: Ըստ տիկին Ալավերդյանի՝ ՀԱՄ-ի առաջնորդի ձերբակալությունն «ավելի շուտ սկանդալային միտումներ էր հետապնդում: Նրա նկատմամբ մեղադրանք առաջդրելը կապված է և՛ այդ օրերին Օսվենցիմի համակենտրոնացման ճամբարի ազատագրմանը նվիրված միջոցառման, և՛ ՄԱԿ-ում քննարկվող Հոլոքոստի հարցի, և՛ պետդեպարտամենտի զեկույցի հետ»: Ձեկույցում «տեղ գտած հիշատակմանը Հայաստանում հակասեմիտիզմի դրսևորումների մասին» Լարիսա Ալավերդյանը բոլորովին անհամապատասխան է գտնում իրականությանը:

Տիկին Ալավերդյանը մերժում է համասեռականների «իրավունքները» մարդու իրավունքների շարքում ընդգրկված լինելու մասին ոմանց կարծիքը, և գտնում, որ «ակտիվ քարոզչությունը հոգուտ սեռական փոքրամասնության կարող է բերել մանկապղծության և սեռական հողի վրա կատարվող հանցագործությունների»: «Իսկ ի՞նչ օգուտ քաղեց մեր հասարակությունն արվամուլների այս «պատմությունից», հարց է տալիս տիկին Ալավերդյանը և շարունակում. «Դեպքերի նման ընթացքը կարող է հանգեցնել հասարակության այլասերվածության դրսևորումների: Հետո շատ դժվար է լինելու հասարակությանը ձերբազատել այդ այլասերվածությունից: Ի վերջո, ժամանակն է, որ մեր հասարակությունը վերագտնի իրեն հատուկ իմաստությունը և վերջ դնի նման խեղկատակություններին»:

Հմ. 10 (1048), 11-17.02.2005թ., էջ 2: Անստորագիր. «Շաբաթվա զարմանքը»: ՀՀ-ում զարմանալի լուրերի շարքում հիշատակվում է ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանի՝ իրեն հասցեագրված, ՀԱՄ առաջնորդի խափանման միջոցը փոխելու բողոքը Երևան քաղաքի դատախազություն վերահասցեագրելու փաստը, հիշատակելով, որ այդ բողոքն ուղղված էր հենց վերջինիս դեմ: Թերթը այս երևույթը որակում է «բյուրոկրատական ֆուտբոլ»: Գրված է նաև, որ ՀՀ-ում «Էլ քաղաքական գործիչ չմնաց, որ չհայտարարեր, թե Արմեն Ավետիսյանի կալանավորումը բարձրաստիճան երկնագույնների պատվերն է»:

Հմ. 10 (1048), 11-17.02.2005թ., էջ 16: «Ընկ. Փանջունու անկյուն»: Տպագրվել է հետևյալը. «Արմեն Ավետիսյանի տրտունջը-Ի՞նչ մնաց ինձ, յոթ արվամուլ, ուրիշ ոչինչ»:

### **«Երրորդ ուժ» շաբաթաթերթ**

Հմ. 4(26), 4-11.02.2005թ., էջ 16: Հարցավար Անահիտ Ստեփանյան, «Կարապետիչի երգը՝ ժողովրդին»:  
Հարցազրույց ԱԼՍ հոլդինգի նախագահ Տիգրան Կարապետյանի հետ, որում մեկ հարց ու նրա

պատասխանը վերաբերում են ՀԱՄ-ի առաջնորդին ու նրա ձեռքակալությանը: Դրանք մեջբերում են նույնությամբ՝ գերծ մնալով մեկնաբանությունից. «(հարց) Եկեք անդրադառնանք նաև «Հայ արհմիության միաբանության» առաջնորդի ձեռքակալության փաստին: Այս աղմկահարույց ձեռքակալությունից հետո այն տեսակետն է հնչում, որ հաջորդ ձեռքակալվողը Դուք եք լինելու: (պատասխան) Նախ, «Հայ արհմիության միաբանությունն» ու ԱԼՄ հեռուստաընկերությունը միևնույն հարթակի վրա չեն գտնվում: Մենք կենտրոնամետ ենք, իրենք՝ ծայրահեղական: Հետո էլ մենք երբեք չենք ասել, որ հրեա ժողովրդին հարկավոր է Հայաստանից վտարել: ...Իսկ Արմեն Ավետիսյանն ուղղակիորեն ասել է, որ հրեաներին ու եզդիներին պետք է վտարել Հայաստանից»: Իհարկե, ժողովրդական «փրկիչ» Տիգրան Կարապետիչը չի ավելացնում, թե ՀԱՄ-ի առաջնորդին իր վերագրած արտահայտությունները ի՞նչ կոնտեքստում են հնչել: Հմ. 3 (25), 28.01-04.02.2005թ., էջ 3: Անահիտ Ստեփանյան. «Արդյոք ովքե՞ր են բարձրաստիճան գեյերը»: Լրատվություն հունվարի 26-ի մամուլի ասուլիսի՝ սփյուռքում Ա.Ավետիսյանի պաշտպան հանձնախմբի ստեղծման և Ավետիսյանի պաշտպան սփյուռքահայ փաստաբանների հրավիրման հնարավորության մասին: Հիշատակվում է ՀԱՄ Գ անդամ Մառ Մարտիրոսյանի կարծիքը, որ ՀԱՄ առաջնորդի կալանման պատճառը վերջինիս գործունեությունն էր բարձրաստիճան արվամուլների, ջիոլդամասոնական դավադրությունների և սոցքարտերի «կամավոր» պարտադրման դեմ պայքարում: Թերթը թեև նշում է, որ դեռևս չի հաջողվել բացահայտել այդ արվամուլների ինքնությունը, այսուհանդերձ ավելացնում է. «Բայց որ նման մարդիկ կան, կրկին հաստատվեց: Մնում է առայժմ միայն գուշակությամբ զբաղվել և պատահած պաշտոնյային հանդիպելիս՝ «հեռահար» զննել»:

#### **«168 ժամ»**

Հմ. 5 (22), 10-16.02.2005թ., էջ 4: Արմեն Քոչարյան. «Ինչի՞ց են վախենում հայերը»: Հրապարագիրը իր տված հարցումին, թե «ինչի՞ց կամ ումի՞ց են վախենում այսօր մարդիկ», այլոց շարքին հիշատակում է՝ «Արմեն Ավետիսյանից, եթե արվամուլ են, սոցիալական քարտերից, եթե Արմեն Ավետիսյանն են»:

#### **«Այբ-Ֆե» շաբաթաթերթ**

Հմ. 2 (262), 28.01-3.02.2005թ., էջ 1: Անստորագիր. «Փաստ- Արմեն Ավետիսյանը քաղկալանավոր է»: Թերթը միանգամից տպագրել է իր եզրակացությունը, այն, որ «Արմեն Ավետիսյանը կալանավորվել է քաղաքական դրդապատճառներով»: Թերթը գտնում է, որ «նրան կալանավորել են գեյերը, կնշանակի, որ գեյ են ոչ միայն Արմենի ցուցակում ընդգրկված անձինք, որ կան նրանց հովանավորող առավել բարձրաստիճան գեյերը»: Թերթը հնարավոր է համարում, որ ՀԱՄ-ի առաջնորդի կալանման պատճառը «նրա ծավալած անհաշտ պայքարն է ընդդեմ սոցիալական քարտերի համակարգի ներդրման»: Ի վրոջո թերթը հանգում է ևս մեկ եզրակացության. «Ակնհայտ է մի բան. Արմեն Ավետիսյանին կալանավորել են սեփական համոզմունք ունենալու համար»:

#### **«Չորրորդ իշխանություն» շաբաթաթերթ**

28.01.2005թ., էջ 8: Անստորագիր. «Կադրային չենք-Dream team»: Թերթը հեզնական երանգով գնահատում է Ա.Ավետիսյանի գործունեությունը: Ըստ «Չորրորդ իշխանության»՝ Ավետիսյանը «աչքի է ընկնում ակզբունքային արիությամբ և բարձր ինտելեկտով: Չի սիրում արվամուլներին, կին լրագրողներին և հրեաներին: ...Միրում է խոսել արվամուլ պաշտոնյաների ցուցակի մասին», որի մասին «սիրում է միայն խոսել»: Որպես եզրակացություն Ա.Ավետիսյանի ներուժ, թերթը գտնում է, որ Ավետիսյանը «կարող է օգտագործվել»:

#### **«Ռեսպուբլիկա Արմենիի» շաբաթաթերթ**

Հմ. 10 (296), 11.02.2005թ., էջ 3: Էլենա Կուրդիյան. «Ամենաթողությունը ազատություն չէ»: Միևնույն օրը պետական երկու պաշտոնաթերթերով լույս տեսած և Արմեն Ավետիսյանի նկատմամբ կեղտի քանակով նմանը չունեցող երկրորդ հրապարակումն է սա: Թերթի գլխավոր խմբագիր այս կատարածուն ՀԱՄ առաջնորդին վերագրում է «պատանեկան բարդություններ», նրան կոչում «ֆյուրեր» և «ֆյուրերիկ», որը

«բարոյական, մտային և քաղաքական «գրոյից» հասարակության աչքին «աճել է» մինչև «ինչ-որ թվանշան»: Է. Կուրդիյան կոչեցյալն էլ, «Աննա Մովսիսյանի» նման, փաստերը խեղաթյուրում է, այսինքն՝ լրագրողական անբարոյականությամբ է զինվում. օրինակ՝ նրա սուտը, որ Արմեն Ավետիսյանը լրագրողներին «այլանդակներ է» հռչակել... Այս սկսում է դատողություններ անել կարծիքի արտահայտման ազատության և այլատյացության մասին: Այս վարձկանը շատ է ցավում, որ Ա. Ավետիսյանի պատճառով ՀՀ-ը հայտնվել է ԱՄՆ պետքարտուղարության՝ հակասեմականության վերաբերյալ զեկույցում՝ անթույլատրելի համարելով ամեն տեսակի «կեղտի» պատճառով ՀՀ միջազգային հեղինակության հետ խաղալը: Այս այս այլանդակ լրագրողուհին իր թույնը թափում է այն բոլոր հասարակական, քաղաքական և այլ կազմակերպությունների ու գործիչների վրա, որոնք «խիստ» են համարում Ա. Ավետիսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը. «նման բարեհոգությունը հավասար է հովանավորչության», - դժգոհում է նա, ավելացնելով. «... ոչնչից քաղաքական «գործիչ» սարքեցին, իսկ հիմա էլ սկսվել է երկրորդ սերիան՝ այդ «գործիչ» վերածումը «խղճի բանտարկյալի»: Սա ավելի քան հերիք է: «Ռ. Ա.»-ի գլխավոր խմբագիրը «բնական» է համարում ՀԱՄ առաջնորդին ներկայացված մեղադրանքը և նորից վերադառնում կարծիքի ազատության և ամենաթողության իր դատողություններին:

### **Արմեն Ավետիսյանի շահերի պաշտպան փաստաբան Մելանյա Առուստամյանի պաշտպանական ճառը Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանում**

Ավարտվեց դատաքննությունը՝ ըստ մեղադրանքի Արմեն Ավետիսյանի ՀՀ քր. օր.-ի 226 հոդվ. 2-րդ մասի: Գտնում եմ, որ մեղադրողի ճառում բերված փաստարկները անհիմն են:

Իմ պաշտպանյալ Արմեն Ավետիսյանը մեղադրվում է ՀՀ Քրեական օրենսգրքի 226 հոդվածի 2-րդ մասով, այն բանի համար, որ 2003-2005 թվականների ընթացքում, հրապարակայնորեն և լրատվության միջոցներ օգտագործելով, հեռուստատեսությամբ ելույթ ունենալով, մամուլի ասուլիսների միջոցով, թերթերում հոդվածներ հրապարակելով, թերթերով և հեռուստատեսությամբ հարցազրույցներ տալով, իր գաղափարներով ու կարծիքներով հարուցել է ազգային թշնամանք հրեա և քուրդ ազգերի և ՀՀ-ում բնակվող քրդերի ու հրեական համայնքների նկատմամբ: Գտնում եմ, որ իմ պաշտպանյալի արարքում բացակայում է հանցակազմը, և Արմեն Ավետիսյանի նկատմամբ պետք է կայացվի արդարացման դատավճիռ, այն պարզ պատճառով, քանի որ մեղադրանքը դատաքննության ընթացքում չհիմնավորվեց:

Դատաքննության ընթացքում հարցաքննված վկաներից և ոչ մեկը հստակ չհայտնեց դատարանին, որ Արմեն Ավետիսյանը ազգային թշնամանք է հրահրել հրեա ազգի նկատմամբ:

Վկա Ա. Բաբաջանյանը դատարանին հայտնեց, որ նախաքննության ընթացքում իր կողմից տրված ցուցմունքը տվել է առանց իր հողվածները մեկ անգամ ևս վերհիշելու, և դրանով է պայմանավորված, որ իր նախաքննական ցուցմունքը հակասում է դատաքննության ընթացքում տրված ցուցմունքին:

Նախաքննական մարմնին ցուցմունք տալուց հետո վերանայել է իր հողվածները և հիմա պնդում է, որ նախաքննական ցուցմունքում արտահայտած այն միտքը, թե Արմեն Ավետիսյանը հրեա ազգի նկատմամբ թշնամանք է սերմանել, եղել է ընդամենը իր կարծիքը, տեսակետը, որը նա փոխել է: Բացի այդ, նա հայտնեց որ Ա. Ավետիսյանը ոչ թե հրեա ազգի, այլ նրա որոշ ներկայացուցիչների մասին է խոսել տրված հարցազրույցներում և ասուլիսներում, այսինքն՝ Ա. Ավետիսյանը կոնկրետ հրեա ազգի մասին չի խոսել, այլ խոսել է գաղտնի կազմակերպության, կառույցի մասին, որը անվանել է «ջիոդամասոններ»: Ա. Ավետիսյանն իր հարցազրույցներում խոսել է ջիոդամասոնականության մասին, ոչ թե հրեա ազգի, ոմանք ջիոդամասոնականություն ասելով՝ հասկանում են հրեաներ, «բայց ես այդպես չեմ համարում», և համեմատություն անելով ավելացրեց՝ «ՀՅԴ գրասենյակ» ասելով՝ չենք հասկանում հայ ազգ: Վկան հայտնեց նաև, որ ընթերցողի տեսակետը ինքը չի կարող արտահայտել, բացի այդ, նախաքննական մարմնին տված ցուցմունքներում որոշ ձևակերպումներ արվել են քննիչի կողմից: Վկան պնդեց, որ ճիշտ է դատարանում տրված ցուցմունքը, մեղադրողի հարցին միանշանակ պատասխանեց, որ Ա. Ավետիսյանի արտահայտությունները վերաբերել են ջիոդամասոններին և սիոնիստներին:

Վկան հայտնեց, որ ինքը ընդհանրապես չի հետաքրքրվել սիոնիստական և մասոնական

գաղափարախոսությունով, և չի էլ հետաքրքրվելու: Այստեղից հետևություն, որ վկան խառնել է գաղափարախոսությունը՝ ազգի հետ, չնայած, որ դատարանում վկան հստակ հայտնեց, որ բոլոր հրեաները չէ, որ մասոններ կամ սիոնիստներ են, որ բոլոր մասոններն ու սիոնիստները չէ, որ հրեաներ են: Վկան հայտնեց նաև, որ Ավետիսյանից լսել է, որ մասոններ և սիոնիստներ կան նաև հայերի մեջ: Նա հայտնեց նաև, որ Ա. Ավետիսյանը հրեա ազգի նկատմամբ որևէ գործողության կոչ չի արել, չի ասել՝ հրեաներին պետք է վտարել, պետք է նրանց լցնել «գազովի կամերաներ»: Չնայած մեղադրողի բազմաթիվ ջանքերին, վկան ժխտեց, որ մամուլի ասուլիսներում և հարցազրույցներում Ա. Ավետիսյանը ազգային թշնամանք է սերմանել: Միաժամանակ հայտնեց, որ եթե Ա. Ավետիսյանի կողմից տրված հարցազրույցները պարունակեին իրենց մեջ հանցագործության տարրեր, ապա, այդ դեպքում Ա. Ավետիսյանի նկատմամբ քրեական հետապնդումը պետք է իրականացված լիներ վաղուց, քանի որ այդ հրապարակումները եղել են 2003թ-ից: Կարծում եմ, վկան իր ցուցմունքով միանշանակ հերքեց մեղադրանքը:

Վկա Փ. Մելիքսեթյանը ինչպես նախաքննությամբ, այնպես էլ դատաքննությամբ տրված ցուցմունքներում նշել է, որ Ա. Ավետիսյանը հրեա ազգի նկատմամբ արտահայտվել է հավուր պատշաճի՝ հարգանքով, Ա. Ավետիսյանը կրկնել է գիտնականների և ակադեմիկների տեսակետները, համաձայն որի՝ հայոց ցեղասպանության կազմակերպման մեջ դեր են ունեցել նաև հրեաները: Նա հայտնեց, որ Ա. Ավետիսյանը, հրեական վտանգի մասին խոսելիս, նկատի է ունեցել 1915թ. իրականացված ցեղասպանությունը, ուղղակի նա կրճատել է Ա. Ավետիսյանի խոսքը: Այն հարցին, թե որ երկրի հրեական համայնքին է նկատի ունեցել Ա. Ավետիսյանը, վկան պատասխանեց, որ համենայն դեպս ՀՀ-ում հրեական համայնք չկա: Վկան իր ցուցմունքում, ինչպես նաև հողվածում չի նշում, թե ովքեր պետք է հեռանան ՀՀ-ից, այլ միայն ասվում է, որ պետք է հեռանան նրանք, ովքեր քանդում են Հայոց պետությունը: Այսինքն՝ առկա են չփարատված կասկածներ, որոնք չեն մեկնաբանվել ի վնաս ամբաստանյալի: Այս ցուցմունքը ևս գուրկ է որևէ մեղադրական հիմնավորումից:

Վկա Ա. Պեպանյանը նույնպես որևէ լուրջ փաստարկ չհայտնեց դատարանին: Նա ևս հայտնեց, որ Արմեն Ավետիսյանը հրեա ազգի նկատմամբ թշնամանք չի սերմանել: Վկան ընդհանրապես գաղափար չունեց ջիոդամաստնության և սիոնիզմի մասին: Վկայի համար ջիոդոը և հրեան նույնանում են: Այս ցուցմունքը ևս որևէ կերպ չի հիմնավորում, որ Ա. Ավետիսյանն արտահայտվել է հրեա ազգի դեմ:

Հաջորդ վկան ազգությամբ եզդի Ա. Թամոյանն էր, որը հայտնեց, որ ՀՀ-ում քուրդ ազգ գոյություն չունի, որ քրդերը 1988-89թ. հեռացել են ՀՀ-ից, որ մի քանի եզդի կան սարերում, որ իրենց քուրդ են համարում: Վկան դատարանին հայտնեց, որ ինքը և ամբաստանյալը եղբայրներ են, բայց բարեկամներ չեն, որ ինքը մինչև «Առավոտ» թերթի հողվածը կարդալը, ցանկացել է հանդես գալ պատասխանով, քանի որ իրեն 2 եզդի դիմել են այդ հարցով: Մակայն հողվածը կարդալուց հետո, որևէ վատ բան չի տեսել այդ հողվածում, այդ պատճառով պատասխան հողված չի գրել, բացի այդ, հեռախոսազրույց է ունեցել Ա. Ավետիսյանի հետ և ինքն էլ համաձայն է նրա հետ, որ ՀՀ-ից պետք է հեռանան նրանք, ովքեր խարխլում են ազգային պետականության հիմքերը: Ինչ վերաբերում է, որ եզդիները ՀՀ-ի նկատմամբ տարածքային պահանջներ ունեն, ապա իրականում իրեն հայտնի է մի քարտեզ, որտեղ քրդերը Հայաստանը ներառել են իրենց պատմական հայրենիքի կազմում, իսկ ներկա Արագած լեռան տարածաշրջանը ուզում էին դարձնել Քրդական պետության վարչական տարածք: Ինքը այդ առումով մտահոգություն է ունեցել և անձամբ հանդիպել է նախկին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին այդ հարցով: Վկան մեկ անգամ ևս հավաստեց, որ, այո, ՀՀ-ից պետք է հեռանան նրանք, ովքեր խարխլում են ազգային պետականության հիմքերը: Վկան հայտնեց, որ նախաքննական ցուցմունքը իր ձեռքով չի գրվել, իսկ ինչ վերաբերում է, որ գրել ու կարդացել է ցուցմունքը, ապա չի կարդացել, քանի որ ակնոց չի ունեցել և վստահել է քննիչին և ստորագրել: Ճիշտ է դատարանում տրված ցուցմունքը: Նա հայտնեց, որ «Առավոտի» հողվածը որևէ կերպ չի ազդել հայ և եզդի ազգերի դարավոր բարեկամությանը, Ա. Ավետիսյանը եզդի ազգի նկատմամբ թշնամանք չի հրահրել, հայ ազգի կողմից որևէ թշնամանք չի դրսևորվել: Վկան ավելացրեց նաև, որ երբ մարդը անհիմն կալանավորվել և մեղադրվում է, ապա սա կարող է դառնալ ազգային թշնամանք սերմանելու հիմք:

Այսպիսով՝ հարցաքննվել է ազգությամբ եզդի վկա, ըստ որի, ՀՀ-ում քուրդ ազգ չի ապրում, հարց է ծագում. որ երկրում ապրող քրդերի նկատմամբ է Ա. Ավետիսյանը թշնամանք հրահրել: Այսինքն՝ չկա ազգ ՀՀ-ում, չկա և մեղադրանք:

Ինչ վերաբերում է Ա. Իսրայելյանի և Ռ. Վարժապետյանի ցուցմունքների հրապարակմանը, ապա այդ ցուցմունքները չունեն ապացուցողական նշանակություն, և չեն կարող դիտվել որպես ապացույց, այն

պարզ պատճառաբանությամբ, որ ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվ.-ի քրեական հանցագործության մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք իրավունք ունի հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին: Վերոհիշյալ 2 վկան Ա. Ավետիսյանի նկատմամբ մեղադրական ցուցմունքներ են տվել, որոնց Ա. Ավետիսյանը հնարավորություն չի ունեցել հարցաքննելու ոչ նախաքննության և ոչ էլ դատաքննության ընթացքում: Ռ. Վարժապետյանի դատարան չներկայնալու փաստը արդեն իսկ վկայում է, որ նա խուսափում է ցուցմունք տալուց, որովհետև նրա նախաքննական ցուցմունքը հերյուրանք է, մասնավորապես այն պարզ պատճառաբանությամբ, որ գործում չկա հրեա ազգի նկատմամբ թշնամանք դրսևորելու վերաբերյալ որևէ դիմում, ուղղված ՀՀ նախագահին և իրավապահ մարմիններին: Արմեն Ավետիսյանը իրեն մեղավոր չի ճանաչել ո՛չ որպես կասկածյալ, և ո՛չ էլ որպես մեղադրյալ, ոչ էլ՝ ամբաստանյալ հարցաքննվելիս: Նա իր ցուցմունքներում նշել է, որ ինքը, հեռուստատեսությամբ ելույթ ունենալով, մամուլի ասուլիսների միջոցով, թերթերում հոդվածներ հրապարակելով, թերթերով և հեռուստատեսությամբ հարցազրույցներ տալով, իր գաղափարներով ու կարծիքներով նպատակ չի ունեցել հարուցելու ազգային թշնամանք հրեա և քուրդ ազգերի նկատմամբ: Նրա արարքում բացակայում է հանցակազմի սուբյեկտիվ կողմը, այսինքն՝ ուղղակի դիտավորությունը: Ա. Ավետիսյանի կողմից որևէ կոչ, որևէ առաջարկություն ուղղված հայ ազգին, այդ ազգերի նկատմամբ որևէ գործողություն կատարելու վերաբերյալ չի՝ հնչել: Արմեն Ավետիսյանը մեղադրվում է 2003-2005 թվականը ընկած ժամանակահատվածում կատարած հրապարակումների համար, մինչդեռ ՀՀ տարածքում որևէ հակահրեական և հակաքրդական ակցիա այդ ժամանակահատվածում չի արձանագրվել: Չի արձանագրվել որևէ թշնամանք կամ բռնություն: Որևէ հիմնավոր կասկած չկա, որ այդ ելույթների պահին կամ դրանից առաջ հակահրեական և հակաքրդական տրամադրություն է տիրել ՀՀ-ում: Իմ պաշտպանյալին առաջադրված մեղադրանքը կրում է ձևական բնույթ, այնքանով, որքանով իմ պաշտպանյալն արտահայտել է իր սեփական կարծիքը: ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածում սահմանվում է, որ յուրաքանչյուր ոք ունի ազատ արտահայտվելու իրավունք: Այդ իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և սահմաններից անկախ: Նույն հոդվածի երկրորդ մասը սահմանափակում է այս ազատությունների իրականացումը: Սահմանափակումը պետք է լինի օրենքով նախատեսված, անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում, ի շահ պետական անվտանգության, հասարակական անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու նպատակով և լինի սուր սոցիալական կարիք: Բայց արդյո՞ք կա սուր սոցիալական կարիք Արմեն Ավետիսյանի խոսքի ազատությունը սահմանափակելու համար: Իհարկե չկար, հատկապես, երբ Արմեն Ավետիսյանը իր հրապարակումներում օգտագործել է արդեն իսկ հրապարակած գաղափարներ: Արմեն Ավետիսյանի հրապարակումները հայտնագործություն չէին: Հատկապես, երբ նա այդ հրապարակումներում արել էր համապատասխան հղումներ աղբյուրներին: ՄԻԵԿ-ը իր նախադեպերում արձանագրել է, որ արդեն իսկ հրապարակված նյութերի հրապարակումները չեն կարող դիտվել որպես այլոց իրավունքների և հեղինակության դեմ ուղղված գործողություն: Արմեն Ավետիսյանի կողմից կատարված հղումները եղել են հանրության համար մատչելի գրականությունից: Քրեական գործի նյութերից ակնհայտ է, որ Արմեն Ավետիսյանի հրապարակումներում առկա կարծիքներն ու գաղափարները ոչ թե ուղղված են հրեա կամ քուրդ ազգի, այլ՝ սիոնիզմի, մասոնականության գաղափարախոսության դեմ: (Ոչ բոլոր սիոնիստներն են հրեա և ոչ բոլոր հրեաներն են սիոնիստ, ոչ բոլոր մասոններն են հրեա և ոչ բոլոր հրեաներն են մասոն): Այստեղից հետևություն, որ բացակայում է նաև հանցագործության օբյեկտը, այսինքն՝ ազգային թշնամանք հարուցելու մասին խոսք լինել չի կարող: Ինչ վերաբերում է մեղադրողի կողմից վկայակոչված հոդվածներում առկա ազգային թշնամանք հարուցելու փաստին, ապա հարկ էմ համարում նշել, որ Ա. Ավետիսյանի կողմից տրված ասուլիսներում և հարցազրույցներում խոսվել է ջիոդամասոնականության և սիոնիզմի մասին: Ա. Ավետիսյանը հրապարակել է արդեն իսկ հրապարակած տվյալներ և կարծիքներ: ՀՀ քր. օր.-ի սուբյեկտիվ կողմը բնութագրվում է միայն ուղղակի դիտավորություն, մեղադրանքի կողմը չներկայացրեց որևէ ապացույց, որով ապացուցեք իմ պաշտպանյալի արարքում առկա ուղղակի դիտավորությունը: Ելնելով վերոգրյալից՝ ՄԻՋՆՈՐԴՈՒՄ եմ դատարանին կայացնել արդարացման դատավճիռ և Ա. Ավետիսյանին ազատ արձակել դատարանի դահլիճից:

## **Արմեն Ավետիսյանի պաշտպանական խոսքը 2005թ. մարտի 18-ի դատավարությանը՝ Կենտրոն և Նորք-Մարաշ 1-ին ատյանի դատարանում**

Այսօր փորձ է արվում ինձ մեղադրել՝ հրապարակայնորեն և մամուլի միջոցներով ազգամիջյան թշնամանք հրահրելու մեջ, դիցուկ՝ հրեաների և քրդերի նկատմամբ: Նախապես ասեմ, որ այս տրամաբանությամբ ինձ կարելի է մեղադրել նաև թուրքերի, ադրբեջանցիների, վրացիների, պարսիկների, ռուսների, ամերիկացիների, եվրոպական ամենատարբեր ազգերի ու նաև այլ ազգերի նկատմամբ թշնամանք հրահրելու մեջ, որովհետև պատմա-քաղաքական վերլուծություններ արվել են նաև նրանց նկատմամբ, որը, չգիտես ինչու, այս դեպքում մեղադրանքում նշված չէ: Ինչևէ, անցնենք բուն նյութին: Որպես թշնամանք հրահրելու ապացույցներ բերված են մամուլի միջոցներում իմ տված հարցազրույցներն ու հոդվածները, որոնք, կրկնում եմ, պատմա-քաղաքական վերլուծություններ են՝ հենված պատմա-գիտական փաստարկների, եղելությունների վրա: Իմ մտքերն արտահայտում են հիմնականում վաղուց տպագրված գիտական աշխատությունների կամ պատմական փաստերի վրա հիմնված նյութերի տեսակետները և գրեթե կրկնություններ են տասնամյակներ, նույնիսկ հարյուրամյակներ առաջ արտահայտած նման մտքերի: Այդ մտքերն ու արտահայտողները որևէ ժամանակաշրջանում չեն պատժվել, միգուցե քննադատվել են, սակայն նույնկերպ՝ հրապարակայնորեն, բայց, երբեք չեն կալանավորվել ու հիմա ավելի քան տարօրինակ է, որ նման մտքեր արտահայտելու կամ կրկնելու համար տեղի է ունենում այս դատավարությունը:

Ինձ մեղադրող կողմի ներկայացրած նյութերում և որպես վկա քննված լրագրողների վկայություններում ես հիմնականում մեղադրվում եմ հակահրեականության քարոզի, հրեա ազգի պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելու, ջհուղներ և զավթիչներ, բնատուր խարդախներ կամ ջհուղա-մատոններ տերմիններ օգտագործելու մեջ:

Նախ, միանգամից մերժում եմ մեղադրանքի ձևի ու բովանդակության այս տեսակետը, որովհետև ես նպատակ ու խնդիր չունեմ որևէ ազգի նկատմամբ թշնամանք հրահրելու առումով, այն, ինչ անում ենք ես և հայ ազգայնականների մեծամասնությունը և՛ այսօր, և՛ նախկինում, հայությանը զգոն և սթափ պահելու, իր դարավոր պատմության հատկապես դառը փորձից դասեր քաղելու նպատակով է, որպեսզի կրկին ու կրկին անգամ չսխալվենք և չկորցնենք մեր պետությունն ու ազգային նկարագիրը: Մա զուտ ինքնապաշտպանական քաղաքականություն է, վկա՝ բազմաթիվ պատգամավորների, մտավորականների ու գիտնականների հասարակական ու քաղաքական ուժերի, մամուլի շատ միջոցների ու, պարզապես, հայ քաղաքացիների աջակցությունն ինձ: Այս մարդկանցից շատերը ոչ միայն կիսում են իմ տեսակետները, այլև իրենք էլ են արտահայտում սեփական նման տեսակետները, ավելին՝ շատերն ինձանից ավելի շուտ են արտահայտել իմ այսօրվա մտքերը:

Հիմա անցնենք մեղադրանքին վերաբերող մասին: Նախ անդրադառնամ վկաների ցուցմունքներին: Այստեղ «Առավոտ» թերթի լրագրող Աննա Իսրայելյանը, «Ար» հեռուստաընկերության նախկին լրագրող Արծրուն Պեպանյանը, «Հայկական Ժամանակ» թերթի լրագրող Ավետիս Բաբաջանյանը և ՀՀ-ում հրեական համայնքի ղեկավար Ռիմա Վարժապետյանը փորձում են հիմնավորել կամ տեսակետ են հայտնում, թե ես արտահայտել եմ հակահրեական մտքեր, որոնք, իբր, վտանգ են ներկայացնում: Նրանց տեսակետները չեն կիսել, կամ այդպես չեն մտածում «Առավոտ» թերթի լրագրող Նելլի Գրիգորյանը, «Իրավունք» թերթի լրագրող Փիրուզա Մելիքսեթյանը, Հայաստանի եզդիների միության նախագահ Ազիզ Թամոյանը և «Քուրդիստան» կոմիտեի նախագահ Չարքյազ Ռաշ Մստոյանը («Հայոց Աշխարհ», 23.02.2005թ. և «Իրավունք», մարտի 10-16. 2005թ.):

Աննա Իսրայելյանը օրինակ է բերում մամուլի ազգային ակումբում ՌԴ նախագահ Վ. Պուտինին ուղղված իմ կոչը, որում ես իմ տեսակետն եմ հայտնել, որ ՌԴ նախագահը փորձում է դիմագրավել համաշխարհային գաղտնի կառավարության, այսինքն՝ միջազգային կապիտալին տիրող ուժերի կամ ինչպես տասնամյակներ ընդունված է ասել՝ ջհուղա-մատոնական ուժերի ազդեցությանը: Այդ ժամանակ և հիմա էլ Վ. Պուտինը պայքարում էր դրսի ուժերի կողմից ֆինանսավորվող, այսպես կոչված, օլիգարխների



կլանի դեմ և սա արձանագրված փաստ է, այդ օլիգարխները հիմնականում հրեաներ են՝ Բերեգովսկի, Գուսինսկի, Խոդորկովսկի... և այլք: Մենք նրան հայտնել ենք մեր աջակցությունը: Այստեղ վիրավորականը համարվում է ջիուդա-մասոնական տերմինը: Թե ինչ է մասոնությունը, որպես գաղտնի կազմակերպություն, տոննաներով գրականություն կա հատկապես Ռուսաստանում և Արևմուտքում տպագրված, և այստեղ այդ մասին ծավալվելու հարկ չկա: Իսկ թե ինչ է ջիուդությունը, ապա այստեղ պարզաբանելու խնդիր կա, քանի որ այս եզրը՝ տերմինը, քիչ է մեկնաբանված մեզանում: Իրենք հրեաները նույնպես չեն ընդունում և նույնիսկ վիրավորական են համարում այս արտահայտությունը, և ճիշտ էլ անում են, քանի որ սա վերաբերում է սիոնիստներին և սրան համարժեք տերմին է: Այսինքն, ջիուդա-մասոնական ասելով պետք է հասկանալ սիոնիստա-մասոնական: Այո՛, սիոնիստները հրեաներ են, բայց դա հրեական ժողովուրդը չէ և պետք չէ շփոթել, չնայած հաճախ շփոթը ակամա է առաջանում: Այն, որ սիոնիզմը հրեական ռասիստական գաղափարախոսություն է, ոչ մեկի համար գաղտնիք չէ, չնայած սրա համար ոչ մի հրեա չի դատապարտվել: Աշխարհին է հայտնի սիոնիզմի այլամերժությունն ու ցեղամոլությունը, որը երկար ժամանակ միջազգային կյանքում արգելված գաղափարախոսություն էր: Եվ այն հրեաները, որոնք ապրում և ծառայում են այդ այլամերժական, աշխարհակուլ գաղափարախոսությանը, նրանք էլ դարեր շարունակ կոչվում են ջիուդներ: Այս տերմինը ես չեմ հնարել, սա տասնամյակներ շարունակ օգտագործվում է բոլոր երկրներում, ամենատարբեր մեկնաբանություններում: Եվ այստեղ խոսքը հրեա ժողովրդի մասին չէ, այլ նրա այն ներկայացուցիչների, որոնք կրողն են այս ռասիստական-ցեղամոլական գաղափարախոսության: Եվ սա չպետք է ընդունել վիրավորանք կամ ազգամիջյան թշնամանքի հրահրում: Խոսքն այդ գաղափարախոսության և այն կրողների մասին է:

Նույնն առկա է նաև Արծրուն Պեպանյանի ցուցմունքում: Նա ևս չի ըմբռնել ջիուդա-մասոնական տերմինի իմաստը և դա համարել է հակահրեականություն, որովհետև որևէ լուրջ փաստարկ չունի այլևս: Նա նշում է, որ հաղորդումից առաջ ինձ ասել է, որ չանեմ հակահրեական արտահայտություններ, սակայն, ես ցանկացած նման հարցադրման պատասխանում եմ, որ մի հարցրեք՝ չպատասխանեմ, որովհետև, եթե տրված է հարց, ապա պահանջվում է պատասխան: Իսկ ինչ մնում է, որ նա ջիուդա-մասոնական և սիոնիստական հասկացությունները, որոնք արդեն նշեցի, պարզապես գաղափարախոսություններ են, խառնում է հրեա էթնոսի հետ, դա առավել քան ակնհայտ է:

Գրեթե նույնն է Ավետիս Բաբաջանյանի ցուցմունքում առկա մեկնաբանությունը: Այստեղ էլ նույն տերմինների խառնաշփոթն է ու չիմանալու պարագան: Եվ ես այս մասին անհատապես ասել եմ նրան: Այն, որ ես երիտթուրքերի ղեկավարների մի մասին վերագրել եմ հրեական ծագում և տվել այդ ժամանակաշրջանի պատմա-քաղաքական վերլուծությունը, դա արդեն հիմնավորված է հայտնի պատմաբան Ջոն Կիրակոսյանի «Երիտթուրքերը պատմության դատաստանի առջև» երկհատորյակում, նաև հայ և օտարերկրյա գիտնականների տարբեր աշխատություններում (դատարանին եմ հանձնում «Թուրքիան, սիոնիզմը, մասոնները և Հայոց ցեղասպանությունը» աշխատությունը): Եվ առկա փաստերի հիման վրա ես Հայոց ցեղասպանության մեջ մեղադրում եմ նաև սիոնիստ հրեաներին, քանի որ չկար դեռևս Իսրայել պետությունը, որ մեղադրելի պետական իշխանություններին, ինչպես մեղադրում եմ ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և այլ երկրների կառավարություններին, որոնք չմիջամտեցին՝ կանխելու, ուրիշներն էլ գաղտնի օժանդակեցին՝ կազմակերպելու Հայոց ցեղասպանությունը: Հենց այդ ժամանակ էլ սիոնիստական կուսակցության պարագլուխները սկիզբ դրեցին այն ժամանակվա Հայաստանում բնակվող հրեա ժողովրդի մի հատվածի ռասիստական հակումների առաջացմանը, այսինքն՝ սիոնիզմի գաղափարախոսությամբ ապրելուն ու առաջնորդվելուն: Հայտնի է, որ սիոնիզմը քարոզում է հրեա ազգի ընտրյալությունը, մյուս ազգերի ստորադասությունը հրեա ազգի նկատմամբ և ահա, այս վտանգի մասին եմ ես ահագանգում և՛ հայությանը, և՛ համայն մարդկությանը, նաև՝ հենց հրեությանը: Այս առումով հակահրեական տերմինը ավելի շատ շահարկվում է որոշ լրագրողների կամ օտար պատվիրատուների կողմից, և նման երևույթ, իմ կարծիքով, չկա Հայաստանում, և սա կամ չհասկացվածության հետեվանք է կամ, կրկնում եմ, ինչ-որ ուժերի պատվեր է ու թելադրանք: Ինչպես ես կամ Հայ Արիական Միաբանության անդամները, այնպես էլ բոլոր նորմալ մարդիկ չեն ցանկանում լինել ստրուկ որևէ օտար գաղափարախոսության, ասենք՝ սիոնիզմի կամ պանթուրքիզմի, կամ որևէ ազգի ստրուկ՝ դիցուք՝ հրեաների, որոնց ընտրյալությունը և գերակայությունը ամրագրված է սիոնիստական գաղափարախոսության մեջ:

Նույն մեկնաբանություններն են նաև Ռիմա Վարժապետյանի ցուցմունքների մեջ: Սակայն նա նշում է, թե

իբր ես կոչ եմ արել հրեաներին վտարել Հայաստանից: Մա կեղծ տեղեկատվություն է: Այս տեսակետը առաջացել է «Առավոտ» թերթում սպագրված «Ո՞րն է Հայաստանի սահմանը» հոդվածից, Նելլի Գրիգորյանի հետ իմ հարցազրույցից: Այստեղ թղթակիցը նշել է. «...ազգային փոքրամասնություններին, որոնք իրենց գոյությամբ կվտանգեն հայոց պետականությունը՝ պիտի հեռանան մեր հայրենիքից», սակայն տեքստում բաց է թողնվել մի կարևոր բառ՝ «ներկայացուցիչներին», որը, կարծում եմ, սայթաքում է, և պիտի գրվեր «փոքրամասնությունների ներկայացուցիչներին»: Այս բացթողմանը, ցավոք, ուշադրություն չեմ դարձրել, և հետագայում էլ այն կրկնվել է մամուլում: Այնուհետև Ռիմա Վարժապետյանը նշում է, թե Հայաստանի հրեաները, հատկապես երիտասարդությունը ահ ու սարսափի մեջ են: Մակայն, այդ ահ ու սարսափը որևէ կերպ չի երևում: Իսկ այն, որ հրեաներ են հեռանում Հայաստանից, ապա ի՞նչ է, հայեր, եզդիներ, քրդեր, ասորիներ, հույներ կամ այլ ազգերի ներկայացուցիչներ չե՞ն հեռանում, ի՞նչ է, այս բոլորի պատճառը ե՞ս եմ կամ Հայ Արիական Միաբանությունը: Բիարկե՛ն չ: Պատճառներն ամենատարբեր են, չկա նաև որևէ դեպք կամ փաստ, որ Հայաստանում վիրավորել են որևէ հրեայի կամ ավելին՝ վնասել: Եվ հրեական համայնքի ղեկավարի, այսպես կոչված, փաստարկները որևէ հիմք չունեն: Հայ և հրեա ազգերի մեջ մեզանում թշնամանք չի հրահրվում, իսկ իմ վերը նշած պատմական փաստերի վերլուծությունը, որը ինչպես հրեաներին, այնպես էլ բազմաթիվ այլ ազգերի ու պետությունների է վերաբերում և կոչ է հայությանը՝ այսօր էլ զգոն մնալու, հաշվի առնելով պատմական դառը փորձը, երբեք չի կարող թշնամանքի հրահրում համարվել: Այլապես շատ գիտնականներ, մտավորականներ, լրագրողներ հետմահու կամ հիմա էլ պիտի կանգնեն նման դատավարությունների առջև, որը այլ հարթության մեջ կմղի այս հարցը: Ի՞նչ էք կարծում, էթե հրեաները, ենթարկված լինելով ցեղասպանության, չեն ճանաչում Հայոց ցեղասպանությունը, ավելին՝ շատ երկրներում լոբբինգով խանգարում են ճանաչմանն ու դատապարտմանը, դրանով կամա թե ակամա հերքելով ցեղասպանության փաստը, և այսպիսով աջակցում են թուրքերին, մենք իրավունք ունե՞նք մտածելու, որ նրանք վիրավորում են մեր պատիվն ու արժանապատվությունը: Ռիմա Վարժապետյանի և ուրիշների տրամաբանությամբ՝ այդ՝ ունենք, և ինչ է՝ առաջնորդվե՞նք այդ տրամաբանությամբ: Իսկ այս մասին խոսելը հակահրեականությունն է: Բիարկե՛ն ոչ: Վերը նշված ցուցմունքներում առկա է նաև հետևյալ մեջբերումը, թե՛ «վտանգված է այն երկրի ապագան, ուր կա հրեական համայնք»: Մա այն մեխն է, որից կառչում են և՛ վկաները, և՛ ինձ պաշտոնապես մեղադրողները: Մակայն, իմ ասածը ունի հետևյալ պարզ իմաստը.

1. Հրեական սիոնիստական գաղափարախոսությունը առաջնորդվելով հրեա ազգի ընտրյալության մեկնությամբ, լրջորեն վտանգում է ցանկացած ազգի և պետության գոյությունը՝ ապագան: Որտեղ հրեաները դավանում են այս գաղափարախոսությունը՝ բացահայտ կամ թաքնված կերպով, այնտեղ էլ առկա է այդ վտանգը: Իսկ մենք չենք բացառում, որ հրեական համայնքներում կարող են լինել սիոնիստներ: Իրավունք կա՞ կարծելու... Բիարկե՛ն այդ:
2. Հրեական Թավրուդի օրենքներում նույնպես առկա է, մեղմ ասած, այլամերժության գաղափարը՝ այլ ազգերին և նրանց դավանանքները ստորադասելու յուրօրինակ մեկնաբանությամբ: Մա էլ հավատամքային վտանգ է: (Մի քանի մեջբերումներ Թավրուդից. ա) քրիստոնյայի սպանությունը ընդունված բան է, և քրիստոնյայի հետ կնքված համաձայնության ապահովումը պարտադիր չէ հրեայի համար: բ) Քրիստոսը ապօրինի զավակ է, որով նրա մայրը հղիացել է՝ երբ գտնվել է դաշտանի ժամանակ շնություն գործելով: գ) քրիստոնյաները սատանայի որդիներ են, իսկ եկեղեցին՝ սատանայի ու աղտեղության տուն, սրբերը որձեւեք են, քարոզիչները՝ հաչող շներ, սրբուհիները՝ պոռնիկներ, Ավետարանները՝ չարի և սատանու գրքեր ու ստեր, որոնք պետք է ոչնչացնել, քրիստոնեական տոները ոչնչության և հրեաների բնաջնջման տոներ են, կիրակի օրը աղետի օր է: դ) Հրեային հալալ է տիրել ոչ հրեաների ունեցվածքին, փողին և ֆիզիկական ուժին: ե) Ով Բարայելցի է անպատվում՝ անպատվում է ամենասուրբ Աստծո դեմքը: զ) Աստված ոչ-հրեաներին ստեղծել է մարդկային կերպարանքով՝ հրեաներին ծառայելու համար, նրանք անասուններից տարբերվում են ըստ ձևի միայն...)
3. Նախկինում Աստվածաշնչում, այսօր էլ եկեղեցական էկումենիստական փաստաթղթում առանց հիմնավորումների կրկնվում է հրեական ընտրյալության թեզը, որը դարձել է կրոնական պարտադրանք, հատկապես քրիստոնյաների համար: (Մեջբերում «Էկումենիկ ուղեգծի» 10-րդ կետից. «Յուրահատուկ մի միասնություն կապում է մեզ հրեա ազգին, որի հետ Աստված հավիտենական ուխտ է կնքել: Հավատքով գիտենք, որ մեր հրեա քույրերն ու եղբայրներն «Աստուծո սիրելի են իրենց հայրերի սիրույն համար: Որովհետև Աստուծո պարգևներն ու կոչումը անդառնալի են» (Հռովմ. ԺԱ 28-29): Նրանք ունեն «որդեգրությունը, փառքը, ուխտերը, օրենսդրությունը, պաշտամունքը և խոստումը: Նրանցն են հայրերը,

նրանցից և՛ ըստ մարմնի Քրիստոս (Հռովմ. Թ 4-5): Մենք պախարակում ենք և դատապարտում հակասեմականության բոլոր արտահայտությունները, ինչպես ատելության պոռթկումներն ու հալածանքները: Քրիստոնեական հակահրեականության համար հայցում ենք Աստուծուց ներողամտություն, իսկ մեր հրեա քույր-եղբայրներից՝ հաշտություն»»: Իսկ հրեական հակահայկականության համար ո՞վ պիտի ներողամտություն հայցի...)

Այս ամենը հաշվի առնելով՝ վտանգ եմ տեսնում ինչպես մեր աշխարհիկ կյանքում, այնպես էլ՝ հոգևոր, և երկու դեպքում էլ ես ոչ թե հրեա ժողովրդին հալածելու կոչ եմ անում, այլ՝ զգուշացնում եմ հայությանը, որ սիոնիստական, այն է՝ ջհուդական և մասոնական գաղափարախոսությամբ վտանգվում է մեր աշխարհիկ կյանքը, իսկ էկոմենիստական կոչված պարտավորությամբ՝ հայության հոգևոր կյանքը, և երկու դեպքում էլ մենք և մյուս ազգերը ստորադասվում ենք հրեա ժողովրդի մոտ, որը ես և շատ-շատերը, աշխարհի բազմաթիվ մտավորականներ համարում ենք վտանգավոր, նվաստացուցիչ և կործանարար երևույթ: Ուստի, իմ ասածը, թե՛ որտեղ կա հրեական համայնք՝ վտանգվում է այդ երկրի ապագան, այս տեսակետներից է բխում, որ նրանք կարող են դավանել սիոնիզմ, առաջնորդվել Թալմուդով կամ էկոմենիստական փաստաթղթով, որը հղի կլինի վտանգներով (իսկ հրեա ռաբինները զոնե հաստատ առաջնորդվում են Թալմուդով): Եթե խոսքս այս տեսանկյունից ծայրահեղ է հնչում, ցավում եմ, բայց իսկապես դիտավորություն չեմ ունեցել մի ամբողջ ազգի վիրավորել, և դրա կարիքը երբեք չկա, այլ փորձել եմ զգուշացնել հայությանը՝ թվարկաժու վտանգների մասին: Պատկերացնենք մի պահ, որ ՀՀ-ում ներկայումս բնակվում են թուրքեր և ադրբեջանցիներ, ու ես զգուշացնում եմ հայությանը, որ այս համայնքներից զգույշ եղեք, որովհետև նրանց առկայությամբ վտանգվում է մեր երկրի ապագան, որովհետև նրանք մեզ ցեղասպանության են ենթարկել, ասենք՝ 1915թ. ցեղասպանությունը կամ Սումգայիթյան ռճիրը հաշվի առնելով ու նաև հայրենիքի կորուստ ենք ունեցել, երբ որ մենք նրանց տեղ ենք տվել կամ էլ նրանք բռնությամբ են ներխուժել մեր պատմական հայրենիք, ասենք՝ Արևմտյան Հայաստան կամ Արցախ և ապա կոտորել են մեզ պարբերաբար կամ ձուլել: Ի՞նչ է սա, թշնամանքի հրահրո՞ւմ է, թե՞ պատմական դառը փորձի վրա հենված զգոնության, սթափության կոչ: Ի՞նչ է հայության ավելի քան 90%-ը պիտի դատապարտվի՞ նման մտածողության համար: Իհարկե՛ ո՛չ: Եթե սիոնիստա-մասոնական վտանգների հարցում հայության 90%-ը տեղյակ չէ դեռևս, ի՞նչ է, ուրեմն պիտի լինի՞ նման դատավարություն: Իհարկե՛ ոչ: Ինչ մնում է «Հայոց ցեղասպանության կազմակերպիչները հանդիսանում են սիոնիստները՝ հրեաները», ապա դա արդեն նշեցի՝ երիտթուրքերի մի մասի հրեական ծագման, և սիոնիստների՝ թուրքիան հեռահար նպատակներով կազմալուծելու պատմական փաստերին է առնչվում: «Բնատուր խարդախներ» տերմինը նույնպես սիոնիզմի քարոզիչներին է վերաբերում, որոնք հրեա ժողովրդի մեջ խարդախությամբ սերմանում են իրենց չիմնավորված ընտրյալության գաղափարները: Հետաքրքիր է, որ հիմնականում երեք ազգեր են խոսում ընտրյալության մասին՝ հայերը, հրեաները և ճապոնացիները: Եթե վերջին երկուսը իրենք են իրենց մասին այդպես ասում, ապա հայերի մասին ասում են հարևան հնագույն ժողովուրդները, հատկապես շումերները՝ իրենց դյուցազներգություններում, պատմություններում, իսկ Արարատյան կամ Հայկական լեռնաշխարհը հենց արարչության, փրկության օրրան է ի սկզբանե և հին ազգերը այն կոչել են Մարդու և Աստծո Հավիտենական Ուխտի Երկիր, Մուրբ Օրենքների Երկիր և այլն: Ահա, այստեղից էլ բխում է այն մեջբերումը, որն արված է մեղադրանքի մեջ, թե «Հրեաները ցանկանում են հայերին հեռացնել Հայկական լեռնաշխարհից», «ցանկանում են զավթել Հայոց Բնօրրանը, տեղահանել և ոչնչացնել բնիկ հայերին և տեղը լցնել ուրիշներով»: Այս մեջբերումներն արված են ամերիկահայ մտավորական Ռոզա Արվահիի մի հոդվածից, և այս ամենը նա ընդամենը կրկնել է՝ մեջբերելով հատվածներ հայտնի բրիտանական հետախույզ, ազգությամբ հրեա Լուսրենս Արաբացու հարցազրույցից, որը մի քանի անգամ տասնամյակների ընթացքում վերահրատարակվել է «Այդ անտանելի հայերը» վերնագրով: Նա գտնում է, որ Հայաստանը պիտի բաժանվի տարբեր ազգերի միջև, իսկ հայերին պիտի սփռել աշխարհով մեկ ու Հայաստանը լցնել օտարներով: Մա բազմիցս փորձել ու փորձում են իրականացնել: Ռոզա Արվահիին իր հոդվածում նշում է նաև, որ Իսրայելի նախկին վարչապետ Բեգինը, երբ պաշտոնում էր, հայտարարել է, թե հրեաների հայր Աբրահամը 40 տարի ոչ թե Սինայի անապատներում է թափառել, այլ՝ Արցախի լեռներում, և սա իրավացիորեն համարել էր ոտնձգություն հայոց Արցախի, հայկական պատմական հողերը, այսպես ասած, «պատմականորեն» զավթելու առումով: Այս ամենը և էլի բազմաթիվ նման հանգամանքներ հաշվի առնելով՝ կարող ենք հետագայում թվարկել... Եթե կարիք լինի, մենք հայտարարել ենք, որ «ջհուդա-հրեության (այսինքն՝ սիոնիստ հրեաների) աշխարհակործան տիրապետությանը կարող է վերջ տալ միայն Արարչածին ամենահնագույն ազգը՝ հայ

ազգը և սա քաջ հայտնի է հուղագուններին, ուստի սրանք հազարամյակներ շարունակ իրենց բնատուր խարդախությամբ դավեր են նյութում Հայաստանի դեմ»: Այո՛, կրկնում եմ, բոլորին է հայտնի, որ Արարատյան լեռնաշխարհը մարդկության ծագման, փրկության օրրանն է և բնիկները՝ հայերը միայն, կարող են պատմական փաստերի հիման վրա հիմնավորել սիոնիստ հրեաների կեղծ ընտրյալության սիոնիստական գաղափարախոսությունը ու վերջ տալ այդ բնատուր, այսինքն, ի սկզբանե խարդախների ծավալմանը, որը վտանգում է ոչ միայն հայության ապագան: Այո՛, դարեր շարունակ ընթանում է այս պայքարը, անկախ նրանից, թե ինչ անունով են հանդես եկել ներկայիս սիոնիստները և նրանց նախորդները: Այս ամենը պատմա-գիտական լուրջ բանավեճ է և կան բազմաթիվ հրապարակված նյութեր, ու այսօր մենք դրանք կիրառում ենք հայ ազգայնական քաղաքականության մեջ ոչ թե այս կամ այն ազգին վարկաբեկելու համար, այլ՝ ինքներս մեզ և մեր հայրենիքին տեր լինելու, ազատ, առանց օտարի աշխարհիկ գաղափարական կամ հոգևոր իմաստով կախման մեջ ապրելու: Այլ մտադրություններ, ես էլ չեմ ունեցել ու չունեմ և սույն մեղադրանքը, մեղմ ասած, չափազանցված է ու անհիմն: Այսքանից հետո մեջբերում եմ ամերիկյան անկախության կերտիչներից Բենիամին Ֆրանկլինի էլոյթից հատված, որն ասվել է Ամերիկայի ազգային համագումարում 1789թ. «ԱՄՆ-ին սպառնացող ահավոր վրտանգ կա. դա հրեաներն են: Այն բոլոր երկրներում, ուր հայտնվել են հրեաները, աշխատել են քանդել նրանց բարոյական հիմքերը, սրանց նպատակն է տիրել տնտեսական շարժին՝ ինչ արեցին Իսպանիայում և Պորտուգալիայում: Նրանք 1700 տարուց ի վեր լացում են իրենց վատ բախտը ու հավակնում են ասել, թե վտարվել են իրենց հայրենիքից: Նրանք տգորկներ են: Եթե մենք չկարողանանք նրանց սահմանադրորեն դուրս դնել մեր երկրից, նրանք հոսելու են մեր երկիրը՝ տիրելու նրան, քանդելու մեր հաստատությունները՝ մինչև մեր երեխաները նրանց երեխաների ծառաները դառնան»:

Ինչ մնում է Փիրուզա Մելիքսեթյանի և Ազիզ Թամոյանի ցուցմունքներին, ապա այո՛, նրանք իրականում հասկացել են այս ամենը և «Իրավունք» թերթի լրագրողը նույնիսկ կիսում է իմ մտահոգությունները և ճիշտ է մեկնաբանում ԱՄՆ-ի պետդեպարտամենտի վերջերս հրապարակած զեկույցը՝ հակասեմականության մասին: Իմիջիայլոց, սեմական ծագում ունեն նաև արաբները, ասորիները և այլք, սակայն, չգիտես ինչու, հակասեմական և հակահրեական տերմինները նույնացված են և սա ևս խտրականության դրսևորում է, որը սակայն այլ թեմա է:

Ազիզ Թամոյանի հետ մենք վաղուց ենք պարզաբանումներ արել և նա էլ է կիսում իմ այն տեսակետը, թե ազգային փոքրամասնությունների այն ներկայացուցիչները, որոնք վտանգում են Հայոց պետականությունը, անկախ նրանից եզդի են, քուրդ, թե այլ ազգ, անգամ՝ հայ, պիտի լքեն կամ վտարվեն Հայաստանից: Սա տեսակետ է Հայաստանը վտանգողների հետագայի նկատմամբ, և ոչ թե ազգերի նկատմամբ թշնամանքի հրահրում, որը հաստատում է նաև Ազիզ Թամոյանը (հատկապես՝ մամուլի հրապարակումներով):

Ինչ վերաբերում է քրդերի նկատմամբ թշնամանքի հրահրմանը, որն ավելացավ իմ քր. գործի կեսից, ապա ասեմ, որ սա էլ է հիմնված. «Ո՞րն է Հայաստանի սահմանը» հոդվածում նշված սխալ այն ձևակերպման վրա, որում բաց էր թողնված «փոքրամասնությունների ներկայացուցիչներին» մասը: Ասեմ նաև, որ մենք բողոքել ենք մեր պետական համապատասխան մարմիններին, որ Մոսկվայում հրատարակվող քրդական ռուսալեզու «Դրուժբա» ամսագրի մի համարում տպագրվել է քարտեզ՝ «Քուրդիստան» անվանումով, որում ներգրավված են տարածքներ ինչպես ներկայիս ՀՀ-ից, այնպես էլ՝ պատմական Հայաստանից, նաև տարածքներ Իրանից, Սիրիայից և Իրաքից, ու այս քարտեզը տարածվել է ՀՀ-ում: Այսօր մեզ մոտ տպագրվող քրդական հայալեզու «Միջագետք» թերթի էջերում պարբերաբար տեղադրվում է այդ քարտեզը: Մենք սա նույնպես վտանգ ենք համարում մեր պետականության և ազգի համար ու այս մասին խոսելով և քննադատելով ոչ թե թշնամանք ենք սերմանում քրդերի նկատմամբ, այլ՝ պահանջում ենք տարրական հարգանք մեր ազգի ու պատմության նկատմամբ, և որպեսզի այլևս չխեղաթյուրվեն պատմական փաստերը: Առավել ևս, որ նրանք այսօր ապրում են ՀՀ-ում և ոչ ոք նրանց չի նեղացնում: Ելնելով այս ամենից՝ ես ՀՀ-ում բնակվող բոլոր ազգային փոքրամասնություններին կոչ եմ արել այք չտնկել մեր պատմական հայրենիքի որևէ հատվածի վրա, հարգել մեր ավանդույթներն ու հավատամքը, և մենք պատրաստ ենք հաշտ ու համերաշխ ապրել բոլորի հետ անխտիր, կողք-կողքի: Ես նաև ասել եմ, որ Հայաստանը նրանց ծննդավայրն է կամ պետությունը, որի հավասարազոր քաղաքացիներն են իրենք սահմանադրորեն, սակայն Հայաստանը միայն հայերի հայրենիքն է և սա վիրավորական չէ: Ոչ մի սփյուռքահայ իր հայրենիքը չի համարում իր բնակության վայրը, նրա հայրենիքը Հայաստանն է: Այստեղ նույնպես նվաստացուցիչ հանգամանք չկա և չի կարող լինել. հայրենիքը մեկն է, ինչպես՝ մայրը: Ես

կարծում եմ, ճիշտ չէ, երբ արգելափակման են տանում հատկապես այն խոսքը, միտքը, տեսակետը, որը հենված է պատմական իրողությունների վրա: Ժողովրդավարական համարվող այս պայմաններում, երբ ով ինչ ուզում խոսում է, գրում է, և ինչպես ուզում իրեն դրսևորում է կյանքի ամենատարբեր ոլորտներում, ճիշտ չեմ համարում ինձ կամ հայ ազգայնականությանը խոսքի, կարծիքի, գործելու իրավունքից զրկելու մղումը, ավելին՝ դա համարում եմ, մեղմ ասած՝ վնասակար մեր ազգի ու պետության գոյատևման ու հարատևման, հայի առաքելության իրականացման տեսանկյունից: (Մի հատված «Իրավունք» թերթի հրապարակումից. «Նկատի ունենալով Հայաստանի «Հայ-Արիական» կուսակցության նախագահ Արմեն Ավետիսյանի հրապարակումները և ելույթները, «Քուրդիստան» կոմիտեի նախագահն ասաց. - Երբ դրանք նայում ենք խորքի մեջ, համոզված եմ, որ Արմեն Ավետիսյանը բնավ չի ունեցել հեռահար նպատակներ, թշնամանք հարուցելու միտում: Մեր վերաբերյալ եթե եղել են որոշ հրապարակումներ, հայտարարություններ, ապա դրանք ունեցել են զուտ պատմագիտական բնույթ: Այդ խնդիրները, ի սեր Աստծո, մենք կարող ենք քննարկել, գրուցել միասին: Այդ հրապարակումները մեր արժանապատվությանը դիպչող, արատավորող, վարկաբեկող չեն: Ընդհակառակը՝ ես Արմեն Ավետիսյանի մեկ-երկու ձևակերպման եմ հանդիպել, որոնք քրդերի առնչությամբ դրական են. օրինակ՝ այն, որ քրդերը նույնպես արիացիներ են, արիներ են, մեր բարեկամներն են: Մենք հայկական միջավայրում հայերի, Հայ Արիական Միաբանության կամ Արմեն Ավետիսյանի հետ որևէ խնդիր չենք ունեցել, չունենք և լիովին համոզված եմ՝ չենք էլ ունենալու, որովհետև դրա հասարակական, ազգային նախադրյալները չկան): Այս ամենը, ինչ մենք քննարկում ենք այստեղ, ամբողջությամբ պատմա-գիտական բանավեճ է, և, եթե ինչ-որ տեղ առնչվում է պատմաքաղաքականությանը, ապա ոչ երբեք՝ քրեական օրենսգրքին: Ընդհակառակը, մենք փորձում ենք մերժել մեր ազգի նկատմամբ որևէ այլ ազգի ընտրյալության, ռասիստական մոտեցումները, դրանք հիմնավորելով պատմական իրականության տեսանկյունից և ես, որպես քաղաքական կազմակերպության ղեկավար, ազգայնական քաղաքական գործիչ, դրանց մասին պարտավոր եմ տեղյակ պահել Հայաստանի և Սփյուռքի հայությանը, մեր հասարակությանն առհասարակ:

Հաշվի առնելով այս բացատրությունները, նաև այն, որ մեղադրանքում նշված 2003-2005թթ. ընթացքում որևէ միջադեպ կամ միջոցառում տեղի չի ունեցել այս թեմաներից բխող, և այս ընթացքում այն ծավալվել է մամուլի միջոցներով միայն, որպես բանավեճ կամ տեսակետի արտահայտում, որը որևէ հետևանք չի ունեցել, ուստի դիմում եմ դատարանին՝ կասեցնելու և՛ իմ կալանքի, և՛ քր.գործի մասին վճիռները, քանի որ կարծիք, տեսակետ և միտք արտահայտելը, պատմական փաստերի շուրջ վերլուծություններ ներկայացնելը հանցագործություն չէ հաստատապես:

Խոսքս ավարտեմ հետևյալ տեսակետով. եթե աշխարհում քննադատվում են ֆաշիզմն ու նացիզմը, ակնհայտ է, որ դա չի վերաբերվում գերմանացիներին և իտալացիներին, կան էլի նման օրինակներ, և եթե քննադատվում են սիոնիզմը և դրա այլամերժական դրսևորումները, այդ գաղափարը կրողները կամ հարողները, ապա սա չի նշանակում, թե հրեական ժողովուրդն է քննադատվում և, եթե իմ մեկնաբանությունների շուրջ կան տարակարծություններ, ապա դրանք հրապարակախոսական, գիտական երկկողմանի բանավեճերի կարիք ունեն և ոչ՝ դատավարությունների: Եթե կյանքի իրավունք ունի այն միտքը, որի դեմ ես խոսում եմ, ապա տրամաբանական է, որ կյանքի իրավունք ունի նաև իմ և ինձ նման մտածողների միտքը, որը պարզապես հակառակ տեսակետն է այդ արդեն կյանքի իրավունք ունեցող մտքի:

Եվս մեկ անգամ էլ կոչ եմ անում՝ չսահմանափակել ու չդատապարտել միտքը, այն էլ՝ մեր ազգային շահերը պաշտպանող, այն էլ ազատ ու անկախ հռչակված մեր Հայոց երկրում:

Արմեն Ավետիսյան

## **Մեղադրական եզրակացություն**

Թիվ 63200105 քրեական գործով, ըստ մեղադրանքի Արմեն Վանիկի Ավետիսյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 226 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով,

«Հայ-արիական» կուսակցության նախագահ Արմեն Վանիկի Ավետիսյանի կողմից 2003-2005 թվականների

ընթացքում հրապարակայնորեն և լրատվության միջոցներ օգտագործելով՝ հեռուստատեսությամբ ելույթներ ունենալով և թերթերում հոդվածներ հրապարակելով, հրեա ազգի և Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող հրեական համայնքի նկատմամբ ազգային թշնամանք հարուցելու փաստի առթիվ նախապատրաստված նյութերով Երևան քաղաքի դատախազությունում 21. 01. 2005թ. ՀՀ քրեական օրենսգրքի 226 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 63200105 քրեական գործը:

Քրեական գործով կատարված նախաքննությամբ հիմնավորվել է հետևյալը.

«Հայ-արիական» կուսակցության նախագահ Արմեն Վանիկի Ավետիսյանը 2003-2005 թվականների ընթացքում, հրապարակայնորեն և լրատվության միջոցներ օգտագործելով՝ հեռուստատեսությամբ ելույթ ունենալով, մամուլի ասուլիսների միջոցով, թերթերում հոդվածներ հրապարակելով, թերթերով և հեռուստացույցով հարցազրույցներ տալով, հրապարակային վիրավորանք հասցնելով, ազգերի պատիվը նսեմացնելով, ստորացնելով, մեկ ազգին մյուսի նկատմամբ առավելություններ տալով, արատավորող, վարկաբեկող և հեղինակազրկող արտահայտություններ կատարելով, Հայաստանի Հանրապետության տարածքում ատելություն ու թշնամանք առաջացնող գաղափարներ է տարածել հրեա և քուրդ ազգերի նկատմամբ՝ իր գաղափարներով ու կարծիքներով հարուցել է ազգային թշնամանք հրեա և քուրդ ազգերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող քրդական ու հրեական համայնքների նկատմամբ:

Այսպես. Արմեն Ավետիսյանը «Հայ-Արիներ» ամսագրի 2004 թ. մայիս ամսվա թիվ 9 համարի 53-րդ էջում տպագրված «Նույն ուժերը հայահալած քաղաքականություն են տանում ամենուր» վերնագրով հոդվածում բառացիորեն գրել է. «Մենք բացահայտ հայտարարում ենք, որ ջիոդա-հրեության աշխարհակործան տիրապետությանը կարող է վերջ տալ միայն ԱՐԱՐՉԱՕԻՆ ԱՄԵՆԱՀՆԱԳՈՒՅՆ ԱԶԳԸ՝ ՀԱՅ ԱԶԳԸ և սա քաջ հայտնի է հուդազուններին, ուստի սրանք հազարամյակներ շարունակ իրենց բնատուր խարդախությամբ դավեր են նյութում հայության դեմ», այնուհետև նույն հոդվածում ավելացրել է. «Մենք ազգովի պետք է անխնա լինենք այդ մտավոր կոլում և՛ թշնամիների, և՛ դավաճանների հանդեպ, իսկ անհրաժեշտության դեպքում մեր կիրառած պատիժը կարող է լինել նաև մարմնական...» և նշված արատավորող, վարկաբեկող և հեղինակազրկող արտահայտություններով ատելություն ու թշնամանք առաջացնող կոչեր ու գաղափարներ տարածելով, Արմեն Ավետիսյանը թշնամանք է հարուցել հրեա ազգի նկատմամբ:

Բացի այդ, «Հայկական ժամանակ» օրաթերթի 02. 10. 2003թ. համարի 2-րդ էջում տպագրված «Վերջ տանք ջիոդամատններին» վերնագրով հոդվածում նշված են Արմեն Ավետիսյանի հետևյալ հայտարարությունները. «Հայոց ցեղասպանության կազմակերպիչները հանդիսանում են սինիստները՝ հրեաները: Մեր ցեղասպանության համար պատասխանատու են հրեաները», «Հրեաները ցանկանում են հայերին հեռացնել հայկական լեռնաշխարհից», «ցանկանում են զավթել հայոց բնօրրանը, տեղահանել և ոչնչացնել բնիկ հայերին և տեղը լցնել ուրիշներով», որոնք արատավորելով, վարկաբեկելով և հեղինակազրկելով հրեա ազգին, ատելություն ու թշնամանք են հարուցել նրանց նկատմամբ:

Բացի այդ, «Հայկական ժամանակ» օրաթերթի 22.07.2004թ. համարի 3-րդ էջում տպագրված «Ազգայնականները Կարապետովիչի հետ են» վերնագրով հոդվածում դարձյալ նշված են հրեա ազգի պատիվը նսեմացնող, ստորացնող, արատավորող վարկաբեկող և հեղինակազրկող՝ Արմեն Ավետիսյանի կողմից կատարված հետևյալ արտահայտությունները. «Ամբողջ պատմությունը ցույց է տվել, որ ոչ մի հրեական համայնք, բացի վնասից այդ երկրին այլ բան չի տվել և դա վերաբերում է նաև Հայաստանին» ու ավելացրել է. «Բայց անկախ ամեն ինչից, մենք անելու ենք ամեն ինչ՝ չարիքը բնի մեջ խեղդելու համար»:

Բացի այդ, «Առավոտ» օրաթերթի 29.07.2004թ. համարում տպագրված «Որն է Հայաստանի սահմանը» վերնագրով հոդվածում, նշված են Արմեն Ավետիսյանի հետևյալ արտահայտությունները. «ազգային փոքրամասնություններին, որոնք իրենց գոյությամբ կվտանգեն հայոց պետականությունը՝ պիտի հեռանան մեր հայրենիքից», ինչպես նաև «Մենք գիտենք, որ որոշակի միջազգային կառույցներից բողոքներ կան: Հրեական, քրդական, եզդիական և մնացած համայնքներն են այդ ակցիան ձեռնարկել», որոնք արատավորելով, վարկաբեկելով և հեղինակազրկելով հրեա, քուրդ և եզդի ազգերին, Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող՝ նշած ազգային համայնքների և այդ ազգությունների անձանց նկատմամբ ատելություն ու թշնամանք են հարուցել:

Այնուհետև, «Իրավունք» շաբաթաթերթի 2005թ. հունվար ամսի թիվ 2 համարի թերթում տպագրված հարցազրույցում Արմեն Ավետիսյանը, նշել է. «Ես ասել, ու միանշանակ, կրկնում եմ. վտանգված է այն

երկրի ապագան, ուր կա հրեական համայնք: Նաև կրկնում եմ, Հայաստանից պիտի վտարվեն բոլոր նրանք, ովքեր քանդում են հայոց պետությունը», որպիսի արտահայտությունները արատավորելով, վարկաբեկելով և հեղինակագրկելով հրեա ազգին, ատելություն ու թշնամանք են հարուցել հրեա ազգի նկատմամբ, Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող հրեական համայնքի և այդ ազգության անձանց նկատմամբ:

«ԱԲ» հեռուստաալիքի «Ճանապարհ» հաղորդաշարի 27.09.2004թ. հաղորդման ընթացքում հրապարակային վիրավորանք հասցնելով, ազգերի պատիվը նսեմացնելով, ստորացնելով, մեկ ազգին մյուսի նկատմամբ առավելություններ տալով, Արմեն Ավետիսյանը հրեա ազգին կոչել է. «ջիռուներ», «պանթուրքիստական և սիոնիստական», «ջիռուամասուններ» և նմանատիպ արատավորող, վարկաբեկող և հեղինակագրկող արտահայտություններով, որով ատելություն ու թշնամանք է հարուցել հրեա ազգի նկատմամբ:

Այսպիսով, կատարած հանցավոր արարքի՝ հրապարակայնորեն և լրատվության միջոցներ օգտագործելով հրեա և քուրդ ազգերի նկատմամբ ազգային թշնամանք հարուցելու համար Արմեն Վանիկի Ավետիսյանին 12.02.2005թ. մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 226 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով: /Գ.Թ. 151-152/

Առաջադրված մեղադրանքում Արմեն Վանիկի Ավետիսյանն իրեն մեղավոր չի ճանաչել և ցուցմունքներ է տվել այն մասին, որ ինքը 1993թ.-ին ստեղծել է «Հայ-արիական» կուսակցությունը, որը 2002թ.-ից թողարկում է կուսակցության «Հայ-Արիներ» ամսաթերթը: Նշված թերթում տպագրվել են հոդվածներ և նյութեր, որոնք իրենց տեսանկյունից պարզաբանել են հրեաների դեմքն ու ապրելակերպը և նրանցից սպասվող վտանգները Հայաստանի և հայ ժողովրդի հանդեպ: Հեռուստատեսությամբ, մամուլի ասուլիսներով, թերթերում հրապարակված հոդվածներով, թերթերով և հեռուստացույցով տրված հարցազրույցներում իր կողմից հրեա ազգի վերաբերյալ արված գաղափարների, կարծիքների և արտահայտությունների մասին ամբաստանյալ Արմեն Ավետիսյանը նշել է, որ դրանք իրոք իր կողմից են արվել և դրանց վերաբերյալ նշել է, որ հրեաները, կեղծելով «Աստվածաշունչը», իրենք իրենց են համարում աստվածային ժողովուրդ, ընտրյալ Եհովա աստծու կողմից: Հրեաները հայերի աստվածային, ընտրյալ, մարդկության սկիզբ լինելու հանգամանքը սեփականացնելու նպատակով, ոչնչացրել են հայոց հավատքը 301թվականին, հայերին դարձրել քրիստոնյա, ոչնչացրել հայոց պատմությունն ու մատյանները և հրամցրել «Հին կտակարանը»՝ հրեության ընտրյալության սին պատմությամբ: Հրեաները բոլոր քրիստոնյաներին ստիպել են, որ Նոյին ճանաչեն որպես իրենց՝ հրեաների նախահայր և Եհովային ճանաչեն որպես իրենց բոլորի՝ քրիստոնյաների հայր աստված, հրեաներին էլ ընտրյալ ժողովուրդ: Ինքն այդ պատճառով ասել է, որ միայն արարչական հնագույն ազգը՝ հայերը կարող են այս խարդախությունների դեմն առնել: Մարմնական պատիժ ասելով՝ ինքը նկատի է ունեցել, որ երբ հայության գլխին կախվի եղեռնի վտանգ՝ ապա կմարտնչեն նաև զենքով: Ինքն իրոք նշել է, որ հրեական համայնքը վտանգ է ներկայացնում այն պետությունում, որում գտնվում է, նաև՝ Հայաստանում: Արմեն Ավետիսյանը նշել է նաև, որ հրեաներն առաջնորդվում են իրենց սուրբ գրքով՝ «Թալմուդով», որում նշվում է, որ բացի հրեաներից մնացյալ ազգերն անասուններ են և նրանց հետ պետք է վարվել ինչպես անասունների հետ: Իրոք, երիտթուրքերի ղեկավարների մի մասին ինքը վերագրել է հրեական ծագում և տվել այդ ժամանակաշրջանի պատմաքաղաքական վերլուծություն, սակայն դա արդեն հիմնավորված է հայ պատմաբանների և օտարերկրյա գիտնականների տարբեր աշխատություններում: Այդ փաստերի հիման վրա Հայոց ցեղասպանության մեջ ինքը մեղադրել է նաև սիոնիստ հրեաներին: Քանի որ սիոնիզմը քարոզում է հրեա ազգի ընտրյալությունը, մյուս ազգերի ստորադասությունը հրեա ազգի նկատմամբ, այդ իսկ պատճառով այդ վտանգի մասին ինքը ահագանգում է հայությանը, ինչպես նաև հենց հրեությանը, զգուշացնում է, որ հրեական համայնքները գործիք են սիոնիստների ձեռքում և վտանգ են ներկայացնում ցանկացած պահին: Ինքը գտնում է, որ դրանով ոչ թե թշնամանք է հարուցում հրեա ազգի նկատմամբ, այլ զգուշացնում է հայությանը հնարավոր վտանգների մասին և գտնում է նաև, որ հրեաները ցեղասպանության մեջ մեղավոր են այնքան, ինչքան թուրքերը և ցանկանում է, որ հայերը հրեաներից զգուշանան այնքան, ինչքան թուրքերից և դա ազգային թշնամանքի հրահրում չի համարում: Եթե խոսքը այս տեսանկյունից ծայրահեղ է հնչել, ապա ցավում է, քանի որ դիտավորություն չի ունեցել մի ամբողջ ազգի վիրավորելու: Ինքը հրեա ազգի նկատմամբ լուրջ զգուշավորություն ունի, իսկ մյուս ազգերի նկատմամբ թշնամանք չունի, որովհետև նրանք մեր երկրում և երկրից դուրս մեր ազգի հանդեպ դավադրություններ չեն անում, և այդ պատճառով ինքը թշնամանք ունի միայն թուրքերի և հրեաների

հանդեպ: Արմեն Ավետիսյանը նշել է նաև, որ եթե իր արտահայտությունները վիրավորում են հրեա անհատների արժանապատվությունը, ապա թող հրաժարվեն Թավուդից, ընդունեն իրենց նախնիների մեղքերը, իսկ եթե դա շարունակում է մնալ վիրավորական որոշ հրեաների համար, ապա դա իր խնդիրը չէ: Արմեն Ավետիսյանը նշել է նաև, որ ինքը որևէ թշնամանք չի սերմանել հրեա, քուրդ և եզդի համայնքների նկատմամբ: /Գ.Թ.35-40,54-55,137,154/

Մեղադրյալ Արմեն Վանիկի Ավետիսյանի պատճառաբանությունները, որ ինքը հանցագործություն չի կատարել, ազգային թշնամանք չի հարուցել, անհիմն են ու նպատակ են հետապնդում խուսափել քրեական պատասխանատվությունից, և նրա կողմից կատարված հանցանքը հիմնավորվել է ինչպես իր մասնակի ինքնախոստովանական ցուցմունքներով, այնպես էլ նախաքննությամբ ձեռք բերված հետևյալ ապացույցներով.

Վկա, Հայաստանի Հանրապետությունում հրեական համայնքի ղեկավար Ռիմա Պետրոսի Վարժապետյանի ցուցմունքով այն մասին, որ «Հայ-արիական միաբանություն» կուսակցության նախագահ Արմեն Ավետիսյանն, իրեն անհայտ պատճառներով, արդեն շուրջ երկու տարի է, ինչ հրապարակայնորեն, մամուլի և հեռուստատեսության միջոցով, մամուլի ասուլիսներում, հարցազրույցներում և հոդվածներում թշնամանք է հարուցում հրեա ազգի նկատմամբ, նվաստացնում է հրեա ազգի արժանապատվությունը և կոչ է անում հայերին, որպեսզի հրեաներին վտարեն Հայաստանից: Արմեն Ավետիսյանի հակահրեական քարոզչությունը շուրջ երկու տարի է՝ ինչ վախի ու սարսափի մեջ է պահում հրեական համայնքին, հատկապես վախեցած են երիտասարդները, որոնք բազմիցս դիմել են իրեն՝ որպես համայնքի ղեկավարի, որպեսզի ինքը միջոցներ ձեռք առնի Հայաստանում հակահրեական քարոզչությունը դադարեցնելու համար, հակառակ դեպքում նրանք կարող են փախչել Հայաստանից: Իր կողմից բազմիցս դիմումներ են ուղարկվել ՀՀ իշխանություններին, որպեսզի վերջիններս միջոցներ ձեռնարկեն՝ Արմեն Ավետիսյանի անհիմն հակահրեական քարոզչությունը դադարեցնելու ուղղությամբ: Ինքը մտահոգված է, որ Արմեն Ավետիսյանի հակահրեական քարոզչությունը, հնարավոր է, բացասական ազդեցություն ունենա հայ երիտասարդության վրա, որն էլ դրանից ելնելով ատելությամբ լցվի հրեա ազգի նկատմամբ: Ռիմա Վարժապետյանը նշել է նաև, որ, իր կարծիքով, Արմեն Ավետիսյանը որևէ պատճառ չունի հայ և հրեա ազգերի միջև թշնամանք հարուցելու համար, իսկ թե ինչու է վերջինս նման քայլի դիմել՝ չի կարող ասել: /Գ.Թ.61-63/

Վկա, «Հայաստանի եզդիների ազգային միության» նախագահ Ազիզ Ամարի Թամոյանի ցուցմունքով այն մասին, որ «Առավոտ» օրաթերթի 29.07.2004թ. համարում տպագրված «Որն է Հայաստանի սահմանը» վերնագրով հոդվածում Արմեն Ավետիսյանը մտքեր է արտահայտել, որ Հայաստանում պետք է բնակվեն միայն հայեր, իսկ ազգային փոքրամասնությունները պետք է հեռանան մեր հայրենիքից, քանի որ Հայաստանի նկատմամբ տարածքային պահանջներ ունեն և վտանգում են հայոց պետականությունը: Այդ հոդվածի կապակցությամբ իրեն՝ որպես «Հայաստանի եզդիների ազգային միության» նախագահի, դիմել են բազմաթիվ եզդիներ և խնդրել են արձագանքել այդ հոդվածին, քանի որ, հոդվածի համաձայն, եզդիներն իբր այս պետության թշնամին են: Սկզբում ինքը ցանկացել է ելույթ ունենալ այդ հոդվածի դեմ կամ որևէ հոդված տպագրել թերթում, որ եզդիները ոչ թե հայերի թշնամին են, այլ բարեկամները և եզդիները հայերի համար որևէ վտանգ չեն ներկայացնում, սակայն հետագայում որոշել է լռել և այդ հարցին ավելի սրացում չտալ ու ավելորդ չբորբոքել բոլորին եզդիների դեմ: Ինքն այդ հարցով հեռախոսազրույց է ունեցել Արմեն Ավետիսյանի հետ՝ պարզելու համար, թե արդյոք նա է գրել այդ հոդվածը և ինչու է եզդիների դեմ նման հոդված գրել, սակայն Արմեն Ավետիսյանը պատասխանել է, որ նա ոչ թե եզդիների դեմ է հոդվածը գրել, այլ նրանց դեմ, ովքեր խարխլում են ազգային պետականության հիմքերը: /Գ.Թ.127-129/

Վկա, «Հայկական ժամանակ» օրաթերթի լրագրող Ավետիս Մուրենի Բաբաջանյանի ցուցմունքով այն մասին, որ ինքը 2003 թվականից մինչ այժմ տպագրել է մի քանի հոդվածներ «Հայ-արիական» կուսակցության նախագահ Արմեն Ավետիսյանի ելույթների, հոդվածների և մամուլի ասուլիսների վերաբերյալ, որոնք վերաբերել են վերջինիս հակահրեական քարոզչությանը: Իր հիշելով 2003 թվականից սկսվել է Արմեն Ավետիսյանի հակահրեական քարոզչությունը և գաղափարախոսությունը, ինչի մասին ինքը «Հայկական ժամանակ» օրաթերթում տպագրել է մի քանի հոդվածներ, այդ թվում 02.10.2003թ. համարում տպագրված «Վերջ տանք ջիուդամաստներին» վերնագրով և 22.07.2004թ. համարում տպագրված «Ազգայնականները Կարապետովիչի հետ են» վերնագրով հոդվածները: Հոդվածներում ինքը կատարել է մեջբերումներ Արմեն Ավետիսյանի ելույթներից, որոնք ունեցել են մի ուղղություն՝ հակահրեականությունը, որի ընդհանուր միտքը եղել է այն, որ հրեաները վտանգ են ներկայացնում հայ



ժողովրդի համար, նրանք են կազմակերպել ցեղասպանությունը և նպատակ ունեն Հայաստանը զավթել, տեղահանել ու ոչնչացնել հայերին: Բաբաջանյանը հայտնեց, որ նախաքննության ընթացքում այլ կարծիք է ունեցել Արմեն Ավետիսյանի մասին, այդ իսկ պատճառով նշել է, որ նրա ելույթները և հողվածները կրել են հակահրեական ուղղություն՝ հրեաների մասին տարբեր նվաստացուցիչ, արատավորող, վարկաբեկող և ատելություն առաջացնող արտահայտություններով: Այն ժամանակ ինքը, լսելով Արմեն Ավետիսյանի ելույթները, հանգել է այն կարծիքին, որ նրա հակահրեական գաղափարախոսությունը թշնամանք է հարուցում հրեա ազգի նկատմամբ և վերջինիս հարցրել է, թե արդյոք չի վախենում, որ նրան կմեղադրեն հակահրեական գործունեություն իրականացնելու համար: Բացի այդ, ինքը նրան բացատրել է հրեաների դեմ ուղղված գործունեության վտանգավորությունը և վնասակարությունը հայ ազգի և պետության համար, սակայն վերջինս շարունակել է մնալ իր դիրքորոշմանը: /Գ.Թ.75-77/

Վկա, «Առավոտ» օրաթերթի լրագրող Աննա Ստեպկոյի Իսրայելյանի ցուցմունքով այն մասին, որ ինքը 2004թ. մարտի 18-ին Մամուլի Ազգային Ակումբի կողմից հրավիրվել է մասնակցելու մամուլի ասուլիսի, որին մասնակցել է նաև «Հայ-արիական միաբանություն» կուսակցության նախագահ Արմեն Ավետիսյանը: Նշված ասուլիսի ժամանակ Արմեն Ավետիսյանը սովորականի պես հանդես է եկել հակահրեական արտահայտություններով, որոնք իր կողմից հրապարակվել են «Առավոտ» օրաթերթի 2004թ. մարտի 19-ի համարում, իսկ հետո արտատպվել է «Հայ-Արիներ» թերթում: Աննա Իսրայելյանը նշել է նաև, որ, ինչպես նշված մամուլի ասուլիսի ժամանակ, այնպես էլ մյուս հրապարակային ելույթներում Արմեն Ավետիսյանը մշտապես հանդես է եկել հակահրեական քարոզչությամբ: /Գ.Թ. 43-44/

Վկա, «Իրավունք» թերթի լրագրող Փիրուզա Պետրոսի Մելիքսեթյանի ցուցմունքով այն մասին, որ իր նախաձեռնությամբ «Հայ-արիական միաբանություն» կուսակցության նախագահ Արմեն Ավետիսյանի հետ ինքը հարցազրույց է վարել, որը տպագրվել է «Իրավունք» շաբաթաթերթի 2005թ. հունվար ամսի թիվ 2 համարի թերթում: Հարցազրույցի ընթացքում Արմեն Ավետիսյանն ԱՄՆ պետդեպարտամենտի տարեկան զեկույցի վերաբերյալ իր հարցին բառացիորեն պատասխանել է. «Ես ասել ու միանշանակ կրկնում եմ՝ վտանգված է այն երկրի ապագան, ուր կա հրեական համայնք: Նաև կրկնում եմ, Հայաստանից պիտի վտարվեն բոլոր նրանք, ովքեր քանդում են հայոց պետությունը», որն էլ տպագրվել է թերթի նշված համարում:

Այստեղ բացակայում է Փ. Մելիքսեթյանի՝ 1915թ. ցեղասպանության հարցում Ա. Ավետիսյանի հետ համաձայն լինելու մասը: Իհարկե՝ միտումնավոր (խմբագր.):

Վկա, «ԱՐ» հեռուստաալիքի «Ճանապարհ» հաղորդաշարի վարող Արծրուն Աղաբեկի Պեպանյանի ցուցմունքով այն մասին, որ ինքն առնվազն երեք անգամ իր հաղորդաշարին է հրավիրել «Հայ-արիական» կուսակցության նախագահ Արմեն Ավետիսյանին, որը միշտ աչքի է ընկել իր հակահրեական և ազգայնական գաղափարներով, ինչը միշտ արտացոլվել է նաև վերջինիս հողվածներում և հեռուստատեսային ելույթներում, որտեղ մշտապես նշել է հրեական վտանգի մասին: Վերջին անգամ ինքն Արմեն Ավետիսյանին հրավիրել է իր հաղորդաշարին 2004թ. սեպտեմբերի 27-ին, սակայն նախապես նրան զգուշացրել է, որպեսզի վերջինս հաղորդման ընթացքում չարտահայտի իր հակահրեական և ազգայնամոլական գաղափարներն ու չանդրադառնա «ջիոդամատոնական» և «հրեական վտանգի» հարցերին՝ ինչին էլ Արմեն Ավետիսյանը համաձայնել է: Չնայած իր նախազգուշացումներին, Արմեն Ավետիսյանը հաղորդման ընթացքում, ելույթներում հաճախակի անդրադարձել է այդ հարցին և արտահայտել հակահրեական գաղափարներ: /Գ.Թ. 47-49/

Իրեդեն ապացույց ճանաչված՝ «Հայ-Արիներ» ամսագրի 2004թ. մայիս ամսվա թիվ 9 համարի, «Հայկական ժամանակ» օրաթերթի 02.10.2003թ. և 22.07.2004թ. համարների, «Առավոտ» օրաթերթի 29.07.2004թ. համարի, «Իրավունք» շաբաթաթերթի 2005թ. հունվար ամսի թիվ 2 համարի և «ԱՐ» հեռուստաալիքի «Ճանապարհ» հաղորդաշարի 27.09.2004թ. հաղորդման տեսագրության տեսաժապավենի գնմության արձանագրությամբ այն մասին, որ «Հայ-Արիներ» Ամսագրի 2004թ. մայիս ամսվա թիվ 9 համարի 53-րդ թերթում տպագրված է. «Մենք բացահայտ հայտարարում ենք, որ ջիոդա-հրեության աշխարհակործան տիրապետությանը կարող է վերջ տալ միայն ԱՐԱՐՉԱԾԻՆ ԱՄԵՆԱՀՆԱԳՈՒՅՆ ԱԶԳԸ՝ ՀԱՅ ԱԶԳԸ և սա քաջ հայտնի է հուդազուններին, ուստի սրանք հազարամյակներ շարունակ իրենց բնատուր խարդախությամբ դավեր են նյութում Հայության դեմ», «Մենք ազգովի պետք է անխնա լինենք այդ մտավոր կովում և թշնամիների և դավաճանների հանդեպ, իսկ անհրաժեշտության դեպքում մեր կիրառած պատիժը կարող է լինել նաև մարմնական...»:

«Հայկական ժամանակ» օրաթերթի 02.10.2003թ. համարի 2-րդ էջում տպագրված է «Վերջ տանք

ջիւղամաստններին» վերնագրով հոդվածը, որտեղ նշված են Արմեն Ավետիսյանի հետևյալ արտահայտությունները. «Հայոց ցեղասպանության կազմակերպիչները հանդիսանում են սիոնիստները՝ հրեաները: Մեր ցեղասպանության համար պատասխանատու են հրեաները», «Հրեաները ցանկանում են հայերին հեռացնել հայկական լեռնաշխարհից», «ցանկանում են զավթել հայոց բնօրրանը, տեղահանել և ոչնչացնել բնիկ հայերին և տեղը լցնել ուրիշներով»:

«Հայկական ժամանակ» օրաթերթի 22.07.2004թ. համարի 3-րդ էջում տպագրված է «Ազգայնականները Կարապետովիչի հետ են» վերնագրով հոդվածը, որտեղ նշված են Արմեն Ավետիսյանի հետևյալ արտահայտությունները. «Ամբողջ պատմությունը ցույց է տվել, որ ոչ մի հրեական համայնք, բացի վնասից այդ երկրին այլ բան չի տվել, և դա վերաբերում է նաև Հայաստանին», «Բայց անկախ ամեն ինչից, մենք անելու ենք ամեն ինչ՝ չարիքը բնի մեջ խեղդելու համար»:

«Առավոտ» օրաթերթի 29.07.2004թ. համարի 2-րդ էջում տպագրված է «Որն է Հայաստանի սահմանը» վերնագրով հոդվածը, որտեղ նշված են Արմեն Ավետիսյանի հետևյալ արտահայտությունները. «Ազգային փոքրամասնություններին, որոնք իրենց գոյությամբ կվտանգեն հայոց պետականությունը՝ պիտի հեռանան մեր հայրենիքից» «Մենք գիտենք, որ որոշակի միջազգային կառույցներից բողոքներ կան: Հրեական, քրդական, եգիպտական և մնացած համայնքներն են այդ ակցիան ձեռնարկել»:

«Իրավունք» շաբաթաթերթի 2005թ. հունվար ամսի թիվ 2 համարի 4-րդ և 5-րդ էջերում տպագրված է Արմեն Ավետիսյանի հարցազրույցը, որտեղ նշված են Արմեն Ավետիսյանի հետևյալ արտահայտությունները. «Վտանգված է այն երկրի ապագան, ուր կա հրեական համայնք: Նաև կրկնում եմ, Հայաստանից պիտի վտարվեն բոլոր նրանք, ովքեր քանդում են հայոց պետությունը»:

«ԱՐ» հեռուստատեսության «Ճանապարհ» հաղորդաշարի 27.09.2004թ. հաղորդման տեսագրության մեջ Արմեն Ավետիսյանի կողմից կատարվել են հետևյալ արտահայտությունները. «ջիւղներ», «պանթուրիստական և սիոնիստական», «ջիւղամաստններ»:

/Գ.Թ. 1-25,146-147,148/

### **Վերոգրյալների Հիման Վրա**

Արմեն Վանիկի Ավետիսյանը՝ ծնված 15.01.1963թ. Ստեփանավան քաղաքում, ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի, բարձրագույն կրթությամբ, ամուսնացած, խնամքին երեք երեխա, նախկինում չդատված, բնակվում է քաղաք Աբովյան, Եղբայրության փողոց, 1 շենք, բն.7, ներկայումս ՀՀ ԱՆ ՔԿՎ «Նուբարաշեն» հիմնարկության կալանավոր.

Մեղադրվում է հետևյալ հանցագործությունը կատարելու համար.

«Հայ-արիական» կուսակցության նախագահ, ամբաստանյալ Արմեն Վանիկի Ավետիսյանը 2003-2005 թվականների ընթացքում, հրապարակայնորեն և լրատվության միջոցներ օգտագործելով՝ հեռուստատեսությամբ ելույթ ունենալով, մամուլի ասուլիսների միջոցով, թերթերում հոդվածներ հրապարակելով, թերթերով և հեռուստացույցով հարցազրույցներ տալով, իր գաղափարներով ու կարծիքներով հարուցել է ազգային թշնամանք հրեա և քուրդ ազգերի և Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող քրդերի ու հրեական համայնքների նկատմամբ, այն է՝ Արմեն Ավետիսյանը «Հայ-Արիներ» ամսագրի 2004թ. մայիս ամսվա թիվ 9 համարում տպագրված «Նույն ուժերը հայահալած քաղաքականություն են տանում ամենուր» վերնագրով հոդվածում, «Հայկական ժամանակ» օրաթերթի 02.10.2003թ. համարում տպագրված «Վերջ տանք ջիւղամաստններին» վերնագրով հոդվածում, 22.07.2004թ. համարում տպագրված «Ազգայնականները Կարապետովիչի հետ են» վերնագրով հոդվածում, «Առավոտ» օրաթերթի 29.07.2004թ. համարում տպագրված «Որն է Հայաստանի սահմանը» վերնագրով հոդվածում, «Իրավունք» շաբաթաթերթի 2005թ. հունվար ամսի թիվ 2 համարի թերթում տպագրված հարցազրույցում և «ԱՐ» հեռուստատեսության «Ճանապարհ» հաղորդաշարի 27.09.2004թ. հաղորդման ընթացքում հրապարակային վիրավորանք հասցնելով, ազգերի պատիվը նսեմացնելով, ստորացնելով, մեկ ազգին մյուսի նկատմամբ առավելություններ տալով, արատավորող, վարկաբեկող և հեղինակազրկող արտահայտություններ կատարելով, այն է՝ «ջիւղներ», «զավթողներ», «բնատուր խարդախներ», «ջիւղամաստններ» արտահայտություններով, ինչպես նաև «Մենք բացահայտ հայտարարում ենք, որ ջիւղա-հրեության աշխարհակործան տիրապետությանը կարող է վերջ տալ միայն ԱՐԱԸՉԱԾԻՆ ԱՄԵՆԱՆՆԱԳՈՒՅՆ ԱԶԳԸ՝ ՀԱՅ ԱԶԳԸ և սա քաջ հայտնի է հուղագուններին, ուստի սրանք հազարամյակներ շարունակ իրենց բնատուր խարդախությամբ դավեր են նյութում Հայության դեմ», «Հայոց ցեղասպանության կազմակերպիչները հանդիսանում են սիոնիստները՝ հրեաները: Մեր

ցեղասպանության համար պատասխանատու են հրեաները», «Հրեաները ցանկանում են հայերին հեռացնել հայկական լեռնաշխարհից», «ցանկանում են զավթել հայոց բնօրրանը, տեղահանել և ոչնչացնել բնիկ հայերին և տեղը լցնել ուրիշներով», «Ամբողջ պատմությունը ցույց է տվել, որ ոչ մի հրեական համայնք, բացի վնասից այդ երկրին այլ բան չի տվել և դա վերաբերում է նաև Հայաստանին», «վտանգված է այն երկրի ապագան, ուր կա հրեական համայնք», «ազգային փոքրամասնություններին, որոնք իրենց գոյությամբ կվտանգեն հայոց պետականությունը՝ պիտի հեռանան մեր հայրենիքից», «Մենք գիտենք, որ որոշակի միջազգային կառույցներից բողոքներ կան: Հրեական, քրդական, եգիպտական և մնացած համայնքներ են այդ ակցիան ձեռնարկել» և նմանատիպ կոչերով ու արտահայտություններով Հայաստանի Հանրապետության տարածքում ատելություն ու թշնամանք առաջացնող գաղափարներ է տարածել հրեա և քուրդ ազգերի նկատմամբ՝ դրանով իսկ ազգային թշնամանք հարուցելով ազգությամբ հրեա և քուրդ անձանց նկատմամբ:

Այսպիսով, «Հայ-արիական» կուսակցության նախագահ Արմեն Վանիկի Ավետիսյանն հրապարակայնորեն և լրատվության միջոցներ օգտագործելով ազգային թշնամանք է հարուցել հրեա և քուրդ ազգերի նկատմամբ, այսինքն կատարել է հանցագործություն՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 226 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

Սույն քրեական գործն ընդդատյա է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանին:

Մեղադրական եզրակացությունը կազմվել է 2005թ. փետրվարի 24-ին՝ Երևան քաղաքում:

Երևան քաղաքի դատախազության ավագ քննիչ՝  
Արամ Գրիգորյան

Այս մեղադրանքը գրեթե բառացի կրկնեց մեղադրող դատախազ Արթուր Երիցյանը, որը պահանջեց Հայ Արիական Միաբանության առաջնորդ Արմեն Վանիկի Ավետիսյանին ճանաչել մեղավոր ՀՀ քր.օր.-ի 226 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և դատապարտել ազատազրկման 3 (երեք) տարի ժամանակով: ՀՀ քր. օր.-ի 70 հոդվածի կիրառմամբ պատիժը կիրառել պայմանականորեն և սահմանել փորձաշրջան 2 (երկու) տարի ժամանակով:

Խափանման միջոց կալանքը վերացնել և անհապաղ ազատ արձակել դատարանի դահլիճից:

Դատապարտյալի վարքի նկատմամբ վերահսկողությունը թողնել բնակության վայրի ոստիկանության վրա (խմբ.):

## Դատավճիռ

Հանուն Հայաստանի Հանրապետության

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը հետևյալ կազմով.

Նախագահությամբ Դատավոր՝ Գ. Կարախանյանի	
Քարտուղարությամբ՝	Ա. Սայադյանի
Մեղադրող՝	Ա. Երիցյան
Պաշտպան՝	Մ. Առուստամյան

2005թ. մարտի 18-ին, դոնբաց դատական նիստում, դատարանում, քննեց քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Արմեն Վանիկի Ավետիսյանի, ծնված 15.01.1963թ., Ստեփանավան քաղաքում, ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի, բարձրագույն կրթությամբ, «Հայ-արիական» կուսակցության նախագահ, ամուսնացած, ինամբին երեք անչափահաս երեխա, նախկինում չդատված, բնակվում է Աբովյան քաղաքի, Եղբայրության փողոցի, 1 շենքի, 7 բնակարանում:

Մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 226 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

Կալանքի տակ է 24.01.05թ-ից:

Դատաքննությամբ դատարանը հաստատված համարեց, որ «Հայ-արիական» կուսակցության նախագահ,

ամբաստանյալ Արմեն Վանիկի Ավետիսյանը 2003-2005 թվականների ընթացքում, հրապարակայնորեն և լրատվության միջոցներ օգտագործելով՝ հեռուստատեսությամբ ելույթ ունենալով, մամուլի ասուլիսների միջոցով, թերթերում հոդվածներ հրապարակելով, թերթերով և հեռուստացույցով հարցազրույցներ տալով, հրապարակային վիրավորանք հասցնելով, ազգերի պատիվը նսեմացնելով, ստորացնելով, մեկ ազգին մյուսի նկատմամբ առավելություններ տալով, արատավորող, վարկաբեկող և հեղինակազրկող արտահայտություններ կատարելով, Հայաստանի Հանրապետության տարածքում ատելություն ու թշնամանք առաջացնող գաղափարներ է տարածել հրեա և քուրդ ազգերի նկատմամբ իր գաղափարներով ու կարծիքներով հարուցել է ազգային թշնամանք հրեա և քուրդ ազգերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող քրդական ու հրեական համայնքների նկատմամբ: Ամբաստանյալ Արմեն Ավետիսյանը «Հայ-Արիներ» ամսագրի 2004թ. մայիս ամսվա թիվ 9 համարի 53-րդ էջում տպագրված «Նույն ուժերը հայահալած քաղաքականություն են տանում ամենուր» վերնագրով հոդվածում բառացիորեն գրել է. «Մենք բացահայտ հայտարարում ենք, որ ջիոդա-հրեության աշխարհակործան տիրապետությանը կարող է վերջ տալ միայն ԱՐԱՐԶԱԾԻՆ ԱՄԵՆԱՀՆԱԳՈՒՅՆ ԱԶԳԸ՝ ՀԱՅ ԱԶԳԸ և սա քաջ հայտնի է հուդազուններին, ուստի սրանք հազարամյակներ շարունակ իրենց բնատուր խարդախությամբ դավեր են նյութում Հայության դեմ», այնուհետև նույն հոդվածում ավելացրել է. «Մենք ազգովի պետք է անխնա լինենք այդ մտավոր կռվում և՛ թշնամիների և՛ դավաճանների հանդեպ, իսկ անհրաժեշտության դեպքում մեր կիրառած պատիժը կարող է լինել նաև մարմնական...» և նշված արատավորող, վարկաբեկող և հեղինակազրկող արտահայտություններով, ատելություն ու թշնամանք առաջացնող կոչեր ու գաղափարներ տարածելով, Արմեն Ավետիսյանը թշնամանք է հարուցել հրեա ազգի նկատմամբ:

Բացի այդ, «Հայկական Ժամանակ» օրաթերթի 02.10.2003թ. համարի 2-րդ էջում տպագրված «Վերջ տանք ջիոդամասոններին» վերնագրով հոդվածում նշված են Արմեն Ավետիսյանի հետևյալ հայտարարությունները. «Հայոց ցեղասպանության կազմակերպիչները հանդիսանում են սիոնիստները՝ հրեաները: Մեր ցեղասպանության համար պատասխանատու են հրեաները», «Հրեաները ցանկանում են հայերին հեռացնել հայկական լեռնաշխարհից», «ցանկանում են զավթել հայոց բնօրրանը, տեղահանել և ոչնչացնել բնիկ հայերին և տեղը լցնել ուրիշներով», որոնք արատավորելով, վարկաբեկելով և հեղինակազրկելով հրեա ազգին, ատելություն ու թշնամանք են հարուցել նրանց նկատմամբ:

«Հայկական Ժամանակ» օրաթերթի 22.07.2004թ. համարի 3-րդ էջում տպագրված «Ազգայնականները Կարապետովիչի հետ են» վերնագրով հոդվածում արտահայտություններ է արվել նաև ամբաստանյալի կողմից, որտեղ նշված է հրեա ազգի պատիվը նսեմացնող, ստորացնող, արատավորող, վարկաբեկող և հեղինակազրկող՝ հետևյալ արտահայտությունները. «Ամբողջ պատմությունը ցույց է տվել, որ ոչ մի հրեական համայնք, բացի վնասից այդ երկրին այլ բան չի տվել և դա վերաբերում է նաև Հայաստանին» ու ավելացրել է. «Բայց անկախ ամեն ինչից, մենք անելու ենք ամեն ինչ՝ չարիքը բնի մեջ խեղդելու համար»: Բացի այդ, «Առավոտ» օրաթերթի 29.07.2004թ. համարում տպագրված «Որն է Հայաստանի սահմանը» վերնագրով հոդվածում նշված են Արմեն Ավետիսյանի հետևյալ արտահայտությունները. «Ազգային փոքրամասնություններին, որոնք իրենց գոյությամբ կվտանգեն հայոց պետականությունը՝ պիտի հեռանան մեր հայրենիքից», ինչպես նաև «Մենք գիտենք, որ որոշակի միջազգային կառույցներից բողոքներ կան: Հրեական, քրդական, եգիպտական և մնացած համայնքներ են այդ ակցիան ձեռնարկել», որոնք արատավորելով, վարկաբեկելով և հեղինակազրկելով հրեա, քուրդ և եգիպտացիներին, Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող՝ նշված ազգային համայնքների և այդ ազգությունների անձանց նկատմամբ ատելություն ու թշնամանք են հարուցել:

Այնուհետև, «Իրավունք» շաբաթաթերթի 2005թ. հունվար ամսի թիվ 2 համարի թերթում տպագրված հարցազրույցում Արմեն Ավետիսյանը նշել է. «Ես ասել ու միանշանակ կրկնում եմ՝ վտանգված է այն երկրի ապագան, ուր կա հրեական համայնք: Նաև կրկնում եմ, Հայաստանից պիտի վտարվեն բոլոր նրանք, ովքեր քանդում են հայոց պետությունը», այս արտահայտությունները նույնպես արատավորելով, վարկաբեկելով և հեղինակազրկելով հրեա ազգին, ատելություն ու թշնամանք են հարուցել հրեա ազգի նկատմամբ, Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող հրեական համայնքի և այդ ազգության անձանց նկատմամբ:

«ԱՐ» հեռուստաալիքի «Ճանապարհ» հաղորդաշարի 27.09.2004թ. հաղորդման ընթացքում հրապարակային վիրավորանք հասցնելով, ազգերի պատիվը նսեմացնելով, ստորացնելով, մեկ ազգին մյուսի նկատմամբ առավելություններ տալով, Արմեն Ավետիսյանը հրեա ազգին կոչել է. «ջիոդներ»,

«պանթուրքիստական և սիոնիստական», «ջիուդամաստններ» և նմանատիպ արատավորող, վարկաբեկող և հեղինակագրկող արտահայտություններով, որով ասելություն ու թշնամանք է հարուցել հրեա ազգի նկատմամբ:

Ամբաստանյալ Արմեն Վանիկի Ավետիսյանն առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չի ճանաչել և ցուցմունքներ է տվել այն մասին, որ ինքը 1993թվականին ստեղծել է «Հայ-արիական» կուսակցությունը, որը 2002թ-ից թողարկում է կուսակցության «Հայ-Արիներ» ամսաթերթը: Նշված թերթում տպագրվել են հոդվածներ և նյութեր, որոնք իրենց տեսանկյունից պարզաբանել են հրեաների դեմքն ու ապրելակերպը և նրանցից սպասվող վտանգները Հայաստանի և հայ ժողովրդի հանդեպ: Հեռուստատեսությամբ, մամուլի ասուլիսներով, թերթերում հրապարակված հոդվածներով, թերթերով և հեռուստացույցով տրված հարցազրույցներում իր կողմից հրեա ազգի վերաբերյալ արված գաղափարների, կարծիքների և արտահայտությունների մասին ամբաստանյալ Արմեն Ավետիսյանը նշել է, որ դրանք իրոք իր կողմից են արվել և դրանց վերաբերյալ նշել է, որ հրեաները կեղծելով «Աստվածաշունչը» իրենք իրենց են համարում աստվածային ժողովուրդ, ընտրյալ Եհովա աստծու կողմից: Հրեաները հայերի աստվածային, ընտրյալ, մարդկության սկիզբ լինելու հանգամանքը սեփականացնելու նպատակով ոչնչացրել են հայոց հավատքը 301թվականին, հայերին դարձրել քրիստոնյա, ոչնչացրել հայոց պատմությունն ու մատյանները և հրավերել «Հին կտակարանը» հրեության ընտրյալության սին պատմությամբ: Հրեաները բոլոր քրիստոնյաներին ստիպել են, որ Նոյին ճանաչեն որպես իրենց հրեաների նախահայր և Եհովային ճանաչեն որպես իրենց բոլորի՝ քրիստոնյաների հայր աստված, հրեաներին էլ՝ ընտրյալ ժողովուրդ: Ինքն այդ պատճառով ասել է, որ միայն արարչական հնագույն ազգը՝ հայերը կարող են այս խարդախությունների դեմն առնել: Մարմնական պատիժ ասելով ինքը նկատի է ունեցել, որ երբ հայության գլխին կախվի եղեռնի վտանգ՝ ապա կմարտնչեն նաև զենքով: Ինքն իրոք նշել է, որ հրեական համայնքը վտանգ է ներկայացնում այն պետությունում, որում գտնվում է, նաև՝ Հայաստանում:

Արմեն Ավետիսյանը նշել է նաև, որ հրեաներն առաջնորդվում են իրենց սուրբ գրքով՝ «Թալմուդով», որում նշվում է, որ բացի հրեաներից մնացյալ ազգերն անասուններ են և նրանց հետ պետք է վարվել ինչպես անասունների հետ: Իրոք երիտթուրքերի ղեկավարների մի մասին ինքը վերագրել է հրեական ծագում և տվել այդ ժամանակաշրջանի պատմաբաղադրական վերլուծություն, սակայն դա արդեն հիմնավորված է հայ պատմաբանների և օտարերկրյա գիտնականների տարբեր աշխատություններում: Այդ փաստերի հիման վրա Հայոց ցեղասպանության մեջ ինքը մեղադրել է նաև սիոնիստ հրեաներին: Քանի որ սիոնիզմը քարոզում է հրեա ազգի ընտրյալությունը, մյուս ազգերի ստորադասությունը հրեա ազգի նկատմամբ, այդ իսկ պատճառով այդ վտանգի մասին ինքը ահագանգում է հայությանը, ինչպես նաև հենց հրեությանը, զգուշացնում է, որ հրեական համայնքները գործիք են սիոնիստների ձեռքում և վտանգ են ներկայացնում ցանկացած պահին: Ինքը գտնում է, որ դրանով ոչ թե թշնամանք է հարուցում հրեա ազգի նկատմամբ, այլ զգուշացնում է հայությանը հնարավոր վտանգների մասին և գտնում է նաև, որ հրեաները ցեղասպանության մեջ մեղավոր են այնքան, ինչքան թուրքերը և ցանկանում է, որ հայերը հրեաներից զգուշանան այնքան, ինչքան թուրքերից և դա ազգային թշնամանքի հրահրում չի համարում: Եթե խոսքը այս տեսանկյունից ծայրահեղ է հնչել, ապա ցավում է, քանի որ դիտավորություն չի ունեցել մի ամբողջ ազգի վիրավորել: Ինքը հրեա ազգի նկատմամբ լուրջ զգուշավորություն ունի, իսկ մյուս ազգերի նկատմամբ թշնամանք չունի, որովհետև նրանք մեր երկրում և երկրից դուրս մեր ազգի հանդեպ դավադրություններ չեն անում, և այդ պատճառով ինքը թշնամանք ունի միայն թուրքերի և հրեաների հանդեպ: Արմեն Ավետիսյանը նշել է նաև, որ եթե իր արտահայտությունները վիրավորում են հրեա անհատների արժանապատվությունը, ապա թող հրաժարվեն Թալմուդից, ընդունեն իրենց նախնիների մեղքերը, իսկ եթե դա շարունակում է մնալ վիրավորական որոշ հրեաների համար, ապա դա իր խնդիրը չէ: Նշել է նաև, որ քրդերը Մոսկվայում հրապարակվող ռուսալեզու «Դրուժբա» ամսագրի մի համարում տպագրել են քարտեզ՝ «Քուրդիստան» անվանումով, որում ներգրավված են տարածքներ, ինչպես ներկայիս Հայաստանի Հանրապետությունից, այնպես էլ՝ պատմական Հայաստանից, այդ քարտեզը տպագրում են նաև Հայաստանում քրդական հայալեզու «Միջագետք» թերթի էջերում: Այս հանգամանքը ինքը նույնպես վտանգավոր է համարում մեր պետականության և հայ ազգի համար և դրանով ոչ թե թշնամանք է սերմանում քրդերի նկատմամբ, այլ պահանջում է հարգանք մեր ազգի ու պատմության նկատմամբ: Արմեն Ավետիսյանը նշել է նաև, որ ինքը որևէ թշնամանք չի սերմանել հրեա, քուրդ և եզդի համայնքների նկատմամբ:

Ամբաստանյալ Արմեն Վանիկի Ավետիսյանի պատճառաբանությունները, որ ինքը հանցագործություն չի

կատարել, ազգային թշնամանք չի հարուցել, որ իր արտահայտություններն ամբողջությամբ պատմագիտական բանավեճ է, որ ինքը ուղղակի դիտավորություն չի ունեցել, անհիմն են ու նպատակ են հետապնդում խուսափել քրեական պատասխանատվությունից և պատժից, դրանք հերքվեցին, իսկ նրա կողմից կատարված հանցանքը հիմնավորվեց ինչպես իր մասնակի ինքնախոստովանական ցուցմունքներով, որ ընդունում է իր կողմից հրապարակված վերը նշված հոդվածներն ու հարցազրույցները, այնպես էլ դատաքննությամբ ձեռք բերված հետևյալ ապացույցներով։

Վկա, Հայաստանի Հանրապետությունում հրեական համայնքի ղեկավար Ռիմա Պետրոսի Վարժապետյանի դատաքննությամբ հրապարակված ցուցմունքով այն մասին, որ «Հայ-արիական միաբանություն» կուսակցության նախագահ Արմեն Ավետիսյանն, իրեն անհայտ պատճառներով, արդեն շուրջ երկու տարի է, ինչ հրապարակայնորեն, մամուլի և հեռուստատեսության միջոցով, մամուլի ասուլիսներում, հարցազրույցներում և հոդվածներում թշնամանք է հարուցում հրեա ազգի նկատմամբ, նվաստացնում է հրեա ազգի արժանապատվությունը և կոչ է անում հայերին, որպեսզի հրեաներին վտարեն Հայաստանից: Արմեն Ավետիսյանի հակահրեական քարոզչությունը շուրջ երկու տարի է՝ ինչ վախի ու սարսափի մեջ է պահում հրեական համայնքին, հատկապես վախեցած են երիտասարդները, որոնք բազմիցս դիմել են իրեն՝ որպես համայնքի ղեկավարի, որպեսզի ինքը միջոցներ ձեռք առնի Հայաստանում հակահրեական քարոզչությունը դադարեցնելու համար, հակառակ դեպքում նրանք կարող են փախչել Հայաստանից: Իր կողմից բազմիցս դիմումներ են ուղարկվել ՀՀ իշխանություններին, որպեսզի վերջիններս միջոցներ ձեռնարկեն՝ Արմեն Ավետիսյանի անհիմն հակահրեական քարոզչությունը դադարեցնելու ուղղությամբ: Ինքը մտահոգված է, որ Արմեն Ավետիսյանի հակահրեական քարոզչությունը հնարավոր է բացասական ազդեցություն ունենա հայ երիտասարդության վրա, որն էլ դրանից ելնելով աստելությամբ լցվի հրեա ազգի նկատմամբ: Ռիմա Վարժապետյանը նշել է նաև, որ իր կարծիքով Արմեն Ավետիսյանն որևէ պատճառ չունի հայ և հրեա ազգերի միջև թշնամանք հարուցելու համար, իսկ թե ինչու է վերջինս նման քայլի դիմել՝ չի կարող ասել:

Վկա, «Հայաստանի եզդիների ազգային միության» նախագահ Ազիզ Ամարի Թամոյանի ցուցմունքով այն մասին, որ «Առավոտ» օրաթերթի 29.07.2004թ. համարում տպագրված «Որն է Հայաստանի սահմանը» վերնագրով հոդվածում, Արմեն Ավետիսյանը մտքեր է արտահայտել, որ Հայաստանում պետք է բնակվեն միայն հայեր, իսկ ազգային փոքրամասնությունները պետք է հեռանան մեր հայրենիքից, քանի որ Հայաստանի նկատմամբ տարածքային պահանջներ ունեն և վտանգում են հայոց պետականությունը: Այդ հոդվածի կապակցությամբ իրեն՝ որպես «Հայաստանի եզդիների ազգային միության» նախագահի, դիմել են բազմաթիվ եզդիներ և խնդրել են արձագանքել այդ հոդվածին, քանի որ հոդվածի համաձայն եզդիներն իբր այս պետության թշնամին են: Սկզբում ինքը ցանկացել է ելույթ ունենալ այդ հոդվածի դեմ կամ որևէ հոդված տպագրել թերթում, որ եզդիները ոչ թե հայերի թշնամին են, այլ բարեկամները և եզդիները հայերի համար որևէ վտանգ չեն ներկայացնում, սակայն հետագայում որոշել է լռել և այդ հարցին ավելի սրացում չտալ ու ավելորդ չբորբոքել բոլորին եզդիների դեմ: Ինքն այդ հարցով հեռախոսազրույց է ունեցել Արմեն Ավետիսյանի հետ՝ պարզելու համար, թե արդյոք նա է գրել այդ հոդվածը և ինչու է եզդիների դեմ նման հոդված գրել, սակայն Արմեն Ավետիսյանը պատասխանել է, որ նա ոչ թե եզդիների դեմ է հոդվածը գրել, այլ նրանց դեմ, ովքեր խարխուլում են ազգային պետականության հիմքերը: Ինքն էլ համոզվել է, որ ազգի հետ կապված լուրջ վտանգ չկա, այդ իսկ պատճառով անհրաժեշտ չի համարել պատասխանել հոդվածին, հատկապես որ որևէ հետևանք չի առաջացել:

Վկա, «Հայկական ժամանակ» օրաթերթի լրագրող Ավետիս Սուրենի Բաբաջանյանի ցուցմունքով այն մասին, որ ինքը 2003 թվականից մինչ այժմ տպագրել է մի քանի հոդվածներ «Հայ-արիական» կուսակցության նախագահ Արմեն Ավետիսյանի ելույթների, հոդվածների և մամուլի ասուլիսների վերաբերյալ, որոնք վերաբերվել են վերջինիս հակահրեական քարոզչությանը: Իր հիշելով 2003 թվականից սկսվել է Արմեն Ավետիսյանի հակահրեական քարոզչությունը և գաղափարախոսությունը, ինչի մասին ինքը «Հայկական ժամանակ» օրաթերթում տպագրել է մի քանի հոդվածներ, այդ թվում 02.10.2003թ. համարում տպագրված «Վերջ տանք ջիռդամասուններին» վերնագրով և 22.07.2004թ. համարում տպագրված «Ազգայնականները Կարապետովիչի հետ են» վերնագրով հոդվածները: Հոդվածներում ինքը կատարել է մեջբերումներ Արմեն Ավետիսյանի ելույթներից, որոնք ունեցել են մի ուղղություն՝ հակահրեականությունը, որի ընդհանուր միտքը եղել է այն, որ հրեաները վտանգ են ներկայացնում հայ ժողովրդի համար, նրանք են կազմակերպել ցեղասպանությունը և նպատակ ունեն Հայաստանը զավթել, տեղահանել ու ոչնչացնել հայերին: Բաբաջանյանը հայտնեց, որ նախաքննության ընթացքում այլ կարծիք

է ունեցել Արմեն Ավետիսյանի մասին, այդ իսկ պատճառով նշել է, որ նրա էլույթները և հողվածները կրել են հակահրեական ուղղություն՝ հրեաների մասին տարբեր նվաստացուցիչ, արատավորող, վարկաբեկող և ատելություն առաջացնող արտահայտություններով: Այն ժամանակ ինքը լսելով Արմեն Ավետիսյանի էլույթները, հանգել է այն կարծիքին, որ նրա հակահրեական գաղափարախոսությունը թշնամանք է հարուցում հրեա ազգի նկատմամբ և վերջինիս հարցրել է, թե արդյոք չի վախենում, որ նրան կմեղադրեն հակահրեական գործունեություն իրականացնելու համար: Բացի այդ, ինքը նրան բացատրել է հրեաների դեմ ուղղված գործունեության վտանգավորությունը և վնասակարությունը հայ ազգի և պետության համար, սակայն վերջինս շարունակել է մնալ իր դիրքորոշմանը: Այժմ ինքը ծանոթանալով Արմեն Ավետիսյանի գաղափարներին՝ փոխել է իր տեսակետը և գտնում է, որ դրանք թշնամանք առաջացնող չեն և որպես քաղաքական գործիչ նա արտահայտել է իր տեսակետը, թեև ինքը չի կիսում այն: Նշեց, որ Արմեն Ավետիսյանի արտահայտություններն, ըստ իրեն, վերաբերում են հրեական համայնքի այն մասին, որոնք հայ ժողովրդի դեմ գործողություններ են իրականացրել: Արմեն Ավետիսյանն ունի ազգայնական մտածելակերպ, ընդունում է հայ ազգի գերակայությունը մյուս ազգերի նկատմամբ:

Դատարանը գտնում է, որ վկա Ավետիս Բաբաջանյանի նման ցուցմունքները նպատակ են հետապնդում մեղմել Արմեն Ավետիսյանի կատարած հանցանքը:

Վկա, «Առավոտ» օրաթերթի լրագրող Աննա Ստեպկոյի Իսրայելյանի ցուցմունքով այն մասին, որ ինքը 2004թ. մարտի 18-ին Մամուլի Ազգային Ակումբի կողմից հրավիրվել է մասնակցելու մամուլի ասուլիսի, որին մասնակցել է նաև «Հայ-արիական միաբանություն» կուսակցության նախագահ Արմեն Ավետիսյանը: Նշված ասուլիսի ժամանակ Արմեն Ավետիսյանը սովորականի պես հանդես է եկել հակահրեական արտահայտություններով, որոնք իր կողմից հրապարակվել են «Առավոտ» օրաթերթի 2004թ. մարտի 19-ի համարում, իսկ հետո արտատպվել է «Հայ-Արիներ» թերթում: Աննա Իսրայելյանը նշել է նաև, որ ինչպես նշված մամուլի ասուլիսի ժամանակ, այնպես էլ մյուս հրապարակային էլույթներում Արմեն Ավետիսյանը մշտապես հանդես է եկել հակահրեական քարոզչությամբ:

Վկա, «Իրավունք» թերթի լրագրող Փիրուզա Պետրոսի Մելիքսեթյանի ցուցմունքով այն մասին, որ իր նախաձեռնությամբ «Հայ-արիական միաբանություն» կուսակցության նախագահ Արմեն Ավետիսյանի հետ ինքը հարցազրույց է վարել, որը տպագրվել է «Իրավունք» շաբաթաթերթի 2005թ. հունվար ամսի թիվ 2 համարի թերթում: Հարցազրույցի ընթացքում Արմեն Ավետիսյանն ԱՄՆ պետդեպարտամենտի տարեկան զեկույցի վերաբերյալ իր հարցին բառացիորեն պատասխանել է. «Ես ասել ու միանշանակ կրկնում եմ՝ վտանգված է այն երկրի ապագան, ուր կա հրեական համայնք: Նաև կրկնում եմ, Հայաստանից պիտի վտարվեն բոլոր նրանք, ովքեր քանդում են հայոց պետությունը», որն էլ տպագրվել է թերթի նշված համարում:

Վկա, «ԱՐ» հեռուստատեսության «Ճանապարհ» հաղորդաշարի վարող Արծրուն Աղաբեկի Պեպանյանի ցուցմունքով այն մասին, որ ինքն առնվազն երեք անգամ իր հաղորդաշարին է հրավիրել «Հայ-արիական» կուսակցության նախագահ Արմեն Ավետիսյանին, որը միշտ աչքի է ընկել իր հակահրեական և ազգայնական գաղափարներով, ինչը միշտ արտացոլվել է նաև վերջինիս հողվածներում և հեռուստատեսային էլույթներում, որտեղ մշտապես նշել է հրեական վտանգի մասին: Վերջին անգամ ինքն Արմեն Ավետիսյանին հրավիրել է իր հաղորդաշարին 2004թ. սեպտեմբերի 27-ին, սակայն նախապես նրան զգուշացրել է, որպեսզի վերջինս հաղորդման ընթացքում չարտահայտի իր հակահրեական և ազգայնամուլական գաղափարներն ու չանդրադարձնի «ջիդադամաստնական» և «հրեական վտանգի» հարցերին՝ ինչին էլ Արմեն Ավետիսյանը համաձայնել է: Չնայած իր նախազգուշացումներին, Արմեն Ավետիսյանը հաղորդման ընթացքում, էլույթներում հաճախակի անդրադարձել է այդ հարցին և արտահայտել հակահրեական գաղափարներ:

Ամբաստանյալի հանցանքը հիմնավորվել է նաև դատաքննությամբ հետազոտված՝ իրեղեն ապացույց ճանաչված՝ «Հայ-Արիներ» ամսագրի 2004թ. մայիս ամսվա թիվ 9 համարի, «Հայկական ժամանակ» օրաթերթի 02.10.2003թ. և 22.07.2004թ. համարների, «Առավոտ» օրաթերթի 29.07.2004թ. համարի, «Իրավունք» շաբաթաթերթի 2005թ. հունվար ամսի թիվ 2 համարի և «ԱՐ» հեռուստատեսության «Ճանապարհ» հաղորդաշարի 27.09.2004թ. հաղորդման տեսագրության տեսաժապավենի զննության արձանագրությամբ այն մասին, որ «Հայ-Արիներ» Ամսագրի 2004թ. մայիս ամսվա թիվ 9 համարի 53-րդ թերթում տպագրված է. «Մենք բացահայտ հայտարարում ենք, որ ջիդադա-հրեության աշխարհակործան տիրապետությանը կարող է վերջ տալ միայն ԱՐԱՐԶԱԾԻՆ ԱՄԵՆԱՆԱԳՈՒՅՆ ԱԶԳԸ՝ ՀԱՅ ԱԶԳԸ և սա քաջ հայտնի է հուղազուններին, ուստի սրանք հազարամյակներ շարունակ իրենց բնատուր խարդախությամբ դավեր են

նյութում Հայության դեմ», «Մենք ազգովի պետք է անխնա լինենք այդ մտավոր կոմուն և՛ թշնամիների, և՛ դավաճանների հանդեպ, իսկ անհրաժեշտության դեպքում մեր կիրառած պատիժը կարող է լինել նաև մարմնական...»:

«Հայկական ժամանակ» օրաթերթի 02.10.2003թ. համարի 2-րդ էջում տպագրված է «Վերջ տանք ջիոդամաստններին» վերնագրով հոդվածը, որտեղ նշված են Արմեն Ավետիսյանի հետևյալ արտահայտությունները. «Հայոց ցեղասպանության կազմակերպիչները հանդիսանում են սիոնիստները՝ հրեաները: Մեր ցեղասպանության համար պատասխանատու են հրեաները», «Հրեաները ցանկանում են հայերին հեռացնել հայկական լեռնաշխարհից», «Ցանկանում են զավթել հայոց բնօրրանը, տեղահանել և ոչնչացնել բնիկ հայերին և տեղը լցնել ուրիշներով»:

«Հայկական ժամանակ» օրաթերթի 22.07.2004թ. համարի 3-րդ էջում տպագրված է «Ազգայնականները Կարապետովիչի հետ են» վերնագրով հոդվածը, որտեղ նշված են Արմեն Ավետիսյանի հետևյալ արտահայտությունները. «Ամբողջ պատմությունը ցույց է տվել, որ ոչ մի հրեական համայնք, բացի վնասից այդ երկրին այլ բան չի տվել, որ ոչ մի հրեական համայնք, բացի վնասից այդ երկրին այլ բան չի տվել և դա վերաբերում է նաև Հայաստանին», «Բայց անկախ ամեն ինչից, մենք անելու ենք ամեն ինչ՝ չարիքը բնի մեջ խեղդելու համար»:

«Առավոտ» օրաթերթի 29.07.2004թ. համարի 2-րդ էջում տպագրված է «Որն է Հայաստանի սահմանը» վերնագրով հոդվածը, որտեղ նշված են Արմեն Ավետիսյանի հետևյալ արտահայտությունները. «Ազգային փոքրամասնություններին, որոնք իրենց գոյությամբ կվտանգեն հայոց պետականությունը՝ պիտի հեռանան մեր հայրենիքից», «Մենք գիտենք, որ որոշակի միջազգային կառույցներից բողոքներ կան: Հրեական, քրդական, եգիպտական և մնացած համայնքներն են այդ ակցիան ձեռնարկել»:

«Իրավունք» շաբաթաթերթի 2005թ. հունվար ամսի թիվ 2 համարի 4-րդ և 5-րդ էջերում տպագրված է Արմեն Ավետիսյանի հարցազրույցը, որտեղ նշված են Արմեն Ավետիսյանի հետևյալ արտահայտությունները. «Վտանգված է այն երկրի ապագան, ուր կա հրեական համայնք: Նաև կրկնում եմ, Հայաստանից պիտի վտարվեն բոլոր նրանք, ովքեր քանդում են հայոց պետությունը»:

«ԱՐ» հեռուստատվիքի «Ճանապարհ» հաղորդաշարի 27.09.2004թ. հաղորդման տեսագրության մեջ Արմեն Ավետիսյանի կողմից կատարվել են հետևյալ արտահայտությունները՝ «ջիոդներ», «պանթուրքիստական և սիոնիստական», «ջիոդամաստններ»:

Այսպիսով դատարանը գնահատելով դատաքննությամբ հետազոտված ապացույցները՝ գտնում է, որ դրանք բավարար են մեղադրանքը գնահատելու համար և ամբաստանյալ Արմեն Ավետիսյանի հանցանքը հաստատված է համարում ՀՀ քր. օր.-ի 226 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

Ամբաստանյալի նկատմամբ պատիժ սահմանելիս դատարանը հաշվի է առնում ինչպես կատարված արարքի բնույթն ու հասարակական վտանգավորության աստիճանը, այնպես էլ ամբաստանյալի անձնավորությունը, այն, որ նա նախկինում արատավորված չի եղել, ինամքին ունի 3 անչափահաս երեխա, բնութագրվում է դրական, մասնակցել է Արցախյան ազատամարտին, ՀՀ Ազգային ժողովի պատգամավորները դրական բնութագրելով նրա անձը՝ միջնորդել են խափանման միջոց կալանքը փոխարինել մեկ այլ խափանման միջոցով, նույն միջնորդությամբ դատարան է դիմել նաև ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը:

Վերը նշված հանգամանքները հաշվի առնելով՝ դատարանը հանգում է այն հետևության, որ դատապարտյալի ուղղվելը և նրա կողմից նոր հանցանքների կանխումը հնարավոր է առանց պատիժը կրելու, առանց հասարակությունից մեկուսացնելու՝ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու միջոցով:

Դատարանը գտնում է, որ գործով իրեղեն ապացույց ճանաչված թերթերը, հոդվածները և տեսագրման ժապավենը պետք է թողնել քրեական գործին կցված:

Ղեկավարվելով ՀՀ քր.դատ.օր.-ի 357-360 հոդվածներով դատարանը՝ ՎՃՌԵՑ՝

Արմեն Վանիկի Ավետիսյանին ճանաչել մեղավոր ՀՀ քր.օր.-ի 226 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և դատապարտել ազատազրկման 3 (երեք) տարի ժամանակով: ՀՀ քր.օր.-ի 70 հոդվածի կիրառմամբ պատիժը կիրառել պայմանականորեն և սահմանել փորձաշրջան 2 (երկու) տարի ժամանակով:

Խափանման միջոց կալանքը վերացնել և անհապաղ ազատ արձակել դատարանի դահլիճից:

Դատապարտյալի վարքի նկատմամբ վերահսկողությունը պետք է թողնել բնակության վայրի ոստիկանության վրա:

Իրեղեն ապացույց ճանաչված՝ «Հայկական ժամանակ» օրաթերթի 02.10.2003թ.-ի և 26.06.2004թ., «Առավոտ»



29.07.2004թ. և «Իրավունք» շաբաթաթերթի հունվար ամսի թիվ 2 համարի թերթերը և «Ար» հեռուստատեսային «Ճանապարհ» հաղորդաշարի 27.09.2004թ. հաղորդման տեսագրության տեսաժապավենը, «Հայկական ժամանակ» օրաթերթի 22.07.2004թ.-ի համարի թերթում տպագրված «Վերադարձ հին աստվածներին» հոդվածի քսերոպատճենը, «Հայ արիներ» ամսագրի 2004թ.-ի մայիս ամսվա թիվ 9-ը համարի 53-րդ էջում գտնվող «Նույն ուժերը հայահալած քաղաքականություն են տանում ամենուր» վերնագրով հոդվածով քսերոպատճենները, «Ար» հեռուստատեսային «Ճանապարհ» հաղորդաշարի 27.09.2004թ. հաղորդման տեսագրության վերձանումը թողնել կցված քրեական գործին:

Դատավճռի դեմ կարող է բողոք բերվել ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանին 15 օրվա ընթացքում:

Դատավոր՝ Գայանե Կարախանյան

## Օգտակարի դառնությունը

Խորհրդային տարիներին ազգայնականությունը հանցանք էր համարվում և հանցավորության զգացողությունը ավելի խորացնելու նպատակով միտումնավոր նույնացվում էր ազգայնամոլության հետ: Գաղափարական, եզրաբանական խառնաշփոթն այսօր էլ հստակեցված չէ. հավանաբար, էլի միտումնավոր: «Մեծ» ազգերի ազգայնամոլությունը վտանգավոր է թե՛ շրջապատի, թե՛ տվյալ երկրի ազգային փոքրամասնությունների համար: Իսկ փոքրաքանակ ազգերին, առավելապես երբ վտանգված է տեսակի հարատևումը, որպես վտանգ կանխող հոգեբանական գործոն, դառնում է անհրաժեշտ: Փաստ է, որ համապարփակեցման (զլոբալացման) քաղաքականության ոչ ճիշտ ընկալումը և գործադրումը՝ հատկապես կրթամշակութային խորքային փոփոխություններով, վտանգել է հայ նկարագիրը: Մենք ինքնապաշտպանական ազգային համակարգ չենք ձևավորել, և արտաքին քաղաքականության պարտադրանքն անվերապահ ընդունելը, ներքին քաղաքական դաշտ տեղափոխելը վտանգում է հայոց պետականությունը:

Հայկականությունը կոմունիստական համահարթեցումից չի՛ ազատվել, Հայաստանն էլ ազգային գաղափարախոսությունը պետականորեն ընդունելու մակարդակին չի՛ հասել: Հայաստանի քաղաքական դաշտի՝ նախորդ համակարգի մնացորդի և ներկայիս շեղումների գաղափարական խառնաշփոթը գործուն է դարձրել ազգի տակնաքին:

Ազգայնականությունն արժեք է, իսկ ազգայնական-քաղաքական ուժերը Հայաստանի կառավարման ոլորտում՝ հասարակական պահանջ: Մա մեր թշնամիները լավ են հասկացել, մենք՝ ո՛չ այնքան: Մրա ապացույցն է Հայ-Արիական կուսակցության առաջնորդ Արմեն Ավետիսյանի ձերբակալումը՝ կեղծ, նաև անհեթեթ մեղադրանքով: Արմեն Ավետիսյան քաղաքական գործիչը, որ ազգային անվտանգության խորքային հարցադրումներ է անում՝ երևակում անտեսանելի, առաջնայինը, ճշմարիտը և իշխանություններից պահանջում գործնական լուծումներ, շատ է խանգարում նրանց, ովքեր փող շինելուց ձանձրացել, հիմա էլ հերոսի, ազգայնականի, ազգի փրկչի լուսապսակ են տեսնում:

Ասում են՝ «Բոլոր հեղափոխություններն իրականացնում են արժանավորները, արդյունքներին տիրանում՝ անարժանները»:

Ահա այդ անարժաններն են փորձում ասպարեզից հեռացնել ազգային գործչին՝ հայոց հարատևման ապահովող արժեքների համար պայքարի ելած անանձնական մարդուն:

Մի բան է ազգայնականության մասին խոսելը, մի այլ բան՝ ազգայնականության կրող լինելը:

Պատեհապաշտների, սպառողի հոգեբանություն ունեցողների շահն էլ է պահանջում ճանապարհ տալ երկիր կառուցողներին, արարողներին: Օգտակարի դառնությունը ճաշակող անհատներին հալածյալ դարձնելը (հանձին Արմեն Ավետիսյանի) ազգային խայտառակություն է, անպատվություն՝ բոլորիս համար:

Կանգնենք հայոց ազգային պետություն կառուցողների կողքին, սատար լինենք Հայ Ոզին գորացնողներին, որ գաղթական չդառնանք, օտարի լուծը քաշող չլինենք, կարոտախոսով չհիվանդանանք և ազգ կոչվելու իրավունքը պահպանենք:

Նուրիս Բեժանյան  
«Մաշտոց միավորման» նախագահ  
14.02.2005թ.

\* \* \*

Երկիր է, պիտի ունենա նաև իր ձախողումները: Իր ավերումները պիտի ունենա, զի եկել են նրանք, որոնց թելադրված է խեղդել երկիրը՝ իր մտքով, խղճով: Մենք մեր ճանապարհի տերը չենք, որովհետև ուրիշների թելադրանքով է շարժվում մեր երկիրը: Երկիրը պիտի իր բռնավորներն ունենա, իր զոհերը: Պիտի տրորվի հայափրկիչ ամեն միտք: Սպանությունները պիտի շարունակվեն, երկրից պիտի փախչի ժողովուրդը, որովհետև էսպես էլ օրենքի երկիր չի դառնում:

Արմեն Ավետիսյանին հերթական զոհն են դարձնում: Առողջ միտք, խելք, բանականություն, ցավ ունեցող հայ մարդուն ձերբակալել են, որովհետև նա տեղին, մտքի ապաստակ է հասցնում՝ երկիրը ոտքի կոխան դարձրած ապիկար, գող, թալանչի, հինավուրց մեր երկիրը ավերող՝ ուրիշներին նվիրող իշխանավորներին: Հիմա ինչ-որ բան են կպցնում, իբր ազգամիջյան թշնամանք, ժողովուրդն ասում է՝ չոր թրիքը չի կպչում: Բայց էսօրվա իշխանավորները չոր թրիք չէ, ամեն ինչ էլ կծամեն ու կկպցնեն: Սա լուր անհատ մի մարդու կալանավորում չէ: Կալանավորում են միտքը, խիղճը:

Էսօրվա Հայաստանը ղեկավարվում է աշխարհի հզորների թելադրանքով: Դրա համար պիտի ամեն մի հզոր միտք ունեցող, ազգային մտածողություն տեր Արմեն Ավետիսյաններին անաբեկեն, հոշոտեն, սպանեն, որպեսզի ավելի շուտ երկրահոտը վերացնեն Հայաստան երկիր դրախտավայրից:

«Հայ Արիները» պիտի հաղթեն, չարը պիտի կործանվի: Նահապետ Հայկը, մեր նախնիները, Հովհաննես Թումանյանը, Նժդեհը, Եղիշե Չարենցը, Մեր լեզուն մեզ են նայում:

Հայ Ժողովուրդը պետք է շարունակի իր ազնիվ ճանապարհը:

Փրկությունը Հայաստանի փրկության կոմիտե ստեղծելու մեջ եմ տեսնում:

Ազատություն Արմեն Ավետիսյանին և բոլոր ազնիվ, ըմբոստ նժդեհներին:

Հրաչյա Մաթևոսյան  
26.02.2005թ.

## Նամակ ընկերոջս՝ Արմեն Վանիկի Ավետիսյանին

Արմեն ջան, ես քեզ հետ ծանոթացա իմ ավագ ընկերոջ միջոցով՝ Արամ (աշխարհակալի): Եվ երբ խորհում եմ ու ի մի եմ բերում այս կարճ ժամանակահատվածում իմ և քո միջև եղած կարճ և կառուցողական զրույցները, հանգում եմ հետևյալ եզրակացության: Նախ՝ սկսենք քո ազգանունից. Ավետիսյան, արմատը ավետիս, հայրանունդ Վանիկ. արմատը Վան, քո անունը Արմեն. թարգմանաբար՝ հայ:... Եվ ի՞նչ, քեզ կալանել են, որ դու հայ ես և Վանից ես արարվել, և քո տոհմը Ավետիսն է և քեզ հալածում են այն բանի համար, որ դու պայքարում ես հանուն արդարության:

Քո այսօրվա դատավորներին խորհուրդ կտամ կարդալ Մաթևոս 5:10

Երանի նրանց, ովքեր հալածվում են արդարության համար, որովհետև... Սիրելի Արմեն, իմ ապրած տարիները եղել են տառապանքների և հաջողությունների տարիներ, ես շատ արհավիրքներով եմ անցել, սակայն ես միշտ ապավինել եմ մեր արարչին և նրա կամքով ես շարունակում եմ ապրել ու պայքարել հանուն արդարության, անհաշտ պայքար մղել միայն չարի դեմ:

Ես և դու զրուցել ենք մի թեմայի շուրջ, որը համամարդկային արժեք է, և այդ ծրագիրը մենք կիրագործենք երկուսով՝ մեր համախոհների հետ: Բայց և զիտենք մեր ճակատագիրը:

Հայր գերության ոսկե շղթաներ հագած է ծնվում,  
Հայր կարոտի զսպաշապիկներ էն գլխից է հագած,  
Ծնվում է անքուն, կարմիր վրեժի գրահը վրան,  
Ու չի ապրում նա, ծխում է, որպես օջախը հանգած:  
Հայր լռության զսպած շուրթերով վիհից է ծնվում,

Հայր բողոքի ու ցասման ամպեր էն գլխին հավաքած,  
Միրում է անխոս, ապրում է անխոս, մեռնում է անխոս,  
Հայաստան բառի ծանր կնիքով բերանը փակած:  
Հայր դողդուում ու որոտում է հողի մեջ հանկարծ  
Իր սև պատմության հրաբուխների հրեղեն ծոցից,  
Կարծում են վերք է ու արհավիրք է տեսած-չտեսած,  
Հայր հառնում է իր ազատության ծիրանի բոցից:  
18. 11.1989թ.

Յեղի կանչը գրքից, էջ 6, հեղինակ՝ արցախահայ բանաստեղծ Սամվել Եղիազարյան

\*\*\*

«Հերոս մոնչաց, Սուլթան դողդողաց,  
Վիլիելմի աչքից արտասուք ցուլաց,  
Սուրդ թշնամու կրծքին շողշողաց,  
Հայոց դեկավար Հերոս Անդրանիկ»:

Վարք մեծաց Անդրանիկ Զորավար գրքից էջ. 550

\*\*\*

«Փառք աստծո, մենք առողջ ենք, միայն թե դժվար է ապրել, ձախ ձեռքս չեմ կարողանում տիրապետել և ստիպված եմ սուրն ու գրիչը միայն աջ ձեռքով բռնել, իսկ թե ինչքան օգնականներ ունեմ ինքդ գիտես»:

Պետրոս Առաջին էջ 256 «Սուր և գրիչ»

\*\*\*

\*Мой главный враг-лесть

\*Орденами погремушками можно не только легко усладить глаз и слух, но и управлять людьми, Это сказал Наполеон, учреждая новые ордена;

У нас в Италии (это говорю я, дуче) 'орденолюбие' развито еще сильнее.

Если мы начали капать головы пыли, то делать это надо до конца.

Из книги 'Военные Тайны XX века',

'Жизнь и смерть Бенито Муссолини', стр. 27.

\*\*\*

Ես կցանկանայի իմ սիրով գրկել ամբողջ մարդկությանը, տաքացնել նրան, մաքրել կեղտից...

Ֆ.Է.Ձերժինսկի կենսագրություն, գրքից էջ 41:

Արմեն ջան վերջացնում եմ նամակս և համոզված եմ, որ քո դատավարությունը՝ նշանակված մարտի 21-ին, նույնպես խորհրդանշական է՝ հայոց նոր տարվա օրը, համոզված եմ, որ հաղթելու է արդարությունը: Մինչ հանդիպում: Քո կարճ ժամանակվա ծանոթ ընկեր Վանյա Հակոբյան: 09.03.2005թ.

## **Ամն-Ի, Հի Պետական Եվ Ոչ Պետական Իշխանությունները, Հի-Ում Հրեական Պետական Եվ Ոչ Պետական Համայնքները Եվ Արմեն Ավետիսյանը**

### **Հարաբերություններն առաջին գծում**

ԱՄՆ-ում հատկապես ի՞նչը չեն հավանում Արմեն Ավետիսյանի պարագայում: Ընդհանրապես, ամերիկյան քաղաքականությունը չի խրախուսում այն, ինչը բացահայտ կամ ոչ բացահայտ եղանակներով անում են Եվրոպայի առաջատար երկրները՝ Ֆրանսիան, Գերմանիան, Ռուսաստանը, ապա և Իրանը, արաբական երկրները: Երկրագնդի բնակչության որոշ մասը դիմակայում է աշխարհը մի կենտրոնից կառավարելու ԱՄՆ-ի «մարդասիրական» ձգտմանը: Պարզվում է, որ ի վերուստ բազմաձև ստեղծված մարդաշխարհը չի ցանկանում ապրել ինկուբատորային միօրինակությամբ և փորձում է պահպանել իր ազգային կենսաբանական կացութաձևը: Ինքնապահպանման ներքին բնագործով, ԱՄՆ-ի ժողովուրդն էլ է

զգում, որ բնության օրենքների դեմ դուրս գալու դեպքում ինքն էլ անողոքաբար կպատժվի հենց բնության կողմից: Այնպես որ, ԱՄՆ պետդեպարտամենտը, ելնելով իր շահերից, վերանայում է Արմեն Ավետիսյանին ձերբակալելու իր տված «ոչ պաշտոնական որոշումը»:

**Հարաբերությունները երկրորդ գծում**

Թվում է, թե ՀՀ պետական և ոչ պետական իշխանությունները պետք է, որ յուրաքանչյուրն իր շահերին հետամուտ «Արմեն Ավետիսյան» երևույթով ուրախ լինեին: Քիչ էր մնացել իշխանությունների «ամենադեմոկրատական» և մարդու «զերիրավունքների» առաջամարտիկների («հոմոնների») անունները հրապարակվելին և նրանք անկաշկանդ գործունեություն ծավալելու հնարավորություն ստանային, հպարտ, որ իրենց մատնացույց կանեն որպես ազատության դրոշակակիրներ և ջատագովներ:

Իշխանությունների «առաջադեմ» մասն ինչպե՞ս բաց թողեց այդ բարենպաստ առիթը: Արմեն Ավետիսյանը կարող ուժ էր նկատեցնել տալու իրենց՝ որպես համաշխարհային անձանց, որպես ՀՀ

«ուլտրաժողովրդավարական» ձեռքբերում: Այնպես որ սրանց շահերն էլ են պահանջում Արմեն Ավետիսյանին օր առաջ ազատության մեջ տեսնել, ինչպես և պետական մասի, որը կողմնակից չէ ժողովրդի դժգոհություն առաջացնող ևս մի գլխացավանք պատճառից:

### **Հարաբերությունները երրորդ գծում**

Ստացվում է այնպես, որ հայը պատմականորեն հրեային լավ չի ճանաչել: Օրինակ, կարդալով Բիբլիան ( իր երկու մասերով), դժվար թե կռահեր, թե ի վերջո, դրա հեղինակներն ինչին են հետամուտ: Իսկ հրեաների մյուս սուրբ գրքից՝ Թալմուդից, հայն արդեն անտեղյակ է մնացել գրեթե ընդհանրապես: Արմեն Ավետիսյանն իր թերթում պարբերաբար հրատարակում էր հրեաների մասին՝ հայ ընթերցողին ծանոթացնելով նրանց արժեքներին: Ինչ վատ բան կար դրանում, չէ՞ որ լավ չճանաչել մի ամբողջ ազգի, ի վերջո վատ է և՛ չճանաչողի, և՛ չճանաչվողի համար: Իսկ եթե հայը, հանձին հրեայի, տեսնի մեկ ա յլ «հրեայի» (սա՛ հա՛ ստատ), իսկ հրեան, հանձինս հայի, տեսնի ոչ թե խուլ ու համրի, այլ լուրջ մրցակցի՞:

Հրեական համայնքը շտապեց Արմեն Ավետիսյանին մեղադրել «ազգամիջյան թշնամանք սերմանելու մեջ»: Բայց այդ երբվանի՞ց է ազգին ճանաչեցնելը նշանակում նաև թշնամանք սերմանել: Եբրայական աստվածն ինքը՝ Եհովան, քննելով հրեա մարդատեսակի «չար» գործերը, քանիցս «զղջացել է», որ նրանց ստեղծել է, և նույնիսկ բարկության պահերին ասել. «Երկրի երեսիցը կջնջեմ մարդը, որ ստեղծեցի» (Օննդոց, Գլուխ 2, 5-7): Դրանով նա միթե՞ նույն գրքում հիշատակված մեկ այլ մարդատեսակի՝ «աստծո որդիների» և «մահկանացուների» միջև թշնամանք է սերմանում: Անշուշտ՝ ոչ. կշտապի պատասխանել ցանկացած շարքային հրեա, ներառյալ և ՀՀ-ում ապրող հրեական պաշտոնական և ոչ պաշտոնական համայնքի անդամ: Այդ դեպքում նրանք բոլորն էլ պետք է գոհ լինեն Արմեն Ավետիսյանից, որ այնքան խիստ չի արտահայտվում, որքան իրենց աստվածը:

Նույն հող ու ջրում ապրողները պե՞տք է միմյանց լավ ճանաչեն: Անշուշտ, պատմության հետնախորշերում ըստ ամենայնի թրծված հրեան, ապրելով ՀՀ-ում, մյուս կողմից էլ դժգոհ է Արմեն Ավետիսյանից, բայց խոստովանում է, որ ինքը մասնակցություն չի ունեցել նրան ձերբակալելու գործում: Այսինքն՝ զգուշությունը պահպանելով՝ մատնում է, որ ինքն իր ձեռքով «քարը չի գցել հայի բոստանը» և ցանկացած պահի կարող է իրեն կողմ ցույց տալ Արմեն Ավետիսյանի ազատման գործում:

Վերջաբանի փոխարեն կարելի է ենթադրել, որ հիշատակված կողմերն իրենց հարաբերությունները լիովին պարզելուց և, ըստ այդմ, իրենց շահերը հստակեցնելուց հետո միայն ՀՀ իշխանությունների պետական թևին կիջեցնեն կարգադրություն Արմեն Ավետիսյանին ազատելու համար: Նման ելքի դեպքում ազգային ուժերի երևակված և չերևակված կողմերի համար օգտակարության չափանիշն արդեն ներքին հարց է:

Մերգեյ Մանուկյան

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու

### **Կոչ Հ Հ, ԼՂՀ Եվ Սփյուռքի Կազմակերպություններին, Ողջ Հայ Ժողովրդին**

2005թ. հունվարի 24-ին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին աստիճանի դատարանում

կալանավորվել է «Հայաստանի Հայ-Արիական կուսակցություն» քաղաքական կազմակերպության նախագահ, Հայ-Արիական միաբանության առաջնորդ Արմեն Ավետիսյանը՝ «ազգամիջյան թշնամանք հրահրելու» մեղադրանքով:

Ակնհայտ է, որ շրջանցելով իրավական բոլոր նորմերը, փորձ է արվում հաշվեհարդար տեսնել նրա հետ, ով վերջին տարիներին հայտարարել և ահազանգել է Հայաստանի Հանրապետության պետական ու առհասարակ հայոց ազգային անվտանգությանը սպառնացող խնդիրների, այդ թվում՝ ՀՀ իշխանության վերին օղակներում աղանդավորների և արվամուլների աճող ներկայության մասին:

Ակնհայտ է նաև, որ Արմեն Ավետիսյանի կալանավորումը հայ ազգայնական-քաղաքական ուժերի կարողությունների փորձաքար է: Դրան չդիմադրավելը հայությանը կհանգեցնի ծանրագույն հետևանքների:

Քաղաքականության մեջ պատահականություններ չեն լինում:

Ժամն է համախմբվելու:

Եկել է գործելու ժամանակը. միասնաբար՝ ր պահանջենք Արմեն Ավետիսյանի ազատ արձակումը:

Արմեն Ավետիսյանի Ազատության Պաշտպան Հանձնախումբ

## Այգաբացը Հաջորդում Է Խավարին

Արմեն Ավետիսյանի վերջին տասնամյակի քաղաքական ու հասարակական գործունեությունը հոմանիշ է հայոց ազգային արժեքների պաշտպանությանը: Նա անհանդուրժողական դիրքորոշում է դրսևորել սոցիալական, տնտեսական, քաղաքական, դիվանագիտական և կենսագործունեության մյուս ոլորտներում ապազգային ու հակազգային ամեն տեսակի երևույթների դեմ: Այդ պայքարում առանձնահատուկ տեղ են զբաղեցրել հանուն հայոց լեզվի, հայոց հոգևոր մշակույթի մյուս տարրերի, հայոց անկախ պետականության և հայ ընտանիքի պաշտպանության, ազատագրված տարածքների համակողմանի վերահայացման համար պայքարը: Նա անողո՞ք է եղել, և է՛ իր գաղափարական հակառակորդների նկատմամբ՝ հիմնովին մերժելով փոխզիջումների անվան տակ «բազար» անելու առաջարկները: Նա եղա՞վ և մտա՞ւմ է ՀՀ-ում այն սակավաթիվ խիզախներից, որոնք համարձակվեցին հրապարակայնորեն հայտարարել հայոց պետությանն ու հայ ազգին սպառնացող վտանգների բուն աղբյուրը՝ համաշխարհային գաղտնի կառավարությունը՝ ջնուղամասոնական հիդրան: Նա ապացուցեց, որ կրոնական աղանդավորությունը, հայ ընտանիքի ու հասարակության քայքայման ամենատարբեր ծրագրերը (այսպես կոչված «ընտանիքի պլանավորումից» մինչև համասեռամոլությունը), հայ դպրոցի ապազգայնացման գործընթացները, սոցիալական քարտի անվան տակ հայության համարակալումն ու տեղեկությունների հավաքագրումը (դրանք օտարներին նվիրելու հեռահար նպատակով), Արցախն ու կից ազատագրված տարածքները թշնամուն այս կամ այն կերպ վերահանձնելու և նման տեսակի դավերը բխում են այդ միասնական կենտրոնից:

Արմեն Ավետիսյանը խիզախեց բացահայտել հատկապես ներքի՛ն թշնամուն, որը բարձր դիրքեր զբաղեցնելով ՀՀ իշխանական բուրգում, նպաստում է այսպիսի պետականակործան ու ազգադավ ծրագրերի իրականացմանը՝ անցողիկ վայելքների դիմաց: Այս ստահակներն ու մարդկային տականքներն էլ ծրագրեցին ու իրականացրին նրա նկատմամբ հաշվեհարդարի «օպերացիան»:

Արմեն Ավետիսյանն այսօր ավելի, քան երբևէ դարձել է հայ ազգայնականության, հայոց ազգային արժեքների պաշտպանության խորհրդանիշ: Նրան ճանաչում ու հարգում են թե՛ Մայր երկրում եւ թե՛ Սփյուռքում:

Արմեն Ավետիսյանը, Հայ-արիական միաբանությունն ու առհասարակ հայ ազգայնականությունը մեծ խոչընդոտ են հայության ներքին ու արտաքին թշնամիների ծրագրերի իրականացման ճանապարհին: Հետևաբար, բնավ էլ զարմանալի չէ, որ ազգի տականքը և հայի անվան տակ գործող ամենատարբեր գույնի այլանդակները օրերից մի օր պիտի փորձեին մեջտեղից վերացնել այդ արգելքը՝ հեշտացնելու համար հայության հոգևոր ու ֆիզիկական վերջնական կործանումը: Սակայն, ի մեծ ցավ այդպիսիների, հաստատում ենք, որ նրանք թերագնահատել են հայ ազգայնականության ներուժը: Անբարոյական թող չհնչի մեր այն հաստատումը, թե «Արմեն Ավետիսյանի գործը» արջի ծառայություն է իր

պատվիրատուներին: Այս գործը հզոր խթան կհանդիսանա համախմբելու հայ իսկական ազգայնականներին ՀՀ-ում և նրա սահմաններից դուրս: Այդ պատվիրատուներն ու նրանց տեղական կատարածու ոչնչությունները դեռևս չեն գիտակցել, որ Արմեն Ավետիսյանի նկատմամբ քրեական գործ հարուցելով, նրան կալանքի տակ պահելով և նրա հավանական դատավարությամբ լայն և խոր բացում են այն հունը, որտեղ հոսելու են հայ ազգայնականների անջատ-անջատ կաթիլները, առվակներն ու առուները: Նրանք, միավորվելով այդ հունի մեջ և շնորհիվ նժդեհյան գաղափարական հզոր ու անզերազանցելի ներուժին՝ բխած Հայոց Անմահ Ոգու խորքերից, դառնալու են հորձանք, որն իր ճանապարհին քշել-տանելու է հայության առաջ ցցված բնական ու արհեստական բոլոր խոչընդոտները: Հայ ազգայնականությանը նետված այս մարտահրավերը հայ ազգայնականներն ընդունում են և պատրաստվում վճռական մարտ տալու օտարամուտ և հակահայ ծրագրերին ու նրանց տեղական կամակատարներին:

Կա՛մ մենք, կա՛մ նրանք: Գոյակցությունն անհնար է այսուհետև, զիջումն ու անտարբեր ձևանալը՝ հիմնովին բացառված: Ձեռնոցը նետված է, մարտահրավերը՝ ընդունված, պատերազմը՝ հայտարարված: Մեր թշնամիները չգիտեն, որ հայ ազգայնականների համար չկա՛ ավելի մեծ պատիվ, քան հանուն հայրենիքի զոհաբերությունը: Նրանք հասու չեն և չեն էլ կարող լինել նժդեհականությանը, նրա անխորտակելի հավատամքի ուժին: Նրանց «զենքը» նյութն է, մերը՝ անհատթելի Ոգին, Հայ ազգի հավերժական շարժիչ ուժը: Բյուր փա՛ռք բոլոր նրանց, ովքեր կնկնեն Հայոց Ոգու ծառայության ճանապարհին:

Ուրեմն, արհացի՛ր, Մայր Հայաստան, արհացի՛ր իմ փառապանծ Ազգ: Ապացուցի՛ր, որ կարող ես քառասուն կտոր անել նորօրյա Մարմելիքներին: Սրի՛ր քո այսօրվա Թուր Կեծակին եւ մեկ զարկով հատիր Հրեշի գլուխը մեկ անգամ ընդմիջտ եւ հավիտյան:

**Հաղթանակը Մե՛ Րն է:**

Գևորգ Յազըճյան

պատմական գիտությունների թեկնածու

## **Ինչո՞ւ կալանավորվեց Արմեն Ավետիսյանը**

Երբ հունվարի 24-ին կալանավորվեց ՀԱՄ-ի առաջնորդ Արմեն Ավետիսյանը, հնչեցին իրարամերժ մեկնաբանություններ: Ա.Ավետիսյանի կալանավորման իրավական հիմքը համարվեց «ազգային թշնամանքի» հրահրումը (մեր կարծիքով՝ անտեղի և հիմնազուրկ): Մամուլը շտապեց մեկնաբանել, որ Ա.Ավետիսյանը ձերբակալվեց բարձրաստիճան գեյերի շուրջ բարձրացված աղմուկի պատճառով: Հրապարակումներ եղան նաև, որ Ա.Ավետիսյանը ձերբակալվել է համաշխարհային հրեականության ճնշման շնորհիվ և, որպես փաստարկ, նշվեց ԱՄՆ պետդեպարտամենտի գեկույցը: Արմեն Ավետիսյանի կալանավորումը «զարմանալիորեն» համընկավ հոլոքոստի օրվան: Մեր կարծիքով՝ վերոնշյալ բոլոր տեսակետներն առկա են եղել Արմեն Ավետիսյանի կալանավորման պարագայում, սակայն... Արմեն Ավետիսյանի կալանավորումից հետո միայն որոշ ազգայնական կուսակցություններ և հասարակական կազմակերպություններ, կանխազգալով ՀՀ-ի և հայությանը սպասվող ինչ-ինչ տհաճություններ, Արմեն Ավետիսյանի կալանավորումը որակեցին իբրև հարված հայ ազգայնականությանը: Արմեն Ավետիսյանի կալանավորման պարագայում համընկան ազգադավ ՀՀ իշխանությունների և օտարերկրյա նրանց տերերի շահերը: Որպեսզի մեր ասելիքը մերկապարանոց չհնչի, փորձենք հիմնավորել:

Երբ ԱՄՆ պետքարտուղարի օգնական Է. Ջոնսը հայկական ուժերին «հանցագործ անջատողականներ» որակեց, ՀՀ-ում «պատվիրված աղմուկ» բարձրացվեց, իսկ Է. Ջոնսը հայկական նեղմիտ «ազգայնականներ խաղացողների» կողմից «բանադրանքի» ենթարկվեց, իսկ երբ ԱՄՆ-ի պետդեպարտամենտը հրապարակավ ընդգծեց, որ Արցախը չի տեսնում Ադրբեյջանի տարածքային ամբողջականությունից դուրս՝ «ազգայնականություն խաղացողների» փութը իջավ: Զարմանալու և զայրանալու ոչինչ չկա. ԱՄՆ-ի պետդեպարտամենտի պարզաբանումը ՀՀ արտաքին քաղաքականության աշխատանքի ռեալ գնահատականն էր: Իսկ երբ օրերս չուշացավ նաև պաշտպանության նախարարի «հանձնվողական» հարցազրույցը, ապա պարզ դարձավ, որ ՀՀ իշխանությունների կողմից պատրաստված է ծրագիր՝

Արցախը և ազատագրված տարածքները հռչակում են հանձնելու համար: Ինչ խոսք, ինչքան էլ հայ ազգին ինչ-որ թերուսներ և «փողոցից» դուրս շարժվածներ «100-դրամանոց բումեր» անվանեն, մի քանի հազար զոհեր և տասնյակ հազարավոր վիրավորներ տված ազգը չի համակերպվի տարածքների հանձնմանը և տարերայնորեն փողոց դուրս կգա՝ նույնիսկ կազմակերպիչ չունենալու դեպքում: Եվ սկսված շարժումը կծնի իր առաջնորդին, որը պետք է ունենա անբասիր անցյալ, չլինի արատավորված, լինի ազգասեր և աչքի ընկնի ազգանպաստ գործունեությամբ: Մեր կարծիքով, վերոհիշյալ «տեստով» Արմեն Ավետիսյանը կարող էր փայլուն քննություն «հանձնել» և «գերազանց» ստանալ: Ահա թե ինչն է շատ «ընդդիմադիրներ» լռության մատնեցին կամ թաքուն ուրախությամբ ընդունեցին Արմեն Ավետիսյանի կալանավորումը: Մեր կարծիքով՝ վերևում հիշատակված գործունեներից գատ, Արմեն Ավետիսյանին կալանավորելու հարցում վճռական դերը խաղացել է մոտ ժամանակներս սկսվող համազգային շարժումը գլխավորելուց հետո պահելու համար:

Մեկուսացնելով Արմեն Ավետիսյանին՝ արդյոք ՀՀ իշխանությունները կկարողանան՞ կանխել համազգային շարժումը, եթե մոտ ժամանակներում ստիպված լինեն հանձնել ազատագրված տարածքները:

Գագիկ Սահակյան

### **Թե Ինչպես Ենք Կորցնում Մեր Ընկերներին**

*Իր հողի վրա պարտվելը կրկնակի և աններելի պարտություն է:  
ՆՄԴԵՆ*

1988թ. ազգային զարթոնքն ի վերջո հանրապետությանը բերեց իշխանության և կարգավիճակի փոփոխությունների: Այդ փոփոխություններն, ինչպես սովորեն, ուղեկցվեցին քաղաքական նշանակություն ձեռք բերող սպանությունների և «բնական» մահերի շարքով: Անհրաժեշտ փաստերի պակասը լրացնելու դատողությամբ՝ կարելի է վերլուծությունների օգնությամբ գտնել մի շարք մահերի պատճառահետևանքային կապերը և... լռել: Օրինակ ՀՀԾ-ՀԱԲ հակամարտության ժամանակ՝ Գեղազնիկ Միքայելյանի («Չաուչ») և Վիտյա Այվազյանի ՀՀԾ- ՀՅԴ պայքարում Արթուր Մկրտչյանի սպանությունների վերաբերյալ դեռ այն ժամանակներում էլ կային պաշտոնականից տարբեր վարկածներ, որոնց մասին դեռ լուր էն: Սահերի մեկ այլ շարք սկսվեց ՀՀԾ մայրամուտին և խաղաղ իշխանափոխության արշալույսին. Աշոտ Նավասարդյան-Մերգեյ Բաղայան բնական մահերից, ապա Վահրամ Խորխոռունի-Արծրուն Մարգարյան սպանություններից մինչև Աժ դահլիճում հայտնի եղեռնագործություն: Գուցե նույնատիպ մեկ այլ գործընթաց այժմ է սարքվում, բայց մեր խնդիրը «քաղաքական մահերի» շարժառիթների բացահայտում չէ, այլ տեսնել տալը, որ հենց այդպիսի երևույթներին միշտ հաջորդում է արտագաղթի աճ, որն իր հերթին քաղաքական ուղղակի ճնշում է:

